

Հ. ՍՍԼՆՅԱՆ

Փիլիսոփայական գիտ. քննմ.

ՄԱՐԲՍԻԶՄ-ԼԵՆԻՆԻԶՄԸ ԱՆՀՐԱԺԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ¹

Չափազանցություն չի լինի, եթե պնդենք, թե անհրաժեշտության և ազատության հարաբերակցության հարցը մի սֆինքս է եղել, որի մեկնաբանության մեջ զբաղվել են բոլոր ժամանակների դասակարգերի և ուղղությունների մտածողները՝ փիլիսոփաները, սոցիոլոգները, հոգեբանները, կրիմինալիստները, մորալիստները, քաղաքագետներն ու դիվանագետները: Պորբլեմի ըննության մեջ զբաղվել են ոչ միայն Դեմոկրիտոս ու Էպիկուրը, Պլատոնն ու ստոիկները, Դեկարտն ու Սպինոզան, Շեփտսբերին ու Վոլտերը, Լամետրին ու Հոլբախը, Հելվեցիուսն ու Դիդրոն, Կանտը, Հեգելն ու Ֆոյերբախը, Չապալան ու Գերցենը, Բեխտելսկին ու Չերնիշևսկին, Դոբրոլյուբովն ու Պիսարևը, Սեչենովն ու Պավլովը: Անհրաժեշտության և ազատության փոխհարաբերության իդեան հետաքրքրել է արևմտագետներին՝ պոետներին, կոմպոզիտորներին, գրողներին, քննադատներին: Սոֆոկլեսի ու Շեքսպիրի ողբերգություններում, Խայամի ռուբայաթներում ու Սաադիի «Բոստան»-ում, Դիդրոյի «Ժապ-Ֆատալիստ»-ում ու Պոշկինի «Օլեգ»-ում, Լերմոնտովի «Հերոս»-ում ու Լեվ Տոլստոյի պատմափիլիսոփայական խորհրդածություններում, Բեթհովենի ու Չայկովսկու սիմֆոնիաներում և Գեոթեի ու Աբայ Կոնյանբակի պոեզիաներում, — այս բոլորի ստեղծագործություններում մարդու կամքի ազատության կամ նրա պայմանավորվածության այս կամ այն պատկերացումը հանդես է եկել՝ կազմելով դրանց ստեղծագործությունների իդեական կարևոր պրոբլեմներից մեկը կամ ամբողջ ստեղծագործության կանխան:

Ո՞րն է այս պրոբլեմի իդեական-թեորիական բովանդակությունը և հասարակական նշանակությունը, ինչո՞ւ է այդքան մտածողների ու ստեղծագործողների հուզել այդ խնդիրը:

Հարցը հետևյալն է: Անկասկած է, որ մարդու աշխատանքային, հասարակական, անձնական գործունեության էական առանձնահատկություններից մեկը այդ գործունեության ակտիվ, գիտակցված, նպատակային ու պլանաչափ բնույթն է: Ոչ մի պարզագույն ակտ անգամ չի կատարում մարդը, առանց որոշ մտածողության, զգացմունքների, կրամային մոմենտի: Որքան էլ պարզ է այս հանգամանքը, այնուամենայնիվ այստեղից պետք է սկսենք մենք հարցադրումը: Իր անմահ «Կապիտալ»-ում Կարլ Մարքսը բնութագրելով և վերլուծելով նյութական արտադրության պրոցեսը, ձևակերպում է այն դրույթը, որ մարդն արտադրության պրոցեսում ոչ միայն ձևավորում է բնության տված նյութը, ալլել միևնույն ժամանակ իրագործում է իր գիտակից նպատակը, որը որպես օրենք որոշում է նրա գործողությունների եղանակն ու

¹ Այս աշխատությունը հեղինակի նույնանուն ուսումնասիրության մի մասն է: Խմբ.:

բնույթը և որին նա պետք է ենթարկի իր կամքը» (էջ 149, 1923 թ., ռուս. հրատ.):

Նվաճող, մարդու նպատակը, դրանով պայմանավորված գործողությունների եղանակն ու բնույթը և կամքը ուղեկցում են մարդու ամբողջ գործունեության ընթացքին. նպատակադրությունն ու կամքը անպայման զուգակցում են անհատի, դասակարգի, կոլեկտիվի բոլոր պարզ ու բարդ գործողությունները: Այս առաջին փաստն է, որ մենք պետք է հաստատենք: Որոշ պլանաչափ գործողությունների ընդունակությունների կարելի է դիտել նաև կենդանիների մոտ: Բայց այստեղ արմատական տարբերություն կա: Էնգելսը գրում է. «Սակայն բոլոր կենդանիների բոլոր պլանաչափ գործողությունները չեն կարողացել բնության վրա դրոշմել նրանց կամքի կնիքը: Այդ կարողացել է անել միայն մարդը» («Բնության դիալեկտիկա», էջ 142, 1948 թ., ռուս. հրատ.): Կենդանիները միայն օգտվում են բնության նյութերից, ոչնչացնելով դրանք՝ առանց նպատակաձև փոփոխման ենթարկելու, նոր ձև տալու, կամ ուրիշ քանով փոխարկելու Իսկ մարդը ակտիվորեն կերպարանափոխում է բնությունը աշխատանքի գործիքների և միջոցների օգնությամբ, որոնք մարդու կենսատու, ստեղծագործ աշխատանքի բոցով համակված՝ կազմում են հասարակության արտադրողական ուժերը: Արտադրողական ուժերի միջոցով մարդը կերպարանափոխում է բնության նյութը, ճատիպում է նրան ծառայելու իր նպատակներին, իշխում է նրա վրա» (նույն տեղում): Նվ, ըստ էնգելսի բացատրության, որքան ավելի են մարդիկ հեռանում կենդանական աշխարհից, այնքան ավելի է նրանց ներգործությունը բնության վրա դառնում կանխամտածված, պլանաչափ, որոշ նպատակներ հետապնդող ներգործություն: Արտադրական, ինչպես և ամեն մի այլ գործողություն, կատարվում է մարդու ամբողջ ֆիզիկական և հոգևոր ուժերի՝ մտածողության, զգացմունքների, կամքի կոորդինացված գործունեության հետևանքով. այստեղ կա նըպատակի այս կամ այն պատկերացում, հասկացողություն, նրան հասնելու ուղիների և միջոցների տրոշում, որոշ էմոցիաներ և վերջապես ակտիվ ջանք, ձգտում, կամեցողություն — մի խոսքով կամք՝ այդ նպատակին հասնելու և նրա ճանապարհին հանդիպող խոչընդոտները հաղթահարելու ունակություն: Այսպիսով, այդ նպատակադիր ակտիվ ձգտումը, ջանքը, ցանկությունը նըպատակն իրագործելու կամեցողությունն է, որ կոչվում է կամք:

Մյուս կողմից մարդն իր հանդեպ ունի արտաքին նյութական աշխարհն իր բազմազան երևույթներով, առարկաներով, զարգացման որոշ օրենքներով: Օրենքն առարկաների, երևույթների օբեկտիվ, հաստատուն ու անհրաժեշտ կապակցությունն է. այստեղ յուրաքանչյուր պատճառ անհրաժեշտորեն առաջացնում է իր գործողությունը, յուրաքանչյուր գործողություն անհրաժեշտաբար ծնվում է իր պատճառից: Մարդն ինքը այդ օբեկտիվ աշխարհում է ապրում, նրա օրգանական մասն է կազմում, այնտեղից է կորզում իր կյանքի գոյության ու շարունակման համար անհրաժեշտ բարիքներ արտադրելու նյութը և պետք է, որ այդ աշխարհի օրենքների համապատասխան էլ գործի:

Անհրաժեշտության և ազատության պրոբլեմն ահա այն է, թե ինչ հարաբերակցություն գոյություն ունի մարդկային կամքի և արտաքին աշխարհի օրինաչափությունների միջև:

Մարքսիզմ-լենինիզմը շատ կարևոր իմացաբանական և հասարակական

արժեք է տալիս անհրաժեշտության ու ազատության գիտական, մատերիալիստական լուծմանը:

Հարցը այսպես է դրվում: Արդյո՞ք մարդկային կամքը ինքնիշխան է, ավտոնոմ, անկախ է ամբողջ մատերիական աշխարհի՝ բնության, հասարակության, մարդու մարմնի օրեկտիվ օրենքներից, անփոփոխ է, ինչպես պնդում են բոլոր գույնի ու կերպի իդեալիստներն ու մետաֆիզիկները: Թե՛, ընդհակառակը, կամքը, ինչպես գիտակցությունն ամբողջությամբ՝ բացառություն չի կազմում թիեզերական օրինաչափություններից և ենթակա է մատերիական աշխարհի ընդհանուր օրենքներին, ինչպես հաստատում է մատերիալիզմը: Հարցի մարքսիստական լուծումը հատուկ նշանակություն ունի. ի՞նչն է բովանդակություն տալիս մարդկանց կամքին, ձգտմաններին, ջանքերին, ո՞րն է կամքի աղբյուրը, ինչո՞ւ է որոշվում կամքը, ի՞նչ սահմաններում կարող է մարդկային կամքը առաջ մղել կյանքի ընթացքը՝ այս բոլոր հարցերին մարքսիզմ-լենինիզմը տվեց խորը և ճշգրիտ գիտական բացատրություն: Մարքս-լենինյան հարցադրումը և լուծումը միակ ճիշտ գիտական հարցադրումն է և ուղիղ հակադիր է իդեալիստական հարցադրմանը: Իդեալիստները կամքի ազատությունը սահմանելով որպես ինքնուրույն, վերապատմական, անփոփոխ հոգեկան սուբստանցի գործունեություն, որպես անհրաժեշտության բացակայություն՝ հարցի ամբողջ էությունը հանգեցնում են այն բանին, որ մարդկային գործողությունները անկախ են մատերիական պատճառներից, իրենց վերջնական աղբյուրն ունենալով աստվածային նախորոշումը: Իդեալիզմը դուրս է շարտում հարցի բուն գիտական ըմբռնումը, նա մարդկային միտքը հեռացնում է կենսական հարցերից դեպի անառարկա սխոլաստիկայի և միստիկայի մշուշային աշխարհ, զբաղեցնելով միտքն այնպիսի հարցերով, թե ի՞նչ չափով աստվածային նախախնամությունն ու նախորոշումը, ճակատագրի գոյությունը, աստծու բարեբարությունը համարողի են ազատության և չարիքի գոյության հետ: Դժվար չէ հասկանալ, թե որքան ձեռնտու է նման հարցադրումը շահագործողական ռեակցիոն դասակարգերին, որովհետև նա չի շոշափում նրանց տիրապետության հիմքերի հարցը. նա կապիտալիստական հասարակակարգի չարիքների հարցը փոխադրում է կամ անհատի հոգեբանության կամ աստծու մեջ:

Դիտությունը դադարում է գոյություն ունենալուց այնտեղ, որտեղ չկա պատճառական կապակցություն, օրինաչափություն, անհրաժեշտություն, որի հայտաբերումը գիտության խնդիրն է: Պրոգրեսիվ գիտությունը նրա համար էլ հենց կոչված է, որպեսզի բացահայտի և ցույց տա, թե ի՞նչն է կազմում մարդկանց կամքի օրեկտիվ բովանդակությունը, ինչո՞ւ նրանք այսպես կամ այլ կերպ են գործում, ի՞նչ օրենքներով և ի՞նչ ուղղությամբ պիտի գործեն ռեուլցիոն պարտիաներն ու մասսաները: Սրանում է հարցի գիտական և հասարակական արժեքը: Մեր պրոբլեմի բարձր թեորիական և պրակտիկ նշանակությունը պայմանավորվում է նրանով, որ գոյի և գիտակցության հարաբերության փիլիսոփայական հիմնական պրոբլեմի կարևորագույն և օրգանական մասը կազմելով՝ անհրաժեշտության և ազատության հարաբերության հարցը առանձնապես շարկապվում է թեորիայի ու պրակտիկայի այնպիսի կարևորագույն կողմերի հետ, ինչպես իմացաբանություն, էթիկա ու քաղաքականություն, այսպես կոչված սուբեկտիվ ֆակտորի դերի հարցը, պատմության մեջ, քրեական քաղաքականություն և նույնիսկ գեղարվեստա-

կան ստեղծագործութեան ու էսթետիկայի հարցերի հետ: Ուստի և ազատութեան ու անհրաժեշտութեան խնդիրը հատուկ կարևորութիւն ունի այս կամ այն փիլիսոփայական ու սոցիոլոգիական դպրոցը, ուղղութիւնը, դիժը որոշելու համար, այն բանը որոշելու համար, թե ինչպէս են մատերիալիզմի կամ իդեալիզմի՝ երկու լազերների ներկայացուցիչները հասկանում մարդու և հանգամանքների հարաբերութիւնը, ի՞նչ բարոյական ռեցեպտներ են նրանք առաջարկում, ինչո՞ւն են նրանք տեսնում հասարակական գործիչների, դասակարգների, պարտիանների խնդիրն ու կոչումը:

Երկու իդեոլոգիաներ, երկու դժեր են շարունակ պայքարել միմյանց դէմ փիլիսոփայութեան պատմութեան մեջ նաև անհրաժեշտութեան ու ազատութեան հարցում. իդեալիզմը, որը ժխտելով օրեկտիվ օրինաչափութիւնները, հանդես է գալիս որպէս ինդեալիզմի ինքնալիզմ կամ ավելի նեղ՝ վոլյունտարիզմ և մատերիալիզմը, որը ընդունելով օրեկտիվ պատճառականութիւնը, հանդես է դալիս որպէս դեալիզմի ինքնալիզմ: Անհրաժեշտութեան ու ազատութեան հարցում, ինչպէս փիլիսոփայութեան ու գիտութեան բոլոր մյուս հարցերում, այս երկու թշնամի հոսանքներն անհաշտ պայքարի մեջ են եղել՝ արտահայտելով թշնամի դասակարգների ու պարտիանների պայքարը դասակարգային հասարակութեան մեջ: Մատերիալիզմը (դեալիզմի ինքնալիզմը) արտահայտել է պրոգրեսիվ, ռեւոլյուցիոն ուժերի իդեոլոգիան ու շահերը, ծրագրերն ու տակտիկան, լուծելով հարցերը գիտութեան ու պրակտիկ կյանքի համապատասխան: Իդեալիզմը (վոլյունտարիզմը, ինդեալիզմի ինքնալիզմը) արտահայտել է ռեակցիոն դասակարգների ու խմբերի շահերը, ծրագիրն ու գործելակերպը՝ հարցը լուծելով կրոնի ոգով և հակառակ գիտութեան ու ռեւոլյուցիոն պրակտիկայի:

Սակայն մատերիալիզմի տարբեր տիպերը կան:

Նախամարքսյան մատերիալիստները՝ անցյալի պրոգրեսիվ բուրժուազիայի կամ դեմոկրատական խավերի իդեոլոգները, մարտնչելով վոլյունտարիզմի դեմ, մարդկային գիտակցութեան և կամքի ազդեցութիւնը բովանդակութեանը արդարացի կերպով համարել են արտաքին, մատերիական աշխարհը: Ոչինչ չկա գիտակցութեան ու կամքի բովանդակութեան մեջ, — ասել են նրանք, — որ առաջացած չլինի առարկաների, նրանց հատկութիւնների ազդեցութիւնից. կամքը ենթակա է պատճառականութեան ու անհրաժեշտութեան, ինչպէս ամեն ինչ: Գիտակցութեան և նյութի զարգացման օրենքների միասնութիւնն այդ մատերիալիստների աշխարհըմբռնման հիմնական սկզբունքներից մեկն է եղել: Բայց բացահայտել այդ օրենքները, դրանց դիալեկտիկ բնութիւնը հասարակական-պատմական պրակտիկայի անալիզի հիման վրա, բուրժուական մատերիալիստներին չհաջողվեց:

Մինչմարքսյան մատերիալիզմի բարձրագույն աստիճանը, ինքնատիպ ձևը ռուսական կլասիկ մատերիալիզմն է: Մատերիալիստական միտքը Ռուսաստանում սովորաբար դիմում էր իդեալիզմի դեմ, սկսած հանճարեղ Լոմոնոսովից և վերջացած 19-րդ դարի երկրորդ կեսերի փիլիսոփաների ու բնագետների հիպոթեզներով: Գերցենի, Բելինսկու, Չերնիշևսկու, Դոբրոլյուբովի մատերիալիզմն ու ռեւոլյուցիոն դեմոկրատիզմը այդ զարգացման կլասիկ շրջանն է: Ժողովրդական ազատագրական պայքարով պայմանավորված՝ ռուսական կլասիկ մատերիալիզմը իր հրապարակախոսական բնութիւնով, 19-րդ դարի բնագիտութեան նվաճումներով խորացրած, դիալեկտիկական մեթոդով բեղմնավորված առանձնահատկութիւններով, մարտնչել է իդեալիզմի բոլոր ար-

առհասարակությանը դեմ, մասնավորապես՝ ինդեպենդենսիզմի և վոլյունտարիզմի դեմ: Ինչպես այլ հարցերում, այստեղ էլ ռուսական կլասիկ մատերիալիստներն ընդհուպ մոտեցան դիալեկտիկական մատերիալիզմին, բայց կանգ առան պատմական մատերիալիզմի առաջ: Մատերիալիզմի դիրքերից մոտենալով կամքի հարցերին, նրանք վճռաբար մերժում են կամքի ինքնության ռեակցիոն իդեալիստական կոնցեպցիան և ձգտում գիտականորեն հիմնավորել ժողովրդի ռևոլուցիոն ինքնագործունեությունը: Ռուս կլասիկ մատերիալիստները համապարապես թշնամի են ինչպես իդեալիզմին և թեոլոգիային, նույնպես և ֆատալիզմին:

Նախամարքսյան մատերիալիզմին իր մետաֆիզիկականության, հայնցողականության, վերացականության, պատմության իդեալիստական ըմբռնման շնորհիվ չհաղովեց հարցը ամբողջ խորությամբ ու բազմակողմանիության մեջ և բխեցնել այդտեղից բոլոր անհրաժեշտ ռևոլուցիոն պրակտիկ հետևությունները: Այդ և մյուս բոլոր խոշորագույն գիտափիլիսոփայական հարցերը նոր ձևով դրվեցին և խորապես լուծվեցին միայն Մարքսի, Էնգելսի, Լենինի, Ստալինի՝ պրոգրեսիվ և աշխատավոր մարդկության այդ հանճարեղ առաջնորդների՝ գործերում: Միայն դիալեկտիկական և պատմական մատերիալիզմի մեթոդոլոգիայի հիման վրա կարող էր ազատության և անհրաժեշտության պրոբլեմը խորապես լուծվել թեորիայում և պրակտիկայում:

Լենինն ու Ստալինը, գիտության այդ հանճարեղ կորիֆեյները, բոլշևիկների հերոսական պարտիան իր հարուստ պատմության ընթացքում բազմակողմանի ու խորապես զարգացրին մարքսիզմը բոլոր ուղղություններով ու կողմերով: Համկ(բ)Պ-ի հերոսական պատմությունը, որ այնպես գունեղ ու բարձր գիտականությամբ շարադրված է ստալինյան ՃՀամառոտ դասընթացում՝ անգնահատելի հարուստ մատերիալ է տալիս մեզ հետաքրքրող պրոբլեմի դիալեկտիկո-մատերիալիստական ըմբռնումով զինվելու: Այդ պատմությունը ցույց է տալիս, թե ինչպես բոլշևիկները Լենինի և Ստալինի առաջնորդությամբ շարունակ մերկացրել են իդեալիստական, մետաֆիզիկական, վոլյունտարիստական ու դրա հետ միասին ֆատալիստական հայացքները և մոբիլիզացրել պրոլետարիատին՝ ժողովրդական մեծ գործի՝ կոմունիզմի հաղթանակի համար: Այդ պայքարը անհրաժեշտ նախադրյալ է հանդիսացել բոլշևիկյան պարտիայի ամրապնդման և բանվորների ու դուռաչիների ռևոլուցիոն դաստիարակման համար: Պատմական անհրաժեշտության ու նպատակադիր գործունեության, օբեկտիվ օրինաչափության և անհատների, կազմակերպությունների, ռևոլուցիոն դասակարգերի ակտիվության ու այլ հարցերը, որոնց շրջանակներում թաքտում էին իդեալիստներն ու վոլգար օբեկտիվիստները՝ նարոդնիկներն ու էսեռները, մենշևիկներն ու տրոցկիստները, կաուցիկներն ու բուխարինականները և պրոլետարիատի այլ թշնամիները, — այդ բոլոր հարցերը մարքսիզմ-լենինիզմը խորապես լուծեց, հաղթական ռևոլուցիոն վեհ հեռանկարներ լաց անելով մասսաների առաջ:

Ազատության և անհրաժեշտության պրոբլեմի դիալեկտիկո-մատերիալիստական լուծումը մեզ զինում է՝ հասկանալու մասնավորապես հետևյալ կարևորագույն երևույթները.

Նա մեզ բացատրում է, թե ինչ վիթխարի նշանակություն ունի միլիոնավոր սովետական մարդկանց կամքը, երբ այդ կամքը միավորված, կազմակերպված և որոշ նպատակի է ուղղված բոլշևիկների հզոր պարտիայի կող-

միջ. բացատրում է, որ բուլղերիկների ռեպրեզենտացիան ստեղծվել է հանդիսանում գիտելի մեջ այդ ֆակտորը վճռական կոմպոնենտ է հանդիսանում:

Այդ պրոբլեմը մեզ օգնում է ավելի լավ ըմբռնելու մեր պարտիայի ու Սովետական կառավարության քաղաքական, դիվանագիտական, իդեոլոգիական պայքարը միջազգային արենայում՝ ընդդեմ իմպերիալիզմի, հանուն դեմոկրատիայի ու սոցիալիզմի: Հարցի քննարկումը օգնում է մեզ՝ մերկացնելու անգլո-ամերիկյան գիշատիչ իմպերիալիստների իդեոլոգիան, թեորիան, ծրագիրն ու տակտիկան, որոնք ֆալսիֆիկացնում, պղծում են այնպիսի բարձր գաղափարներ, ինչպիսիք են՝ անձի, մամուլի, պրոպագանդի ազատությունը, բողոքարկելով իրենց աշխարհայեցողությունը և արդարացիությունը կապիտալիստական ստրկատիրությունը:

* * *

Այն ամենը, ինչ ասել են մեզ հետաքրքրող հարցի մատերիալիստական լուծման տեսակետից նախամարքսյան մատերիալիստները, մեր պրոբլեմի լուծման սոսկ նախապատմությունն է: Ծիշտ է, պետք է ընդգծել, որ ռուսական կլասիկ մատերիալիստները շատ բեղմնավոր մտքեր առաջադրեցին՝ ընդհուպ մոտենալով դիալեկտիկական մատերիալիզմին. սակայն այնուամենայնիվ հարցի խորագույն, ամբողջական, բազմակողմանի ու հիմնավոր լուծումը հնարավոր եղավ միայն մարքս-լենինյան աշխարհայացքի՝ դիալեկտիկական և պատմական մատերիալիզմի դիրքերից: Մարքսիզմ-լենինիզմի ծագումն արմատական հեղաշրջում էր հասարակական ամբողջ մտքի պատմության մեջ՝ փոխոտոյալության, սոցիոլոգիայի, պատմագրության, մորալի, քաղաքատնտեսության, տակտիկայի և ստրատեգիայի մեջ: Մարքսիզմ-լենինիզմը հասարակության ամենառեպրեզենտատիվ զսպակարգի՝ պրոլետարիատի արմատական շահերի ու խնդիրների թեորիական ու ծրագրային արտահայտությունն է: Ամբողջականությունն ու համեղականությունը դիալեկտիկական մեթոդի և մատերիալիստական թեորիայի միասնությունը, բարձր գիտականությունն ու համեղական ռեպրեզենտականությունը, իդեալական հարստությունն ու պրակտիկ նպատակասլացությունը արմատապես տարբերում են դիալեկտիկական ու պատմական մատերիալիզմը բոլոր մյուս դասակարգերի փոխոտոյալական ու սոցիոլոգիական հայացքներից: Դիալեկտիկական մատերիալիզմը, էնգելսի և Լենինի խոսքերով ասած՝ շատ ավելի մատերիալիստական է, քան բոլոր նախորդ մատերիալիստական իդեաները, միասին վերցրած: Ուստի և միայն այդ դիրքերից կարելի էր գիտականորեն լուծել և ռեպրեզենտացիան պրակտիկային ծառայեցնել ազատության ու անհրաժեշտության փոխհարաբերության պրոբլեմը:

Մարքսիզմ-լենինիզմը հենվելով բնական ու սոցիալական գիտությունների տվյալների վրա, ընդհանրացնելով պրոլետարիատի և ամբողջ աշխատավորության միլիոնավոր մասսաների ռեպրեզենտացիան պրակտիկ փորձը, ոչ միայն հիմնովին հաղթահարեց իդեալիստիկական, վոլյունտարիստական հայացքները, այլև հիմնավորեց նոր, բարձր տիպի դեմոկրատիկիզմը: Մարքսիզմ-լենինիզմը խորապես լուծելով հարցը, մեկին հաղթահարեց այն բոլոր հակասությունները, որոնց մեջ խճճվել էին շահագործողական դասակարգերի իդեոլոգները, իդեալիստական-մետաֆիզիկական մտածելակերպի ներկայա-

ցուցիչները: Մարքսիզմ-լենինիզմը գիտության ոգուն լիովին համապատասխան՝ բացահայտեց ինդետերմինիզմի ամբողջ արգումենտացիայի սնանկությունը, բացահայտեց կամքի բացարձակ ազատության և դրա հետ անխուսափելիորեն կապված հոգու անմահության, աստվածային նախախնամության և այլ ռեակցիոն հայացքները, ցույց տվեց դրանց ծագման պատմական պայմանները, գնոսեոլոգիական ու դասակարգային արմատները, վեր հանեց այդ հայացքների ռեակցիոն հասարակական-քաղաքական իմաստը: Մարքսիզմ-լենինիզմը ներկայացնելով ամբողջական դիալեկտիկո-մատերիալիստական մի կոռ աշխարհայացք, որն իր մեջ ընդգրկում է նաև սոցիալական կյանքի բնագավառը՝ հետևողականորեն կիրառեց գիտության բարձրագույն սկզբունքը — պարտիկլանտոբյան սկզբունքը, լուսաբանելով ու գնահատելով փրկսոփայական ու սոցիոլոգիական ամենախրթին պրոբլեմները ռևոլյուցիոն պրոլետարիատի դիրքերից:

Մարքսիզմ-լենինիզմը ոչ միայն բացահայտեց իդեալիզմի, մասնավորապես ինդետերմինիզմի և վոլյունտարիզմի իդեալական սնանկությունն ու ռեակցիոն դերը. նա ոչ միայն ժխտեց, բացասեց ազատության և անհրաժեշտության պրոբլեմի իդեալիստական մեկնաբանությունները, այլև խորապես ու բազմակողմանի վերլուծեց հարցը, բացատրեց ազատության բուն իմաստը և հանեց այստեղից բխող պրակտիկ բոլոր հետևությունները: Մարքսիստական դետերմինիզմը մարքսիզմ-լենինիզմի իդեալական հարուստ բովանդակության կալուրադույն մասն է կազմում:

Եթե համառոտակի ձևակերպենք այն հեղաշրջումը, որ կատարել է մարքսիզմ-լենինիզմը ազատության ու անհրաժեշտության պրոբլեմի լուծման հարցում, ապա այդ կարելի է հանգեցնել հետևյալին.

1. մարքսիզմ-լենինիզմը բացահայտեց ինդետերմինիզմի, մասնավորապես վոլյունտարիզմի իդեալական սնանկությունը, պատմական պայմանները, սոցիալական ու գնոսեոլոգիական արմատները, նրա ռեակցիոն ծառայական դերը տերտերականությանը և ընդհանրապես շահագործող դասակարգերին.

2. վեր հանեց ազատության և անհրաժեշտության հարաբերակցության դիալեկտիկան՝ հիմնավորելով անհրաժեշտության առաջնությունը, որպես կամքից ու գիտակցությունից անկախ օբեկտիվ օրինաչափության, որը կազմում է կամքի և ազատության բովանդակությունը.

3. հարցը անհատական-հայեցողական պլանից փոխադրեց սոցիալական պլանը, խորապես բացատրելով ազատության մեծ հասկացողության ռեալ բովանդակությունը, իմաստն ու նշանակությունը, որպես միլիոնավոր հասարակ մարդկանց ազատագրություն կապիտալիստական հասարակակարգի ճնշման բոլոր ձևերից՝ տնտեսական, քաղաքական, հոգևոր, դասակարգային. ու ազգային ճնշումներից: Առանց այս բոլորի՝ ազատությունը դատարկ հնչյուն է, ֆորմալ մի աբստրակցիա, որի տակ կարելի է թաքցնել ամեն մի ռեակցիոն արարք.

4. մարքսիզմ-լենինիզմը քննադատելով վոլյունտարիզմը, միաժամանակ ցույց տվեց մասսաներին կազմակերպվելու անհրաժեշտությունը, որպես ուղի դեպի ազատություն: Մարքսիզմ-լենինիզմը ընդարձակեց բուն հարցի շրջանակները, հարցը նոր իմաստով դրեց, հաղթահարելով պրոլետարիատի և բոլշևիզմի թշնամիների ու հակառակորդների ամանտյուրիզմն ու ֆատալիզ-

մը, պատասխիլիզմը, մերժեց ժողովուրդների ռեպրեսիան և ձեռնհրե-
ցութիւնը կաշկանդող ամեն մի հայացք, ծրագիր, տակաւիկա:

5. մարքսիզմ-լենինիզմը բնութիւն և պատմութեան պրոցեսների օրինա-
չափութիւնը բացահայտելով, գիտականորեն հիմնավորեց կոմունիզմի ան-
հրաժեշտութիւնը, որը բխում է պատմութեան օրեկտիւ ընթացքից և որը ա-
զատութեան իսկական իրագործումն է, բառի ամենալիակատար իմաստով:
Կոմունիզմը որպէս սնպատակ, միլիոնավոր պրոլետարների ռեպրեսիան կամքի
ու ինիցիատիւայի մոբիլիզացումը որպէս միջոց, կոմունիզմին հասնելու ճա-
նապարհին հանդիպող բոլոր խոչընդոտների ու դժվարութիւնների համառ
հաղթահարումը որպէս անհրաժեշտ պայման — այս է սովորեցնում մարք-
սիզմ-լենինիզմը:

Այսպիսով, մարքսիստական դեմոկրատիզմն առաջին անգամ իսկապէս
բացատրեց ազատութեան բուն ռեալ բովանդակութիւնը և աշխատավորներին
պրոլետարիատի դիւսալիորութեամբ ցույց տվեց կոմունիզմի, ուրեմն և իսկա-
կան ազատութեան հասնելու ուղիները: Ինչպէս մյուս հարցերում, այստեղ էլ
հանդես եկավ մարքս-լենինյան թեորիայի մոբիլիզացնող, վերափոխող,
կազմակերպող դերը, որը տալիս է ոչ միայն աշխարհը բացատրելու, այլև
այն վերափոխելու սկզբունքները, հանդիսանում է իմացութեան և գործողու-
թեան ուղեցույց: Այսպիսով, ազատութեան ու անհրաժեշտութեան պրոբլեմի
լուծումը մարքսիզմի մեջ հանդիսանալով աշխատավորների ազատագրութեան
իդեալական հզոր զինքը, իր մեջ պարունակում է մեծագույն հումանիստական
բովանդակութիւն:

* * *

Վերջնապիւղիզմը, ամբիւր լայն՝ ինդեմիտիզմը, կամքի բացարձակ սու-
վերենութեան իր գաղափարներով հանդիսանում է իդեալիզմի բազմատեսա-
կութիւններից մեկը և անխուսափելիորեն հանգեցնում է հոգու անմահու-
թեանը, աստվածային նախախնամութեանը: Սկզբունքային նոր բան վերջնա-
տարիզմն իր մեջ չի պարունակում. նա իդեալիզմի տարատեսակութիւններից
մեկն է, որ ծագում է նույն սոցիալական և իմացաբանական արմատներից և
ծառայում է նույն ռեալիզմի քաղաքական հոսանքներին, ինչպէս իդեալիզմն
ամբողջապէս: Տարբերութիւնն այն է միայն, որ վերջնապիւղիստական իդեա-
լիզմի, ինչպէս մի ֆոկլորի մեջ ամբիւր խտացած ձևով է հանդես գալիս ի-
դեալիստական հայացքների անպտուղ ու վնասակար լինելը մարդկանց
պրակտիկ, էթիկական, անձնական ու հասարակական գործունեութեան նկատ-
մամբ: Մեզ զպետք է զարմացնի այն հանգամանքը, որ կան, եղել են և կլի-
նեն իդեալիզմի ամենաբազմազան ձևեր, երանգներ, արտահայտութիւններ,
ձևակերպումներ. չպետք է զարմացնի նաև այն, որ այդ ձևերի մեջ կան տար-
բերութիւններ, տարածայնութիւններ, նույնիսկ պայքար: Դրանք բոլորը սա-
կայն միեւնոյն գծի, միեւնոյն ուղղութեան ներսում եղած տարածայնութիւն-
ներ են. դա ձևի պայքար է, մասնավորութիւնների, իդեալիզմի այս կամ այն
ձևակերպման, քայց ոչ թե սկզբունքների: Իդեալիզմի մի ձևակերպումով ա-
ռարկաները, աշխարհը զգայութիւնների կոմպլեքս է, մյուսի համար՝ աշ-
խարհը մտապատկեր է, երրորդի համար աշխարհը գաղափարների ստեղծա-
գործութիւնն է, մի չորրորդի համար՝ աշխարհը սոցիալական գիտակցութեան
արդիւնքն է, հինգերորդի համար ընդհանրապէս՝ օրեկտիւ հասկացողութեան
կամ օրեկտիւ իդեալի: Սակայն այդ բոլորի հիմքը, իդեալական բովանդակու-

Յյունը մեկ է, մեկ է նրանց գիծը, ուղղությունը, հասարակական-քաղաքական տենդենցը: Քրիստոսը իդեալն է, — գրում է Լենինը, — ունիվերսալ ոգին, համաշխարհային կամքը, հոգեկանի «ընդհանրական ենթարկումը» ֆիզիկականին, — այս միևնույն իդեալն է, միայն տարբեր ձևակերպումներով: Ամեն մարդ գիտե՝ և բնագիտությունը հետազոտում է — իդեալն, ոգին, կամքը, հոգեկանը, որպես նորմալ գործող մարդկային ուղեղի ֆունկցիա. իսկ այդ ֆունկցիան պոկել որոշ ձևով կազմակերպված նյութից, վերածել այդ ֆունկցիան ունիվերսալ, ընդհանրական արատրակցիայի, այդ արատրակցիան «ընդարկել» ֆիզիկական ամբողջ բնության տակ, — սա փիլիսոփայական իդեալիզմի դառանցանքն է, ծաղրանք բնագիտության նկատմամբ» (Լենին, հատոր 14, էջ 302—303):

Մարքսիզմ-լենինիզմը խորապես բացահայտեց իդեալիզմի իմացաբանական և սոցիալական արմատները: Իդեալիզմը, մասնավորապես վոլյունտարիզմը, սկզբնական շեն, նրանք պատմական երևույթներ են, ինչպես մարդկային գիտակցությունն ամբողջությամբ՝ ծագել են մարդու հասարակական և մտավոր զարգացման որոշ աստիճանի վրա, առաջացել են որոշ պատմական պայմաններից: Իդեալիզմի իմացաբանական արմատն այն է, որ մարդիկ պոկում, ուռցնում, արտադրում, աստվածացնում են մարդկային գիտելիքի կորեն զարգացող գիտակցության կողմերից, երանգներից, մոմենտներից մեկը՝ զգայությունը, մտապատկերը, հասկացողությունը կամ կամքը և բացարձակ ոգու, համաշխարհային իդեալի, կամ ուղեղի աստծունվան տակ հայտարարում են ռեալ իրականության հիմքը, արարիչը, մղիչը: «Միևնույն է, — գրում է Լենինը, — թե ինչպես անվանել այդ արատրակցիաները՝ բացարձակ իդեալ», թե ունիվերսալ ծն, համաշխարհային կամք և այլն, և այլն: Սրանով տարբերվում են իդեալիզմի տարածակալությունները, և այդպիսի տարածակալություններ կան անհամար քանակությամբ: Իդեալիզմի էությունն այն է, որ իբրև սկզբնական վերցվում է հոգեկանը. նրանից մակաբերվում է բնությունը և հետո արդեն բնությունից՝ սովորական մարդկային գիտակցությունը» (նույն տեղ, էջ 299): Շարունակելով իր այս միտքը Լենինը տալիս է այդ հարցի հետևյալ հոյակապ բնութագրությունը. «Ուստի և այդ սկզբնականության «հոգեկանը» միշտ էլ դուրս է գալիս մեռյալ արքայից, որը բողբոջում է ջրիկ թեղուկի: Յուրաքանչյուրը գիտե, օրինակ, թե ինչ է մարդկային իդեալն, բայց իդեալն առանց մարդու և մարդուց առաջ, իդեալն արատրակցիայում, բացարձակ իդեալն իդեալիստ Հեգելի թեղուկիական հնարանքն է: Յուրաքանչյուրը գիտե, թե ինչ է մարդկային զգայությունը, բայց զգայությունն առանց մարդու, մարդուց առաջ, տիմարություն է, մեռյալ արատրակցիա» (նույն տեղ): Այսպիսով, իդեալիստը գործունի ոչ թե կենդանի կյանքով ապրող, գործող, նորմալ ուղեղով օժտված մարդու զգայությունների, հասկացողությունների, կամքի հետ, այլ ռեալ արմատներից պոկած, հետևաբար, իր բուն բովանդակությունից զուրկ, միստիֆիկացրած, անուղեղ զգայությունների, մտապատկերների, հասկացողությունների, կամքի հետ: Կրկին անդրադառնալով այս հարցին, Լենինը գրում է. «Ոչ ոքի զգայություն, ոչ ոքի հոգեկան, ոչ ոքի ոգի, ոչ ոքի կամք, — անկուսակալություններ են կազմակերպվում իդեալիստական թեորիան, որի համաձայն մարդու գիտակցությունն արտացոլում է օբեկտիվորեն ռեալ արտաքին աշխարհը» (նույն տեղ, էջ 464):

Այսպես է մարքսիզմ-լենինիզմը բացատրում իդեալիզմի իմացաբանական արմատները: Վոլյունտարիզմը բացառություն չի կազմում և բացատրվում է նույն ձևով. միայն թե այստեղ միատիֆիկացման ենթարկվող մարդու հոգեկան կյանքի աչք կողմն է, որ կոչվում է կամք: Մարքսիզմ-լենինիզմը մերկացրեց իդեալիզմի, մասնավորապես ինդետերմինիզմի ու վոլյունտարիզմի ոչ միայն իմացաբանական արմատները, այլև նրա ծագման պատմական պայմանները, նրա սոցիալական արմատները և դասակարգային ռեակցիոն դերը:

Մարդը և մարդկային հասարակությունը ձևավորվել են աշխատանքի պրոցեսում և նրա հիման վրա: Այդ նույն պրոցեսում էլ ծագել, ձևավորվել ու զարգացել են մարդու ամբողջ գիտակցությունը, նրա բոլոր ընդունակությունները՝ տեխնիկական, գիտական, գեղարվեստական և այլն: Հասարակական այդ զարգացմանը զուգահեռաբար մարդիկ սովորել են ավելի բարդ օպերացիաներ կատարել և իրենց ավելի բարձր նպատակներ առաջադրել: Աշխատանքը սերնդ-սերունդ զարգանալով՝ դարձել է ավելի բազմակողմանի, ավելի կատարելագործված, ավելի բազմաձև: Զարգացել են արտադրության տարրեր բնագավառներ՝ որսորդություն, խաշնարածություն, հողագործություն, արհեստ, նավաշինություն, առևտուր: Արտադրության հողի վրա հրապարակ են եկել դասակարգեր, պետություն, ազգեր, զարգացել է սոցիալական կյանքը, քաղաքականությունն ու իրավունքը և այդ հողի վրա ու դրան գոտարհեա զարգացել են մարդկային հոգևոր ընդունակությունները: Հանդես են եկել հասարակական գիտակցության զանազան ձևերը՝ գիտություն, արվեստ, բարոյական ըմբռնումներ: Ավելի և ավելի է ձևավորվել իրականությունը գիտակցությամբ արտացոլելու երևույթը, արքստրակցիայի ու ընդհանրացման հոգևոր բարձր ընդունակությունները, իսկ դրա հետ միասին նաև՝ իրականության ֆանտաստիկ, սխալ, խեղաթյուրված արտացոլումը մարդկանց գիտակցության մեջ՝ կրոնն ու իդեալիզմը: Եվ որքան ընդլայնվել ու բարդացել է մարդկանց արտադրական ու հասարակական գործունեությունը, այնքան ավելի գիտակից, պլանաչափ ու նախագծված բնույթ է ստացել այդ գործունեությունը: Եվ որովհետև այդ գործունեությունը կարգավորվում, դեկավարվում, պլանավորվում է մտածող ուղեղի շնորհիվ, այստեղից էլ իդեալիստները մտածողությունը (իսկ վոլյունտարիստները՝ կամքը) պոկում են, ուռցնում, աստվածացնում, հայտարարում աշխարհի թագուհին, ինքնուրույն, ինքնիշխան մի սուբստանց: Նման միանգամայն սխալ պատկերացումն ամրապնդվել է ամենից առաջ մտավոր ու ֆիզիկական աշխատանքի բաժանման հետևանքով: Այս հանգամանքը, որը մեծ խթան է տվել կոլտուրայի ու գիտության զարգացմանը, արագացրել է պրակտիկ փորձի թեորիական ընդհանրացման հնարավորությունը, խորացրել է արքստրահիման ու ընդհանրացման պրոցեսը, մյուս կողմից՝ իր դիալեկտիկական ներքին հակասության հետևանքով մտածողությունը ռեալ նյութական պրոցեսից անջատելու հնարավորություն է ստեղծել, հանգեցրել է մարդկանց կողմից իրենց սեփական արքստրակցիաների ու ընդհանրացումների օբեկտիվացմանը և նույնիսկ միատիֆիկացմանը, որը հետագայում ամրապնդվել է ատրկատիրական, ֆեոդալական, կապիտալիստական հասարակության իշխող դասակարգերի շահերի համաձայն և համարյա թե նախապաշարմունքի ուժ է ստացել: Էնգելսը հիանալի բացատրել է իդեալիզմի այդ պատմա-իմացաբանական արմատները:

Բնադրարկություն արագ զարգացման ամբողջ ծառայությունը սկսեցին վերագրել գլխին, ուղեղի զարգացմանն ու գործունեությանը: Մարդիկ ընտելացան իրենց գործողությունները բացատրել իրենց մտածողությամբ, փոխանակ բացատրելու իրենց պահանջմունքներով (որոնք, իհարկե, արտացոլվում են գլխում, գիտակցվում են) և, այսպիսով, ժամանակի ընթացքում ծագել է այն իդեալիստական աշխարհայացքը, որը իշխել է մարդկանց մտքերի վրա, մանավանդ անտիկ հասարակության կործանումից հետո» (Ֆ. Էնգելս, Բնույթի մասին, էջ 141, 1948 թ., ռուս. հրատ.):

Դասակարգային հասարակության մեջ իդեալիզմն ու կրոնը պահպանվում են ռեակցիոն շահագործող դասակարգերի գոյության շնորհիվ, ամրապնդվում են նրանց շահերով:

Դեմոկրատիզմի և ինդեմոկրատիզմի պայքարում հատուկ սրությամբ է հանդես եկել թեոկրատիկ հայացքների պարտիականությունը: Եվ դա ակնհայտ է. այստեղ անմիջականորեն է հանդես գալիս փիլիսոփայական հայացքների կապը պրակտիկ գործողությունների ու պրակտիկ պահանջների, դասակարգային շահերի ու տենդենցների հետ: Դեմոկրատիզմն ու ինդեմոկրատիզմը ծառայում են հակադիր քաղաքական դժբերի, տակտիկական, ծրագրային սկզբունքների, պրակտիկ գործունեության: Ինչպիսի դաժանություն և ավանտյուրիզմ ասես, որ չի քողարկվել կամքի ազատության տեսակետի միջոցով, իշխանության ու կապիտալի տեր մարդկանց կամքի ամենազորության, աստվածային նախախնամության, ճակատագրական դերի և այլ միստիկական հայացքների օգնությամբ: Վոլյունտարիստական ու թեոկրատիկան իդեաների օգնությամբ արդարացրել են ստրուկների դաժան ճնշումը, միջնադարյան ինկվիզիտորությունը, ֆանատիկական շարժումներն ու կոտորածները, իմպերիալիստական զավթումները, պատերազմներն ու ավանտյուրաները: Վոլյունտարիզմից հանգելով թեոկրատիկական ֆատալիզմի՝ ռեակցիոն դասակարգներն ու գործիչները ձգտել են հիմնավորել իրենց հակաօրոգական քաղաքականությունը՝ ճնշել են աշխատավորների ձգտումները, նրանց զկամքը դեպի կյանքը», «իշխանության հասնելու կամքը», քարոզել են նրանց համար հեղուկուն ու խոնարհություն, ձգտել են ֆատալիստական պասսիվության մատնել պրոլետարիատին և նրա պարտիային: Հասկանալի է, թե ինչու այսօր վոլյունտարիստական իդեալիզմով և ֆատալիզմով տոգորված է իմպերիալիստական ամբողջ իդեոլոգիան՝ ծառայելով անգլո-ամերիկյան ռեակցիային:

* * *

Ինչպես ասված է, մարքսիզմ-լենինիզմը ոչ միայն բազմակողմանի ու կործանիչ քննադատության ենթարկեց ինդեմոկրատիզմը, վոլյունտարիզմը, այլև խորապես ու դրականորեն լուծեց ազատության և անհրաժեշտության իրական հարաբերակցության պրոբլեմը, գիտականորեն բացատրեց անհրաժեշտությունը, վեր հանեց ազատություն կոչված կատեգորիայի բուն էությունն ու ռեալ բովանդակությունը:

Հարցի լուծումը դիալեկտիկական ու պատմական մատերիալիզմի տեսակետից առանձին դժվարություն չի ներկայացնում: Մարդկային կամքի հարաբերությունը դեպի ռեալ իրականությունը, արտաքին աշխարհի օրենքները նույնն է, ինչ ամբողջ գիտակցության հարաբերությունը. ինչպես են հարաբերվում մեզ շրջապատող առարկաներին նրանց մասին ունեցած մեր

զգայութիւնները, մտապատկերներն ու հասկացողութիւններն: Այս հարցը մարքսիզմ-լենինիզմը լուծում է դիալեկտիկո-մատերիալիստական մեր աշխարհայացքի նախադրյալների հիման վրա: Նույնը և կամքի մասին պետք է ասել: Ինչպես են հարաբերվում մեզ շրջապատող իրականութեանը մեր ձգտումները, ցանկութիւնները, կամեցողութիւնը, ակտիվութիւնը, մի խոսքով՝ մեր կամքը — այս հարցը նույնպես լուծվում է դիալեկտիկական մատերիալիզմի գնոսեոլոգիայի և պատմական մատերիալիզմի թեորիայի հիմքի վրա: Մեր գիտակցութիւնը արտաքին աշխարհի արդյունքը, հատկութիւնը, նրա արտացոլումն է՝ զգայութիւնների, մտապատկերների, հասկացողութիւնների ձևով: Բայց գիտակցութիւնը աշխարհի պրիմիտիվ, գոհիկ, պատասիվ, հայելակերպ արտացոլումը չէ. նա համեմատութիւնների, արտարահումների, ընդհանրացումների պրոցես է, որի ընթացքում մենք ոչ միայն ճանաչում ենք կյանքն ու նրա օրինաչափութիւնները, այլև կողմնորոշվում ենք նրա բարդ պրոցեսներում, ակտիվորեն վերափոխում այն: Նույնն է նաև մեր կամքի հարաբերութիւնը դեպի իրականութիւնը, այն տարբերութեամբ, որ հենց կամքի վեջ է նախ և առաջ երևան գալիս մեր հոգեկան կյանքի ակտիվութիւնը, իրականութիւնը վերափոխելու, նպատակին հասնելու, խոչընդոտները հաղթահարելու մեր ընդունակութիւնը:

Կամքի ազատութիւնն այն ձևով, ինչպես իդեալիստներն են հասկանում, այսինքն՝ որպես սուվերեն, անսխիտիս, նյութական օրենքներից անկախ հոգեկան էութիւն, հոգու արտահայտութիւն՝ չկա և ոչ մի տեղ գոյութիւն չի ունեցել: Կամքի ազատութեան թեորիան տխամար հեքիաթ է, գրեթէ Լենինը դեռ 1894 թվականին: Երբեք և ոչ մի տեղ չկա և չի եղել մարդկային կամքի անսահմանափակ, բացարձակ ազատութիւն, իրականութեան նկատմամբ այսպես կոչված հոգու կամայական որոշում, ազատ ընտրութիւն: Ամբողջ մարդկութեան պատմութեան մեջ, բոլոր ժամանակներում, պատմական զարգացման յուրաքանչյուր աստիճանում մարդկային գիտակցութիւնը և կամքը միշտ որոշ բովանդակութիւն, աղբյուր է ունեցել, գործել է որոշ օրենքով հանգամանքներում, պայմանավորվել է նրանցով: Եվ, ընդգծենք, այս վերաբերում է ոչ միայն առանձին անհատների ու գործիչների կամքին, այլև մարդկանց մեծ խմբերին, դատակարգերին, պարտիաներին ու կառավարութիւններին: Նրանց կամքը՝ ձգտումը, ցանկութիւնը, կամեցողութիւնը միշտ ծագում է որոշ օրենքով դրդապատճառից, առարկայական աղբյուրից, զարգանում է որոշ ուղղութեամբ և իրագործվում որոշ միջոցներով: Մարքսիզմ-լենինիզմը սովորեցնում է, որ անառարկա նպատակներ, ցանկութիւններ, կամեցողութիւններ, «մաքուր», բացարձակ կամք, կամք որպես այդպիսին, իբրև ինքնուրույն սուբստանց, հետևաբար՝ բացարձակ անկախ ու ազատ՝ երբեք և ոչ մի տեղ գոյութիւն չի ունեցել և չի կարող ունենալ: Կամքը միշտ ունի կոնկրետ առարկայական կամ պատմական բովանդակութիւն, ճիշտ այնպես, ինչպես «մաքուր», բացարձակ միտք որպես այդպիսին, անառարկա միտք, որը չլինի միտք ոչ մի բանի մասին՝ գոյութիւն չունի: «Ջուտ» կամքը, «զուտ» միտքը, ինչպես ասված է, մեռյալ արտարակցիա է, վոլյունտարիստների կողմից որոշ կամքի, որոշ մտքի արքունատացումը, միատիֆիկացիան, որը համաշխարհային կամքի, բացարձակ ոգու, վերջին հաշիւով ասածու անվան տակ հրամցնում են մեզ իդեալիստները: Թե ինչ իմացաբանական հնարավորութիւններից է ծագում, ինչ հասարակական դասակարգա-

յին հարաբերությունների հողի վրա է առաջանում այդ միաստիճիկացումը— այդ մասին համառոտակի մինք ասացինք նախորդ էջերում և դեռ անդրադառնալու ենք դրան:

Այստեղ մենք գուշակում ենք մի առարկություն և պատրաստ ենք քննարկելու այն: Չէ՞ որ, — կհարցնի մեզ քննամիտ ընթերցողը, — մարդկային գործունեության առանձնահատկությունն այն է, որ նա ունի ակտիվ-գիտակից, պլանաչափ-կամային բնույթ: Հետևաբար, արդյոք այդ կամքն ու գիտակցությունը չեն, որ որոշում են մարդկային գործունեության սկիզբն ու վերջը, նախադրյալներն ու արդյունքները: Մարքսիզմ-լենինիզմը չի ժխտում մարդկային գործունեության այդ առանձնահատկությունը, ընդհակառակը, այդ հանգամանքի մատնանշումով էլ հենց մենք սկսեցինք մեր հոգվածքը: Այդ հանգամանքի անտեսումը մարքսիզմ չէ, այլ նրա գոհակացումը, որի դեմ ռևոլուցիոն մարքսիզմը անհաշտ պայքար է մղել: Մենք թշնամի ենք ոչ միայն իդեալիստական միաստիկային, այլև գոհհիկ մատերիալիզմին, որը պատրաստ է այլանդակելու մարդկային իմացության ու գործունեության ամենաբարդ հարցերը: Մակայն մեր շարադրության տվյալ էտապում մեզ հետաքրքրում է ոչ թե հարցի այդ կողմը, ոչ թե մարդկային կամքի ու ցանկությունների ակտիվ դերի հարցը, նրա ճշգնակությունը մարդու թեորիական և պրակտիկ գործունեության մեջ, այլ այդ կամքի աղբյուրների, ծագման, բովանդակության հարցը:

Անկասկած է, որ այն ամենը, ինչ կատարում է մարդը, սկսած հազնվելու, սնվելու, առարկաների մեջ կողմնորոշվելու պարզագույն ակտերից և վերջացած հասարակական բարդ գործողություններով՝ աշխատանքի պրոցեսով, գիտական հետազոտությամբ, քաղաքական ելույթներով, հերոսություններով — կատարում է անպայման որոշ իդեական շարժառիթների՝ զգացմունքների, կրքերի, խորհրդածությունների, կամքի դրդումով: Էնգելսը հիանալի կերպով բնութագրել է այս երևույթը. «Այն ամենը, ինչ մարդուն գործունեության է դրդում, պետք է անցնի նրա գլխի միջով... Արտաքին աշխարհի ներգործությունները մարդու վրա ապավորվում են նրա գլխում, արտացոլվում այնտեղ, զգացումների, մտքերի, շարժառիթների, կամքի արտահայտության, մի խոսքով՝ «իդեալական ձգտումների» ձևով, և այդ ձևով նրանք իդեալական ուժեր են» (Մարքս և Էնգելս, Ընտիր երկհատորյակ, հատոր 2-րդ, էջ 357. 1948 թ., ռուս. հրատ.): Ավելին. մարքսիզմ-լենինիզմի կրասիկները բազմաքանակ օրինակներ են տալիս մարդու գործունեության այդ հոգեբանական կողմերի՝ գաղափարների, զգացմունքների, կամքի փոխհարաբերության, կապակցության, փոխադարձ ազդեցության անալիզի ուղղությամբ: Մարքսի, Էնգելսի, Լենինի, Ստալինի դրոծերում նրբագույն ձևով վերլուծված է մարդու հոգեկան կյանքի տարբեր կողմերից յուրաքանչյուրի կապը մյուսի հետ և յուրաքանչյուրի նշանակությունը: Բերենք Էնգելսի մի դատողություն այդ կապակցությամբ. «Կամքը որոշվում է կրքերով կամ խորհրդածությամբ: Բայց այն լծակները, որոնցով իրենց հերթին անմիջականորեն որոշվում են կիրքը կամ խորհրդածությունը, ամենաարդեն բնույթի լծակներ են» (նույն տեղ, էջ 372): Այստեղ երկու հարց կա. 1) կամքը պայմանավորվում է կրքերով և խորհրդածությամբ. 2) այս վերջիններս իրենց հերթին պայմանավորվում են ավելի ռեալ, նրանցից դուրս գտնված բազմապիսի հանգամանքներով: Մենք խոսում ենք առայժմ առաջին կետի մասին:

Ուրեմն կամքը պայմանավորվում է մտածողությամբ կամ զգացմունքներով, կամ միաժամանակ թե՛ մեկով. և թե՛ մյուսով: Ամբողջական մարդու մոտ, իհարկե, այդ երեք կողմերը օրգանական միասնությամբ են հանդես գալիս: Ամենից առաջ փայլուն կերպով այդ հանդես է գալիս պրոլետարիատի ունեցիկ գործիչների մոտ: Բոլշևիկների միտքը, զգացմունքը, կամքը մի հոյակապ միասնություն են կազմում: Լենինը հատուկ կերպով ընդգծում է զգացմունքների նշանակությունն ու ազդեցությունը գիտական հետազոտության և կամքի վրա: Այս մասին նա փոստում է Ռուսակինի «Դրժների աշխարհում» գրքի առթիվ գրած իր գրախոսականում: Կասկած չկա, որ կամքն իր հերթին հսկայական ազդեցություն ունի մարդու զգացմունքների և մտածողության վրա: Սակայն այս հարցերի անալիզը, որքան էլ դրանք հետաքրքիր են գիտական և պրակտիկ տեսակետից, հոգեբանությանն են վերաբերում, և մեր տվյալ հոդվածի առարկան չեն կազմում. մեզ այստեղ հետաքրքրում է հարցի այսպես ասած իմացաբանական և հասարակական կողմը: Մեր առաջ է մարդու գիտակցությունն ու կամքը մի կողմից, օրեկտիվ աշխարհը և նրա զարգացման օրինաչափ, անհրաժեշտ բնույթը մյուս կողմից: Հարցն այն է, թե ինչպես է հարաբերվում մեր կամքը և ընդհանրապես գիտակցությունը օրեկտիվ աշխարհին, նրա ձևերի զարգացման անհրաժեշտ, պատճառաբանված բնույթին. ինչպե՛ս է կամքը կապված այդ աշխարհի ճանաչման պրոցեսի հետ, ի՞նչն է կամքին ուղղություն տալիս, ինչպե՛ս է ծագում և զարգանում այսպես կոչված կամքի ազատությունը և ինչո՞ւմ է նրա ունի ու նշանակությունը:

Եթե կամքը մերձավորապես կապված է զգացմունքների ու բանականության հետ, ապա ինչո՞ւ են պայմանավորվում վերջին հաշվով այս վերջիններս, հետևաբար և կամքը: Մարքսիզմ-լենինիզմը պատասխանում է. թե՛ զգացմունքները, թե՛ մտածողությունը և թե՛ կամքը երկրորդային են. օրեկտիվ աշխարհը, նրա զարգացման անհրաժեշտ բնույթը՝ առաջնայինը: Կամքի բուն բովանդակությունը, նրա ռեալ հիմքն ու աղբյուրը պետք է որոնել ոչ թե իդեալական շարժառիթների մեջ, այլ դրանցից դուրս, օրեկտիվ, մատերիական աշխարհի, առարկայական ձևերի ու օրինաչափությունների մեջ, մարդու մարմնի մեջ կատարվող օրինաչափությունների և մարդուն շրջապատող պայմանների ու հանգամանքների մեջ: Բնությունն իր առարկաներով ու ձևերով, այդ ձևերի անհրաժեշտ, օրինաչափ կապակցությունները տրված են մարդուն նրանից դուրս, նրա կամքից ու գիտակցությունից անկախ և առաջ: Անհրաժեշտությունն առաջնայինն է, կամքն ու գիտակցությունը երկրորդային: Մարդը հանդես է եկել բնության դիալեկտիկ զարգացման որոշ աստիճանի վրա, որպես մատերիայի հատուկ ձև և մաս, ճիշտ է՝ որպես բարձրագույն ձև: Գիտակցությունը և կամքը այդ բարձրագույն ձևի սպեցիֆիկ առանձնահատկությունն է:

Սակայն մարդը բնության սոսկ արգասիքն ու մասը չէ, այլ — Մարքսի խոսքերով ասած — բնության ուժն է, որն իր գործունեությամբ կերպարանափոխում է բնությունը և դրանով իսկ կերպարանափոխում իրեն, փոխում է իր սեփական բնությունը: Իր արտադրական գործունեությամբ մարդն ստեղծել է առարկայական մի նոր հարուստ աշխարհ, նյութական ու հոգևոր կոլպտուրա, իր անջնջելի կնիքը դնելով բնության վրա: Եթե անհետանա մարդը, ապա բնությունը կդառնա որոշ իմաստով գորշ և զգալի չտիով աղքատ: Մար-

գույն արտադրական գործունեության մեջ դրսևորվում է բնության ու մարդու, օբեկտի ու սուբեկտի դիալեկտիկորեն զարգացող միասնությունը: Միանգամայն ակնհայտ է, որ իր ակտիվ գործունեությամբ մարդը փոխում է բնությանը ոչ թե հակառակ նրա օրենքների, ոչ թե խախտելով անհրաժեշտությունը: Բնության օրենքները երբեք չեն կարող խախտվել, — ասում է Մարքսը, — նրանք կարող են փոխել միայն իրենց արտահայտման ձևը. այնտեղ թագավորում է խիստ անհրաժեշտությունը: Հետևաբար, եթե ճիշտ է այն թեզը, թե այն ամենը, ինչ շարժման ու գործողության է դրդում՝ մարդուն՝ անցնում է նրա գիտակցության միջով և այնտեղ ընդունում զգացմունքների, մտքերի, կամքի ձև — այսպես կոչված իդեալական (ըստ էնգելսի արտահայտության) շարժառիթի ձև, ապա է՛լ ավելի ճիշտ է մարքսիզմ-լենինիզմի մյուս թեզը, այն, որ գաղափարական և կամային մոտիվները երկրորդային են, ածանցյալ, որովհետև, նախ՝ նրանք ծագում են օբեկտիվ առարկաների, նրանց հատկությունների, նրանց օրինաչափ կապակցությունների ազդեցությունից. երկրորդ, ինչ ձև որ ստանում են այդ շարժառիթները մարդկանց գլուխներում, շատ բանով կախում ունեն այն մատերիական սոցիալականից — ուղեղից և ներվային սխտանից, որոնց միջոցով իրագործվում է գիտակցական ակտը, և է՛լ ավելի կախում ունեն այն կոնկրետ պատմական, տնտեսական և այլ հանգամանքներից, որոնց մեջ ապրում, գործում, պայքարում են անհատները, պարտիաները, դասակարգերը: Էնգելսը այս հարցի կապակցությամբ գրել է. «Այն ամենը, ինչ շարժման է դրդում մարդկանց, անխուսափելիորեն պետք է անցնի նրանց գլխով. սակայն ինչ ձև կընդունի նա այդ գլխում — շատ մեծ չափով կախված է հանգամանքներից» ((Նույն տեղ, էջ 373): Հետևաբար ամբողջ խնդիրը այդ հանգամանքների, նրանց օբեկտիվ ընթացքի, նրանց անհրաժեշտ զարգացման մեջ է, որի ուսումնասիրությամբ միայն կարող ենք մենք որևէ զգալի ներգործություն թողնել այդ ընթացքի վրա, առաջ տանել պրոցեսը դեպի պրոգրեսը:

Ուրեմն, մարդու վերափոխիչ գործունեությունը տեղի է ունենում ոչ թե հակառակ օբեկտիվ անհրաժեշտության, այսինքն՝ բնության օրենքների, այլ դրանց լիովին համապատասխան: Հիշենք մեր հոգիածի սկզբում Մարքսից արած մեջբերումը. Մարքսը գրում է, թե արտադրության ընթացքում մարդը ձևափոխում է բնության նյութը և դրա հետ միասին իրագործում իր գիտակից նպատակը, որը որոշում է նրա գործողությունների եղանակն ու բնույթը և որին նա պետք է ենթարկի իր կամքը: Այստեղ Մարքսը ընդգծում է գիտակցական կամքի դերը արտադրության ընթացքում: Սակայն ի՞նչպես կարող է իրագործվել առարկաների մեջ այդ գիտակցական կամքը, եթե ոչ՝ ենթարկվելով այդ առարկաների օբեկտիվ օրենքներին ու հատկություններին: Միայն հաշվի առնելով առարկայական աշխարհի օբեկտիվ օրինաչափությունը, մարդը կարող է այդ օրինաչափության բեռվրի համապատասխան ներգործել նրա վրա: Այս բացատրությունը պետք է ամրապնդել Մարքսի նույն «Կապիտալ»-ից վերցրած հետևյալ մտքով. մարդն «օգտվում է մարմինների մեխանիկական, ֆիզիկական, քիմիական հատկություններից, որպեսզի իր նպատակի համաձայն ստիպի դրանց, որպես ուժերի՝ ներգործելու մյուս մարմինների վրա» (Մարքս, «Կապիտալ», հատոր 1-ին, էջ 150):

Զարգացնելով Մարքսի այս մտքերը, Լենինը գիտական նոր դրույթներով ստեղծագործաբար առաջ է շարժել մարքսիզմը նաև այս գծով: Իր «Փիլիսո-

փաթեկան տեսարակները—ում լինինը հետևյալ կերպ է հիմնավորում կամքի և ընդհանրապես նպատակաձև գործունեության կախումը անհրաժեշտություններից. «Արտաքին աշխարհի օրենքները... մարդու նպատակաձև գործունեության հիմքերն են: Մարդը իր պրակտիկ գործունեության մեջ իր առջև ունի օբեկտիվ աշխարհը, կախում ունի նրանից, նրանով է որոշում իր գործունեությունը» (էջ 161, 1947 թ., ռուս. հրատ.): Այս կապակցությամբ լինինը մի շարք խորագույն սկզբունքներ է առաջադրում որպես մատերիալիստական դիալեկտիկայի կարևորագույն սկզբունքներ: Լինինը քննադատելով և հաղթահարելով Հեգելին, իր դիտողություններում ընդգծում է անհրաժեշտության ու ազատության պրոբլեմի հսկայական նշանակությունը մատերիալիստական դիալեկտիկայի համար: Մի ուրիշ տեղ լինինը ընդգծում է. «Ժրականում մարդու նպատակները ծագում են օբեկտիվ աշխարհից և ենթադրում, գտնում են այն, որպես առկա տրված բան: Սակայն մարդուն թվում է, թե իր նպատակները աշխարհից դուրս են վերցրած, աշխարհից անկախ են («ազատություն»)» (էջ 162—163):

Այսպիսով, արտաքին աշխարհի առարկաների վրա ազդելուց և այդ ուղղությամբ հաջողություններ ունենալուց առաջ, մարդը գտնում է այդ առարկաները, սովորում ճանաչել նրանց հատկությունները, հաշվի նստում օբեկտիվ պատճառի ու հետևանքի անհրաժեշտության հետ և ազդելով՝ իրեն ենթարկում այն: Այստեղ տեսնում ենք անհրաժեշտության և ազատության դիալեկտիկայի բուն բանալին. ազատությունը արտաքին աշխարհի զարգացման անհրաժեշտության, այսինքն օրինաչափության ճանաչումն ու նրան իր նպատակներին ենթարկումն է:

Սակայն մենք ապրում ենք ոչ միայն բնության մեջ. արտաքին աշխարհը՝ դա սոսկ բնությունը չէ, այլև հասարակությունը, որի մեջ մարդն անմիջականորեն ապրում է և որը նույնպես ունի իր պատմությունը և իր զարգացման օրենքները: Մարդը ապրում է ոչ միայն բնության մեջ, այլև որոշ կոնկրետ հասարակական—պատմական իրադրության մեջ, ավելին. ապրում է դասակարգերի, պետությունների, հասարակությունների սխառեմում. նա ինքը ձևավորվել է հենց հասարակական հարաբերությունների մեջ, որոնք իրենց ամբողջությամբ պայմանավորում են մարդկային կամքը: Ուստի այստեղ մեզ կարող են կրկին առարկել,— և կարող է թվալ, թե այդ առարկությունը հասարակական կյանքի նկատմամբ ծանրակշիռ հիմք ունի. չէ՞ որ հասարակական երևույթներն ի տարբերություն բնությունից գոյանում են մարդու գործունեության հետևանքով, որն, ինչպես գիտենք, ուղեկցվում է կամային մոտիվներով: Ուրեմն, կարող է թվալ, թե առնվազն հասարակական բնազավառում մարդկային կամքը առաջնայինն է, իսկ պատմության պրոցեսը երկրորդայինը:

Մարքսիզմ—լենինիզմը, պնդույտ, չի մոռանում հասարակական զարգացման օրինաչափությունների սպեցիֆիկ տարբերությունները բնության զարգացման օրինաչափություններից: Ոչ այլ ոք, քան մարքսիզմի կլասիկներն են ընդգծել ամբողջ ուժով այդ տարբերությունները: Էնգելսը խոսելով պատմության ընթացքի մասին, ասում է, որ այդ ընթացքը մի էական կետում տարբերվում է բնության զարգացման ընթացքից. բնությունը գոյություն է ունեցել և գոյություն ունի անկախ մարդու գործունեությունից, նրանից դուրս և նրանից առաջ: Այնտեղ անհրաժեշտությունը գոյանում է տարերայնորեն, մատե-

րիայի տարբեր ձևերի փոխադարձ կապակցության ու փոխադարձ ազդեցության, պատճառի ու հետևանքի անհրաժեշտ կապի միջոցով, փոխանցման խստիվ օրինքներով: Օրինակ, բնության մեջ՝ ածխածնի և թթվածնի որոշ հարաբերակցությունից անհրաժեշտաբար գոյանում է ածխաթթու, այս ածխաթթուն թափանցելով բույսի տերևի մեջ՝ անհրաժեշտաբար առաջացնում է իր հետևանքը, մոլորակը արևի շուրջը պտտվում է դարձյալ ոչ կամայաբար, այլ խիստ կանոնավորությամբ, այսինքն անհրաժեշտաբար, հաճարի հատիկից առաջանում է հաճարի հացաբույսը նույնպես խիստ՝ անհրաժեշտությամբ, վեր նետված քարը վայր է ընկնում ձգողականության անհրաժեշտությամբ և այլն և այլն: Այս բոլորը կատարվում է միանգամայն անկախ այն հանգամանքից՝ գոյություն ունի՝ արդյոք մարդը, թե ոչ, գործում և մտածում է, թե՞ ոչ:

Այլ է մարդկանց սեփական պատմության պրոցեսը. այստեղ ամեն ինչ կատարվում է մարդու ձեռքով, որը ղեկավարվում է որոշ մտադրություններով, նպատակներով, ցանկություններով, կամքով. այստեղ ոչինչ չի կատարվում առանց մարդու գործունեության, որն անխուսափելիորեն ուղեկցվում է գաղափարական մոտիվներով: Եվ ահա իդեալիստներին թվում է, թե պատմության մղիչ ուժը ոչ թե նյութական պայմաններն են, պատմությունը ոչ թե պատճառի և հետևանքի անհրաժեշտությամբ տեղի ունեցող պրոցես է, այլ մարդկային կամքն է որոշում պատմության ընթացքը, ուղղությունը և այլն: Հենց այս փաստարկման վրա էին կառուցում իրենց ամբողջ դատողությունները մարքսիզմի գաղափարական ու քաղաքական հակառակորդները՝ նեոկանտականները, նարոդնիկական և այլ սոցեիկտիվ սոցիոլոգները, մախիստները, արդի ռեակցիոն բուրժուական բոլոր իդեոլոգները: Իրականում այդ արգումենտացիան ոչ մի քննադատության չի դիմանում, և մարքսիզմի թշնամիներն այստեղ նույնպես սնանկանում են, ինչպես բոլոր մյուս բնագավառներում: Այդ թշնամի հոսանքների մասին իր տեղում մենք դեռ կխոսենք, առայժմ շարունակենք մեր մտքերի ընթացքի դրական շարադրությունը:

Ի՞նչ իմաստով է հասարակական կյանքի պրոցեսը անկախ մարդկանց կամքից ու գիտակցությունից, չնայած մարդիկ իրենք են ստեղծում իրենց սեփական պատմությունը. ինչպե՞ս է մարքսիզմ-լենինիզմը հիմնավորում դատերմինիզմի, պատմական պրոցեսի անհրաժեշտ բնույթի իդեան:

1. Նախ, մարդկանց յուրաքանչյուր սերունդ հրապարակ գալով՝ գտնում է արտադրողական ուժերի որոշ պատրաստի մակարդակ, նախորդ սերունդների պրակտիկ գործունեությամբ ստեղծված նյութական առարկաների պատրաստի բազմապիստություն: Այդ արտադրողական ուժերը այլ բան չեն, քան փոփոխված բնությունը, որը կատարվել է միլիոնավոր մարդկանց պրակտիկ աշխատանքով: Ուստի և այդ ուժերը ոչ միայն կախում չունեն տվյալ սերնդի կամքից ու գիտակցությունից, այլ իրենք են ծնում նրա մեջ որոշ կամք, որոշ գիտակցություն, նրա առաջ դնում խնդիրներ և ընձեռում առաջադրված խնդիրները լուծելու միջոցներ:

Այս իմաստով էլ պետք է հասկանալ Մարքսի հայտնի խոսքերն այն մասին, թե մարդիկ իրենց առաջ այնպիսի խնդիրներ են դնում և պետք է դնեն (եթե նրանք չեն ուզում ձախորդությունների մատնվել), որ նրանք կարող են լուծել, և խնդիրներն էլ որպես կանոն այն ժամանակ են ծագում, երբ նրանց լուծման պայմանները կան կամ առաջացման պրոցեսումն են գտնվում: Ի-

հարկե, զանազան ավանտյուրիստների գլխում շատ ցանկություններ, տիեզերական նախագծեր ու ճիշտաներ կարող են ծագել, բայց միայն այն նպատակներն ու ցանկություններն են ռեալ, որոնք ծագում են նյութական պայմաններով հասունացած խնդիրներից և համընկնում են անհրաժեշտության օբեկտիվ ընթացքի հետ: Նպատակները ոչ միայն ծագում են նյութական հանգամանքներով, այլ իրազեղծվում նրանց օգնությամբ: Լենինը իր «Փիլիսոփայական տեսութաներ»-ում խորապես հիմնավորել է այս թեզիսը. «Իր գործիքներով մարդն իշխանություն ունի արտաքին բնության վրա, այն ժամանակ, երբ իր նպատակներով նա ավելի շուտ ենթակա է նրան» (էջ 163):

2. Ցուրաքանչյուր սերունդ գտնում է հասարակական-տնտեսական որոշ ստրուկտուրա ու դրա անհրաժեշտ հետևանքով՝ դասակարգային որոշ խմբավորում. հետևաբար, տվյալ սերունդը չի կարող իր ճազատո կամքի թելադրանքով խնդիրներ առաջ քաշել, կամայական ընտրություն կատարել, քմահաճույքով վերախմբավորել դասակարգերն ու պարտիաները: Նման փորձը դոմֆիշոտության կհասցնեք այդպես վարվող գործիչներին, պարտիաներին: Գործիչը, հոսանքը պետք է անհրաժեշտաբար իր կամքը ենթարկի դասավորված հանգամանքներին, հաշվի նստի նրանց մակարդակի և օբեկտիվ ընթացքի հետ, որից հետո նա կարող է ստիպել այդ հանգամանքներին ծառայելու իր կամքին և, այդպիսով, իրագործել իսկական. ազատությունը: Մարքսը հիանալի հիմնավորում է այդ թեզը: Ազատ են արդյոք մարդիկ այս կամ այն հասարակական ձևը ընտրելու մեջ: Բնավ ոչ: Վերցրեք մարդկանց արտադրողական ուժերի զարգացման որոշ աստիճան, և դուք կստանաք որոշ փոխանակության և սպառման ձև: Վերցրեք արտադրության, փոխանակության և սպառման զարգացման որոշ աստիճան, և դուք կստանաք որոշ հասարակարգ, ընտանիքի, դասերի կամ դասակարգերի որոշ կազմակերպություն, մի խոսքով՝ որոշ քաղաքացիական հասարակություն: Վերցրեք որոշ քաղաքացիական հասարակություն, և դուք կստանաք որոշ քաղաքական կարգ, որը քաղաքացիական հասարակության լոկ պաշտոնական արտահայտությունն է» (Մարքս և Էնգելս. Հնտիք երկերի երկհատորյակ, հ. 2-րդ, էջ 423): «Կապիտալ»-ում Մարքսը խոսելով իրավական և կամային հարաբերությունների մասին, ուղղակի քաջատրում է, որ «... իրավական կամ կամային հարաբերության բովանդակությունը տրված է բուն տնտեսական հարաբերությամբ» (էջ 52):

Այսպիսով, մարդը ոչ միայն բնության արգասիք է, այլ նախ և առաջ հասարակության. և այս ոչ միայն այն իմաստով, որ մարդը հասարակությունից դուրս ապրել չի կարող, — այս գիտեք արդեն Արիստոտելը: Այլ շատ ավելի խոր իմաստով՝ որ մարդը հենց հասարակության մեջ էլ ձևավորվել է, դարձել այն, ինչ նա է — և այս ապացուցել է միայն մարքսիզմ-լենինիզմը: Իր ամբողջ գործունեությամբ, հետևաբար և իր կամքով ու գիտակցությամբ մարդը սոցիալական էություն է՝ բառիս ամենաճշգրիտ իմաստով. մարդը հասարակական հարաբերությունների ամբողջությունն է, — ասել է Մարքսը իր հոշակավոր թեզիսներում: Դասակարգային հասարակության մեջ մարդը, իհարկե, դասակարգային հարաբերությունների ամբողջության արտահայտությունն է. նրա կամքը ձևավորվում է այդ հարաբերությունների, դասակարգային ու պարտիական պայթարի ազդեցությամբ, արտացոլելով իր մեջ դասակարգային շահերը: Ուստի և փոսել արատրակտ ձևով կամքի ազատության

մասին անկախ հանգամանքներից, տեղից, ժամանակից, պայմաններից,— անհնարին է. ամեն անգամ խոսք կարող է լինել այս կամ այն խմբի, դասակարգի, պարտիայի, գործչի կամքի մասին. մարդկային կամքը միշտ ունի պատմականորեն կոնկրետ բովանդակություն: Հսկայական է պետությունների, պարտիաների քաղաքականության ազդեցությունը մարդկանց կամքի ձևավորման վրա: Իզուր չէ ասվում, օրինակ, որ բուլճերիկյան պարտիայի և Սովետական պետության քաղաքականությունը սովետական հասարակության զարգացման և սովետական մարդկանց կոմունիստական աշխարհայացքի, ուրեմն և կամքի ձևավորման կենսական բազան է: Իդեալիստական-մետաֆիզիկական հայացքները, որ պրոպագանդում են բուրժուական իդեոլոգիաները, ինդետերմինիստները, վոլյունտարիստները, նրանց անարխիստական-աղայական հայացքները կամքի ազատության, հասարակությունից անհատի անկախության, գիտակցության ու կամքի վերգասակարգային լինելու մասին— ռեակցիոն առասպել է, որ ծառայում է շահագործող դասակարգերի «անհատներին» մեծարելու համար, մի կողմից, միլիոնավոր աշխատավորական հասարակ մարդկանց ստորացնելու և ճնշելու գործին՝ մյուս կողմից: Միայն բուրժուական մասնավոր սեփականատիրական իդեոլոգի պիտոմ կարող է ծագել կամքի ազատության միտքը: Նույնիսկ հռչակավոր Դիոգենեսը, որը, ըստ ավանդության, ապրելիս է եղել տակառում՝ կարծես թե մեկուսացած, հասարակությունից անկախ և «ազատ», ապրել է իբրև թե իր «ազատ» կամքի թելադրանքով— նույնիսկ Դիոգենեսը ստիպված եղավ ընդունելու հասարակության պրիմատն անհատի նկատմամբ, երբ նա հանդիպեց առաջին իսկ դժվարության՝ կյանքը ճանաչելու առթիվ արած իր խորհրդածությունների ժամանակ. Դիոգենեսը ստիպված էր դուրս գալու տակառից և դիմելու մարդկանց՝ իր տարակուսանքները լուծելու համար: Եվ իրոք, ապրել հասարակության մեջ,— ասում է Լենինը,— և անկախ լինել հասարակությունից— անհնարին է: Ու դարձյալ սա՛ վերաբերում է ոչ միայն առանձին անհատներին, այլև սոցիալական բոլոր կազմավորումներին՝ դասերին, դասակարգերին, պարտիաներին, պետություններին, նույնիսկ ամբողջ ժողովուրդներին:

Քայց այստեղից կոմունիստի, ամեն մի ռեուլցիոն գործչի ու մտածողի համար հետևում է շարժանք կարևոր խնդիր, այն է՝ հետազոտել օգեկտիվ ճշգրտությամբ այն շարժիչ ուժերը, որոնք թաքնված են մարդկանց կամային մոտիվների տակ, այն պատմական պատճառները, որոնք արտացոլվում են գործիչների գլուխներում և ընդունում այնտեղ զանազան շարժառիթների ձև՝ դասակարգային, պարտիական, ազգային կամ ազգայնական (նացիոնալիստական), պրոգրեսիվ, ռեուլցիոն կամ, ընդհակառակը, ռեակցիոն, հակաժողովրդական, ֆաշիստական շարժառիթների ձև: Ըստ որում կարևոր են մեզ համար ոչ այնքան անձնական մոտիվները, որքան հասարակական մոտիվները, մարդկանց գործունեության ոչ թե վաղանցիկ, պատահական, այլ օրինաչափական, հաստատուն շարժառիթները, այն շարժառիթները, որոնք խթան են առաջ պարտիաների, դասակարգերի, ազգությունների ու ժողովուրդների գործունեությանը: Քանի որ էնգելսը շարժանք գունեղ և ամբողջական ճշտությամբ ձևակերպել է մարքսիզմի այս կարևորագույն թեզերից մեկը,— ապա բերենք էնգելսի միտքն ամբողջությամբ՝ «Հետևաբար, երբ խոսք է լինում պատմական գործիչների շարժառիթների տակ թաքնված,— գիտակցված թե, ինչպես այդ հաճախ է պատահում, չգիտակցված,— շարժիչ

ուժերի հետազոտման մասին, այն ուժերի հետազոտման, որոնք վերջին հաշվով կազմում են պատմութեան իսկական շարժիչ ուժերը — ապա պետք է նկատի ունենալ ոչ այնքան առանձին անհատների, թեկուզ և ամենաականավոր անհատների շարժառիթները, որքան այն շարժառիթները, որոնք շարժման են բերում մարդկանց մեծ մասսաների՝ ամբողջ ժողովուրդների, իսկ ամեն մի տվյալ ժողովրդի մեջ իր հերթին՝ ամբողջ դասակարգերի: Եվ այստեղ էլ կարևոր են ոչ թե կարճատև պայթյունները, ոչ թե վաղանցիկ բռնկումները, այլ պատմական մեծ փոփոխություններ առաջացնող հարատև շարժումները: Հետազոտել այն շարժիչ պատճառները, որոնք պարզ թե ազոտ, անմիջականորեն, թե իրենց իրական, թերևս նույնիսկ ֆանտաստիկ ձևով, արտացոլվում են գործող մասսայի ու նրա առաջնորդների՝ պլսպես կոչված մեծ մարդկանց գլխներում, որպես գիտակցական շարժառիթներ, — հետազոտել այդ, նշանակում է կանգնել այն միակ ուղու վրա, որը տանում է դեպի ընդհանրապես պատմության մեջ և նրա առանձին ժամանակաշրջաններում կամ առանձին երկրներում իշխող օրենքների իմացությունը» (Մարքս և Էնգելս. Հատիկ երկհատորյակ, հատոր 2-րդ, էջ 373):

Ուրեմն մարքսիզմ-լենինիզմը պատմության ընթացքը դիտում է որպես բնապատմական պրոցես, որը ոչ միայն անկախ է մարդկային կամքից և գիտակցությունից, այլ ինքն է որոշում այդ կամքն ու գիտակցությունը: Եվ այստեղ էլ, ինչպես բնության մեջ՝ ազատությունը ձեռք է բերվում, կարող է և պետք է ձեռք բերվի ոչ թե պատմության օբեկտիվ լոգիկայի ավանտյուրիստական ժխտման, այլ նրա հետ հաշվի նստելու և այն ճանաչելու միջոցով: Կամքը ծագում է ոչ միայն բնական, այլև պատմական օբեկտիվ հանգամանքներից. այն առաջանում է այս կամ այն օբեկտիվ անհրաժեշտությունից և իրագործվում է որոշ նյութական նախադրյալների ու պայմանների միջոցով: Եվ այստեղ կարևորն այն է, թե ի՞նչ ուղղությամբ է զարգանում պատմությունն անհրաժեշտաբար և ինչին պետք է հարմարվի ուղուցիտ՝ դասակարգի կամքը, եթե նա ուզում է իշխել պատմության օբեկտիվ պրոցեսի վրա: Լենինը հիանալի հիմնավորել է այդ դրույթը: Հասարակական գիտության հիմնական և բարձրագույն խնդիրն է, ասում է Լենինը, բացահայտել պատմության օբեկտիվ օրինաչափությունը, հասարակական կեցության օբեկտիվ լոգիկան և դրանով իսկ գիտական հիմք տալ ուղուցիտ դասակարգի գործունեությանը: Այս կարևոր թեզից Լենինը բխեցնում է ուղուցիտ պրակտիկ եզրակացություն: «Մարդկության ամենաբարձրագույն խնդիրն է — ընդհանուր և հիմնական գծերով ընդգրկել տնտեսական էվոլյուցիայի (հասարակական կեցության էվոլյուցիայի) այդ օբեկտիվ տրամաբանությունը, որպեսզի ըստ հարավորության ավելի ճշտորոշ, պարզ ու քննադատաբար հարմարեցնենք դրան մեր հասարակական գիտակցությունն ու բոլոր կապիտալիստական երկրների առաջավոր դասակարգերի գիտակցությունը» (Լենին, հատոր 14, էջ 436):

Երբ խոսք է լինում մարդկային հասարակության իրադարձությունների ընթացքի մասին, ապա մարքսիզմ-լենինիզմը պահանջում է պարզել, թե ինչ անհրաժեշտությունից է ծագել այս կամ այն գործչի, պարտիայի, դասակարգի կամքը, ձգտումները, տակտիկան: Ինչո՞ւ, ասենք, Նիկոլայ 1-ինը «չեղանկանում» վերացնել ճորտատիրական իրավունքը, իսկ Ալեքսանդր 2-րդը «ցանկացավ» վերացնել. ի՞նչ պատմական իրողություն, պրոցես տեղի ունե-

ցավ, ինչ պատճառ ծագեց, որն անհրաժեշտորեն իր հետ բերեց այս հետևանքը: Կամ՝ ասենք, ինչո՞ւ Չերչիլը և իմպերիալիստական ռեակցիայի մյուս արտաբերությունները, անգլո-ամերիկյան իմպերիալիստները ցանկանում են պատերազմ, ձգտում են նրան, իսկ, օրինակ, սովետական մարդիկ, աշխարհի միլիոնավոր հասարակ մարդիկ, պրոգրեսիվ գործիչներ, ընդհակառակը, ոչ միայն չեն ցանկանում պատերազմ, այլ, որքան որ կարող են՝ պայքարում են դրա դեմ: Ինչո՞ւ սովետական ղեկավարներն ձգտում է Գերմանիայի միասնության, իսկ արևմտյան իմպերիալիստական պետությունների ղեկավարները հակառակն են ցանկանում: Ինչպես տեսնում ենք, այս բոլոր ձգտումները, ցանկությունները, կամքը կարիք ունեն բացատրելու մեղուցիդոն մարքսիստներին, երբ նրանք խոսում են ազատության ու անհրաժեշտության հարաբերակցության մասին, առանձնապես հետաքրքրում է, թե ուր է տանում բնապատմական պրոցեսի անհրաժեշտությունը, ինչ ուղղությամբ է նա զարգանում. ինչ կերպ է գործում, կարող է և պետք է գործի ոչ միայն առաջավոր գործիչների, այլև միլիոնավոր հասարակ մարդկանց, բոլոր պրոգրեսիվ ուժերի կամքը: Վերջապես մեզ համար անչափ կարևոր է, թե ինչպե՞ս անել, որ պետքի դեմոկրատիայի ու սոցիալիզմի գործի մեջ ներգրավել, հերոսական սխրագործությունների հանել միլիոնավոր մարդկանց՝ ամենակարճ ճանապարհով ոչնչացնելու ռեակցիոն, իմպերիալիստական կարգերը, ազատագրելու մարդկությունը դասակարգային ու ազգային ճնշման բոլոր ձևերից: Այս է սոցիալական գիտության բարձրագույն խնդիրը: Իսկ այս խնդիրները չի կարելի լուծել ո՛չ միլիոնատարիստական սուբեկտիվիզմի և ոչ էլ թեոլոգիական, միստիկական նախախնամության կամ ֆատալիզմի միջոցով: Դրանք կարող են լուծվել միայն գիտելիսկական և պատմական մատերիալիզմի դիրքերից:

Ընկեր Ստալինի՝ մարքս-լենինյան փիլիսոփայության հարյուրամյա զարգացման հանրագումարը հանդիսացող «Դիալեկտիկական և պատմական մատերիալիզմի մասին» հանճարեղ գործում սահմանային խորությամբ ու հակիրճությամբ ձևակերպված և նոր աստիճանի են բարձրացված բնության և հասարակության դիալեկտիկո-մատերիալիստական ըմբռնման հիմնական սկզբունքները: Այստեղ մեր առաջ բացվում է նոր խորությամբ նաև անհրաժեշտության ու ազատության պրոբլեմը: Ընդ որում, ընկեր Ստալինը բխեցնում է հարցի գիտական անալիզից ծագող բոլոր պրակտիկ հետևությունները: Ընկեր Ստալինը նախ և առաջ ընդգծում է աշխարհի մատերիականությունն ու նրա զարգացման օրինաչափ բնույթը: Եթե բնությունը, կեցությունը, մատերիական աշխարհը առաջնային է, իսկ գիտակցությունը, մտածողությունը՝ երկրորդային, ածանցական, եթե մատերիական աշխարհը մարդկանց գիտակցությունից անկախ գոյություն ունեցող օբեկտիվ ռեալություն է, իսկ գիտակցությունը այդ օբեկտիվ ռեալության արտացոլումն է, ապա սրանից հետևում է, որ հասարակության նյութական կյանքը, նրա կեցությունը նույնպես առաջնային է, իսկ նրա հոգևոր կյանքը՝ երկրորդային, ածանցական, որ հասարակության նյութական կյանքը օբեկտիվ ռեալություն է, որը գոյություն ունի մարդկանց կամքից անկախ, իսկ հասարակության հոգևոր կյանքն այդ օբեկտիվ ռեալության արտացոլումն է, կեցության արտացոլումը» (Համկ(բ) Պատմություն, Համառոտ դասընթաց, էջ 157):

Երկրորդ հիմնադրույթն այն է, որ բնության և հասարակության երկվությունների փոխադարձ կապն ու պայմանավորվածությունը, նրանց զարգա-

ցումը պատահական կապ և պատահական փոփոխություն չէ, այլ դիալեկտիկական զարգացման մի պրոցես, որ կատարվում է պատճառի և հետևանքի անհրաժեշտությամբ, խիստ օրինաչափորեն, անկախ մարդկանց կամքից՝ ու գիտակցությունից:

Սրբորդ, ընկեր Ստալինը հիմնավորելով հասարակության օրինաչափ լինելը, հասարակության ու բնության միասնականությունը, միևնույն ժամանակ խորապես քաջատրում է հասարակական կյանքի զարգացման օրինաչափությունների սպեցիֆիկ բնույթը, զարգացնելով Մարքսի, Էնգելսի, Լենինի մտքերն այդ ուղղությամբ և հիմնավորելով իր թեզը: Ընկեր Ստալինը ցույց է տալիս, թե ինչպես են գոյանում մարդկային հասարակության զարգացման օգեկտիվ օրինաչափությունները, թե ընդունված է, որ մարդիկ իրենք են կերտում իրենց պատմությունը, իսկ նրանք գործում են ղեկավարվելով կամքով ու գիտակցությամբ. «... մարդիկ, — ասում է ընկեր Ստալինը, — ազատ չեն այս կամ այն արտադրանքների ընտրության մեջ, որովհետև յուրաքանչյուր նոր սերունդ կյանք մտնելով, արդեն գտնում է պատրաստի արտադրողական ուժեր և արտադրական հարաբերություններ, որպես նախորդ սերունդների աշխատանքի հետևանք, ուստի և նա պետք է առաջին շրջանում ընդունի այն, ինչ գտնում է պատրաստի ձևով արտադրության բնագավառում, և հարմարվի նրանց, որպեսզի հնարավորություն ստանա արտադրելու նյութական բարիքներ» (նույն տեղ, էջ 176): Իհարկե, — բացատրում է ընկեր Ստալինը, — մարդիկ որպես գործիչներ թե՛ արտադրելիս, թե՛ արտադրածը փոխանակելիս, թե՛ այլ գործողություններով զբաղվելիս այդ բոլորը կատարում են ոչ առանց գիտակցության, ոչ առանց կամքի. սակայն նրանք չեն գիտակցում իրենց նյութական գործունեության հասարակական հետևանքները, նրանց կամքը հետապնդում է առօրյա շահ, իրենց աշխատանքը հեշտացնելու, անմիջական շոշափելի էֆեկտ ստանալու նպատակ: Այս խորագույն բացատրությունը ջախջախում է ամեն մի վոլյունտարիզմ, ինդե տերմինիզմ, ամեն մի իդեալիզմ, որը խոնարհվում է երևույթների մակերեսին և ամեն մի երեխայի համար նկատելի իդեալական շարժառիթներից այն կողմը չի դնում: Բայց գիտությունը հենց այդտեղից հետո է սկսվում:

Հետևաբար մարդկանց գիտակցության և կամքի բովանդակությունը, զանազան իդեանների, հայացքների, թեորիաների՝ բոլոր իդեոլոգիական ձևերի աղբյուրն ու փոփոխման պատճառը՝ կամքը, գիտակցությունը իրենք չեն, նրանց զբնությունը, կամ նրանց հավիտենական «հատկությունը» չէ, այլ օբեկտիվ աշխարհը՝ իր բազմաճարուստ ձևերով և իր զարգացման օրենքներով:

Այստեղից ընկեր Ստալինը բխեցնում է մեր պարտիայի և պետության համար անչափ կարևոր նշանակություն ունեցող պրակտիկ հետևություններ. հենց այդ սկզբունքների ու հետևությունների վրա են կառուցված բոլշևիկների պարտիայի ծրագիրը, տակտիկան, ստրատեգիան, պարտիա, որը օգտագործում է բնության ու հասարակության զարգացման օրենքները և կիրառում այն պրակտիկ կյանքում: Լենինի—Ստալինի պարտիայի հզոր ուսմունքը՝ մարքսիզմ—լենինիզմը ամբողջ աշխարհի կոմունիստական պարտիաների ղեկավարող գործունեության տակտիկայի ու ստրատեգիայի իդեալական հիմքն է: Ահա ընկեր Ստալինի առաջ քաշած պրակտիկ հետևությունները. ճշմանակալի է, պրոլետարիատի պարտիայի պրակտիկ գործունեությունը պետք է հիմնվի

ոչ թե «ականավոր մարդկանց» բարի կամեցողությունների վրա, ոչ թե «բանականության» պահանջների, ընդհանրական մորալի» և այլնի վրա, այլ հասարակության զարգացման օրինաչափությունների վրա, այդ օրինաչափությունների ուսումնասիրության վրա...

Նշանակում է, իր պրակտիկ գործունեության մեջ պրոլետարիատի պարտիան պետք է ղեկավարվի ոչ թե որևէ պատահական շարժառիթով, այլ հասարակության զարգացման օրենքներով, այդ օրենքներից բխող պրակտիկ հետևություններով» (նույն տեղ, էջ 156)։ Վերջապես անհրաժեշտ է հիշատակել մյուս եզրակացությունը. «Նշանակում է, քաղաքականության մեջ չսխալվելու և դատարկ երազողների դրության մեջ չընկնելու համար, պրոլետարիատի պարտիան իր գործունեության մեջ պետք է ելնի ո՛չ թե «մարդկային բանականության» վերացական «սկզբունքներից», այլ հասարակության նյութական կյանքի՝ որպես հասարակական զարգացման վճռողական ուժի կոնկրետ պայմաններից, ո՛չ թե «մեծ մարդկանց» բարի ցանկություններից, այլ հասարակության նյութական կյանքի զարգացման ռեալ պահանջներից» (նույն տեղ, էջ 157—158)։

Այս հանճարեղ իդեաների լույսի տակ առանձնապես աչքի է զարնում այն քաղմասիվ գործիչների ու հոսանքների վոլյունտարիզմի անհիմնությունն ու տակտիկայի անպտուղ լինելը, որոնց մեներ հանդիպում ենք մեր պարտիայի պատմության մեջ և որոնք ղեկավարվում էին իրոք՝ որ պատահական շարժառիթներով, անհատների կամեցողություններով, որոնք իրենց ծրագիրն ու տակտիկան կառուցել են ընդհանրական մորալի», «բանականության» պահանջներով և այլն։ Այդպիսիք էին բոլոր ուտոպիստները, նույն թվում՝ նարոդնիկները, էսեռները, անարխիստները, ամեն գուցե՝ «ծախ ռեուլուցիոներները», որոնց դեմ բոլշևիկների պարտիայի մղած վճռական պայքարի մասին աչնպես գունեղ և ուսանելի պատմում է մեզ Պարտիայի պատմության համառոտ դասընթացը։ Բայց այդ մասին մենք խոսելու ենք մեր աշխատության հաջորդ գլխում։ Այստեղ ընդգծենք միայն, որ բոլշևիկների տակտիկան ու ծրագիրը շարունակ հաղթանակել են և մեր ժողովրդին նորանոր հաղթանակներ են բերում, որովհետև այդ տակտիկան ու ծրագիրը հիմնվում են հասարակության զարգացման օրենքների բազմակողմանի հետազոտության և հաշվառման վրա։ «Մարքսիզմ-լենինիզմի ուժն ու կենսականությունն այն է, որ իր պրակտիկ գործունեության մեջ նա հենվում է հենց հասարակության նյութական կյանքի զարգացման պահանջների վրա, երբեք չկտրվելով հասարակության ռեալ կյանքից» (նույն տեղ, էջ 158)։

Մարքս-լենինյան այս ուսմունքը դետերմինիզմի մասին, կամքի և օբեկտիվ անհրաժեշտության, մարդկանց նպատակների, ձգտումների ակտիվության և հասարակական-պատմական օբեկտիվ օրինաչափության հարաբերության մարքսիստական այս մեկնաբանությունները լիովին ստուգված են և հաստատված հասարակության ամբողջ պատմության, բոլոր ռեուլուցիաների փորձով։ Վերցնենք մի երկու օրինակ միայն. հրե Ռուսաստանի բանվորներն ու գյուղացիները 1905 թվականին ռեուլուցիոն ապստամբության ելան, նրանք կամալաբար չէին ընտրել իրենց գործունեության պայմանները. նրանք գտել էին անտեսական զարգացման որոշ պատրաստի մակարդակ, Ռուսաստանի դատակարգային պատրաստի ստրուկտուրա, քաղաքական պարտիաների որոշ առկայություն։ Նրանք ձգտում էին, իսկ մարքսիստական պարտիան նրանց

դեկլարում էր, ռեյուցիոն ճանապարհով վերափոխելու այդ կարգերը, բայց նրանց այդ ձգտումները, մարքսիստների թեորիան ու տակտիկան ոչ միայն չէին հակասում, այլ, ընդհակառակը, բխում էին հասարակական ու տնտեսական զարգացման ընթացքից, պրոգրեսի բուն անհրաժեշտությունից: Կամ՝ երբ Ռուսաստանի բանվորները, գյուղացիներն ու զինվորները բուշեփների պարտիայի գլխավորությամբ իրենց ռեյուցիոն կամքի լարումով 1917 թվի հոկտեմբերին տապալեցին Ռուսաստանի բուրժուա-կապիտալիզմի կարգերը և հաստատեցին պրոլետարիատի դիկտատուրա, ապա այստեղ դարձյալ մասսաները, բուշեփյան պարտիան գործում էին ո՛չ թե իրենց կողմից կամայաբար ընտրած հանգամանքներում և ո՛չ թե պատմական անհրաժեշտության հակառակ, ասենք, իրենց ճաշատո՞ւ կամքի թեկադրանքով: Երբ սովետական ժողովուրդը 1926 թվականից ձեռնարկեց ստալինյան պլանով նախագծված մեր երկրի ինդուստրացման պատմական վիթխարի գործը՝ ապա այդ դարձյալ կատարվում էր պատմական անհրաժեշտության հիման վրա:

Այսպիսով, մարքսիզմ-լենինիզմի կողմից հիմնավորապես ապացուցված, պրակտիկայով ստուգված ու հաստատված է այն թեզը, որ կամքի ազատությունը որպես այդպիսին, կամքը «ինքնին» և իր համար՝ չկա և չի կարող լինել. կա միշտ նյութականորեն պայմանավորված կամք. մարդկային կամքը հանդես է գալիս միշտ որպես մի օղակ երևույթների պատճառի ու հետևանքի շղթայի օբեկտիվորեն անհրաժեշտ կապակցության մեջ: Պարզ է, որ կամքի սովբերենության մասին իդեալիստական իմաստով խոսելը նույնքան անհեթեթ, վնասակար ու ռեակցիոն է, ինչպես զգայությունների, մտապատկերների, հասկացողությունների սովբերենության մասին՝ որպես այդպիսին. առանց պատճառի կամք չի լինում, ճիշտ այնպես, ինչպես անառարկա մտապատկեր, հասկացողություն, միտք ինքնին չի լինում:

Սակայն ապացուցված է դիալեկտիկական մատերիալիզմի ոչ միայն այս թեզը, այլև մյուս հիմնական կարևոր թեզը, այն, որ գոյություն ունի կամքի հարաբերական, շարունակ ընդարձակվող ազատություն, ապացուցված է այն, թե ինչպես է մարդկությունը ձեռք բերում այդ ազատությունը, ինչ է այն, և ինչպես պետք է աշխատավոր ժողովուրդը հասնի դրան: Անհրաժեշտությունը կամքի բովանդակությունն է, իսկ կամքը նրա արտահայտման, գիտակցման ձևը: Այս այսպես է: Բայց այս նշանակում է նաև, որ եթե այդ անհրաժեշտությունը ճիշտ է ճանաչված, գիտակցված, եթե մասսաների կամքը, եռանդն ու ձեռնբեցությունը կազմակերպված, մի որոշ խելացի նպատակի է ուղղված՝ պատմության և ռեյուցիայի օրենքները խորպես ճանաչած ու համարձակ ռեյուցիոն մարքսիստական պարտիայի կողմից, — ապա այդ կամքը, եռանդն ու վճռականությունը ընդունակ են ռեյուցիոն ստեղծագործության հրաշքներ գործելու: Այդ մասին է վկայում բուշեփի վիթխարի փորձը, սոցիալիզմի կառուցման հերոսական պատմությունը մեր երկրում: Բայց այստեղից հետևում է, որ մարքսիզմ-լենինիզմին, միանգամայն խորթ է պատմության մեջ սուբեկտիվ ֆակտորի ակտիվ դերի — մարդկանց կազմակերպվածության, ձեռնբեցության, վճռականության, պարտիաների, մասսաների, անհատի ակտիվ գործունեության, գիտակցականության ու հաստատակամության դերի ժխտումը: Մեր պարտիայի պատմությունը անհաշիվ օրինակներ է տալիս, թե ինչպես մարքսիզմ-լենինիզմը վճռականորեն պայքարել է դեմոկրատիզմի պասսիվ-հայեցողական, ֆատալիստական ըմբռնման դեմ՝

բեռնշտայնականների, էկոնոմիստների, մենշևիկների, կապիտալիզմի աջ ռեստավրատորների, ժամանակակից աջ սոցիալիստների և կապիտալիզմի բոլոր ջատագովների դեմ: Ի դեպ, դժվար է հստակ սահման անցկացնել մի կողմից՝ վոլյունտարիստ-ավանտյուրիստների (էսեններ, անարխիստներ և այլ ուտոպիստներ, ձախ կոմունիստներ, տրոցկիստներ) և մյուս կողմից ֆատալիստների (բեռնշտայնականներ, տրեդյունիոնիստներ, էկոնոմիստներ, մենշևիկներ, աջեր և այլն) միջև: Որպես կանոն ավանտյուրիզմն անխուսափելիորեն փոխակերպվում է ծայրահեղ պատսիվիզմի և, ընդհակառակը՝ վուլգար մատերիալիզմը, ֆատալիզմը վեր է ածվում ավանտյուրիզմի: Բոլոր վերոհիշյալ հոսանքների պատմությունը այս դրույթի հիանալի ապացույցն է: Հատկապես այս հանգամանքը հանդես է եկել մեր ժողովրդի և բոլշևիզմի ոխերիմ թշնամիների՝ տրոցկիստների և տրոցկիստական-գինովեական կոնտրռեկուլցիոնիստների «գործունեության» մեջ: Բայց այդ մասին մանրամասնորեն իր տեղում:

Հետևաբար, այսպես կոչված կամքի ազատության պրոբլեմի լուծումը պետք է որոնել ոչ թե անմահ հոգու «ազատ» ընտրության կամ գերբնական ուժի կողմից հաստատված կանոնների կամ կամքի ավտոնոմ գոյության մեջ, այլ պատմական պրոցեսի պատճառական անհրաժեշտ կապակցությունների և զարգացման օրինաչափությունների ճանաչման ու այդ օրինաչափությունները խելացիորեն օգտագործելու, մեր նպատակներին ծառայեցնելու մեջ: Ազատությունը պետք է որոնել անհրաժեշտության հիման վրա և ոչ թե նրանից դուրս: Եթե այդ այդպես է; — իսկ այդ այդպես է, — ապա անհրաժեշտության ու ազատության հարաբերակցության պրոբլեմի մարքս-լենինյան լուծման էությունը համառոտակի կարելի է ձևակերպել հետևյալ թեզիսներում:

1. Ի հակադրություն բոլոր իդեալիստական-մետաֆիզիկական հայացքների, ինդետերմինիզմի և վոլյունտարիզմի՝ մարքսիզմ-լենինիզմը հաստատում է, որ մատերիական աշխարհը գոյություն ունի ինքնին, անկախ մեր կամքից ու գիտակցությունից: Այդ աշխարհը, նրա բազմապիսի ձևերը գտնվում են անընդհատ զարգացման մեջ, որը կատարվում է որոշ օրենքներով: մատերիայի մի ձևն առաջանում է մյուսից, փոխակերպվում մի այլ ձևի անհրաժեշտության համաձայն, որտեղ պատճառն անհրաժեշտաբար առաջացնում է գործողություն, որն իր հերթին պատճառ դառնալով՝ անհրաժեշտորեն առաջացնում է իր գործողությունը: Բնությունն ու հասարակությունը ոչ թե երևույթների պատահական կուտակումներ են, այլ անհրաժեշտության թափանցիկություն, օրինաչափ զարգացման պրոցես:

2. Մատերիան և նրա զարգացման օրենքները առաջնայինն է, իսկ կամքը, գիտակցությունը երկրորդայինը: Կամքն ու գիտակցությունը պետք է հարմարվեն անհրաժեշտությանը և — եթե նրանք ճիշտ են — ապա անխուսափելիորեն հարմարվում են իրերի օբեկտիվ ընթացքին, օբեկտիվ լոգիկային:

3. Անհրաժեշտությունը կույր է, քանի դեռ չի ճանաչված: Ազատությունը անհրաժեշտության գիտակցումն է և նրա վրա իշխելը: Միայն անհրաժեշտության ճանաչման միջոցով է իրագործվում մարդկային կամքի ազատությունը և դրանում էլ հենց կայանում է նրա գիտական իմացաբանական նշանակությունը: Իմացությունը, հետևաբար և կամքի ազատությունը, միանգամայն ընդմիշտ տրված կամ հաստատված բաներ չեն, այլ պատմական պրոցես: Հասարակական ու գիտական զարգացման տարբեր աստիճանների վրա

ժարդկային իմացությունը և կամքը տարբեր բնույթ, ծավալ ու բովանդակություն ունեն։ Կամքի ազատությունը բացարձակ չէ, այլ ճարտարապետական։

4. Իսկական ազատությունը կայանում է մարդու կողմից բնության ու հասարակության օրենքներին տիրապետելու, սոցիալական ճնշման բոլոր ձևերից ազատագրվելու մեջ. կամքի ազատությունը մարդկանց խելացի գործունեությունն է, իրենց սեփական աշխատանքի արդյունքների վրա իշխելն է, մարդու բազմակողմանի զարգացումը, մարդու ստորացման և կարիքի ոչնչացումը։ Այսպիսի առումով ազատություն հասկացողությունը լիովին համընկնում է միայն սոցիալիզմի հետ։

5. Բայց դրան հասնելու համար բավական չէ անհրաժեշտության լոկ թեորիական ճանաչումը. դրա համար անհրաժեշտ է ռեոլուցիոն դասակարգների ու պարտիաների համառ, անվեհեր, անձնազոհ պայքար հին աշխարհի դեմ, շահագործողական կապիտալիստական հասարակության դեմ։ Ազատությունը պահանջում է լայն մասշտաբի գործողություններ, հերոսական գործեր մասսաների կողմից, պահանջում է շահագործման, ճնշման վրա հիմնված հասարակությունների, իրենց դարձնելու ապրած հին արտադրանքների արմատական ռեոլուցիոն վերափոխում, կապիտալիստական հասարակական ու պետական կարգերի, ռեակցիոն հասարակական հարաբերությունների սխառեմի ոչնչացում։ Այս է նշանակում մարքսիզմ-լենինիզմի կլասիկների այն հռչակավոր ֆորմուլան, թե սոցիալիզմի իրագործումը կլինի բոլիշե աճեցած ժողովրդային քաղաքականության դեպի ազատության քաղաքականությունը։ Հետագա մեր շարադրությունը այս հիմնական թեզիսների բովանդակության բացահայտումը պետք է լինի։

* * *

Նվ այսպես, կամքի ազատություն իդեալիստական ըմբռնումով, այսինքն որպես կյանքի ռեալ կոնկրետ պայմաններից բացարձակորեն անկախ, ինքնուրույն, անփոփոխ հոգու գործունեության դրսևորում— կամքի աշխատի ազատություն չի եղել երբեք և չի կարող լինել։ Բայց այս չի նշանակում, թե մարքսիզմ-լենինիզմը ժխտում է մարդու կողմից տարբեր հնարավորությունների մեջ, նրան շրջապատող պայմանների մեջ ընտրություն կայացնելու ազատությունը, չի նշանակում, թե մենք ժխտում ենք անհրաժեշտության հետ համընկնող այս կամ այն գործողությունների ազատությունը, եթե դրանք համապատասխանում են մեխանիկական, ֆիզիկական, քիմիական, օրգանական, հասարակական օրինաչափություններին։ Մարքսիզմ-լենինիզմը ոչ միայն չի ժխտում այդ, այլ, ընդհակառակը, ցույց է տալիս՝ այդ օրենքների ենթարկման ուղիները մարդու նպատակներին ու շահերին, դրանց գիտական ճանաչման հիման վրա։

Ի՞նչ է, հետևաբար, ազատությունը մարքս-լենինյան ըմբռնումով։ Դրա կլասիկ սահմանումը շատ անգամ է արված Մարքսի—Էնգելսի—Լենինի—Ստալինի գործերում։ Կամքի ազատությունը իմացաբանական և սոցիալական առումով այլ բան չէ, քան անհրաժեշտության ճանաչումը, այսինքն բնության և հասարակության զարգացման օրենքների ճանաչումը մարդու կողմից և այդ օրենքների ենթարկումը մարդու իշխանությանը, տիրապետությանը, շահերին։ Ազատությունը անհրաժեշտությունն է՝ փոխադրված մարդկային գիտակցության մեջ և վերածված նպատակաձև պրակտիկ գործունեու-

թաւն։ Այս սահմանման մեջ երկու մոմենտ պետք է ընդգծել. 1. ազատութիւնը ծագում է, ձեռք է բերվում արտաքին աշխարհի օրինաչափութիւնների իմացութեան միջոցով. 2. ազատութիւնը մարդու իշխումն է այդ օրենքների վրա, դրանց ենթարկումը իրեն։ Այս հիմնականից ելնելով՝ մարքսիզմ-լենինիզմի կլասիկները բազմակողմանի կերպով վեր են հանում անհրաժեշտութեան և ազատութեան հարաբերակցութեան դիալեկտիկ պրոցեսը։

Մեր մեծ ուսուցիչները բացատրում են, որ անհրաժեշտութիւնը կոչւր է՝ փառքի այն չի ճանաչված. բայց հենց որ մենք ճանաչեցինք այն, ապա մենք տիրապետում ենք նրան, իշխում նրա վրա, նրա միջոցով իրազործում մեր նպատակները և դրանով իսկ դառնում ազատ։ Քանի մենք չգիտենք մեխանիկայի, էլեկտրականութեան, ջերմութեան, կամ պարբերական սիստեմի, կամ բույսերի ու կենդանիների զարգացման օրենքները — այդ չափով մենք դժբանց ստրուկներ ենք, մենք ազատ չենք. մենք չենք կարող ստիպել այդ երևույթներին ծառայելու մեր նպատակներին, չենք կարող ազդել նրանց վրա որոշ, մեզ համար անհրաժեշտ ուղղութեամբ։ Փորձեցեք ստիպելու սամառական օդ բարձրանալու՝ չիմանալով մի շարք օրենքներ, որոնց համաձայն այդ թռչնը կատարում է՝ մեխանիկական, ջերմային, էլեկտրական, քիմիական, նյութերի դիմադրութեան, աերոդինամիկայի, մեթեորոլոգիական և այլն։ Փորձեցեք օգտագործել էլեկտրականութիւնը՝ խախտելով փակ շղթայի օրենքը, կամ, ասենք, Օմի օրենքը։ Դուք ոչ մի քայլ չեք կարող անել, իսկ մի՞թե հին Ռուսաստանում մարդիկ ստրուկներ չէին մեթեորոլոգիական երևույթների, օրինակ, երաշտի օրենքների նկատմամբ, որոնց հետ նրանք հաշվի չէին նստում կամ չգիտեին։ «Մենք եղանակի երևույթների մեջ չգիտենք բնութեան անհրաժեշտութիւնը և այդ չափով մենք անխուսափելիորեն եղանակի ստրուկներ ենք» (Լենին, հատոր 14, էջ 246)։ Այս գրել է Լենինը մի քանի տասնյակ տարի սրանից առաջ. այժմ պատկերը փոխվել է, այժմ սովետական ժողովուրդը հեղաշրջումներ է առաջացնում բնութեան օրենքների մեջ և պլանաչափորեն իրեն ենթարկում դրանք, ճանաչելով և հաշվի նստելով դրանց հետ։

Նույնը վերաբերում է նաև հասարակական կյանքին, որը նույնպես ունի իր զարգացման օրենքները, իր պատճառական կապակցութիւնները։ Քանի մարդիկ չգիտեն հասարակութեան տնտեսական շարժման օրենքները, չգիտեն էկոնոմիկայի և քաղաքականութեան փոխադարձ կապակցութիւնները, ուսուցիչայի ու դասակարգային պայքարի օրենքները — այդ չափով մարդիկ ստրուկներ են հասարակական տարերային, կոչւր ուժերի հանդեպ։ Մարքսիզմ-լենինիզմը բացահայտեց այդ օրենքները, բացահայտեց պատմական անհրաժեշտութեան էությունը, զարգացման ուղղութիւնն ու տենդենցները և դրանով իսկ մարդկանց գիտակցութեան բերեց իրենց սեփական հասարակական հարաբերութիւնների նկատմամբ, որով և ցույց տվեց ազատութեան, այսինքն կոմունիզմի ճանապարհը։ Ավելին, մարքսիզմ-լենինիզմը ոչ միայն բեռնապես ցույց տվեց ազատութեան ճանապարհը, այլև պրակտիկորեն մոբիլիզացրեց և կազմակերպեց բանվորներին ու գյուղացիներին՝ այդ ազատութիւնը նվաճելու համար։ Հիմնվելով այդ ուսմունքի վրա, բոլշևիկների մեծ պարտիան Լենինի և Ստալինի գլխավորությամբ նախկին Ռուսաստանի բանվորներին ու գյուղացիներին, բոլոր ժողովուրդներին հաղթանակի հանց մեր անծայրածիր երկրում։

Անհրաժեշտությունը հանդես է գալիս ոչ միայն բնության ու հասարակության առանձին բնագավառների օրենքների ձևով, այլ բնության, մարդկային հասարակության ու մտածողության զարգացման ամենաընդհանուր օրենքների ձևով, այլ կերպ ասած՝ արտաքին աշխարհի և մեր մտածողության զարգացման ամենաընդհանուր օրենքների ձևով: Այդ օրենքները բացահայտված, ձևակերպված, հիմնավորված են մարքս-լենինյան փիլիսոփայական գիտության՝ մատերիալիստական դիալեկտիկայի մեջ, որի ստեղծումը վիթխարի հեղաշրջում էր մարդկային մտքի պատմության մեջ և մի վիթխարի նշանաձող ազատության ճանապարհին:

Ազատության՝ որպես ճանաչված անհրաժեշտության թեզը խորագույն կերպով ձևակերպել է Լենինը իր «Ժողովուրդների բարեկամները», «Մատերիալիզմ և էմպիրիոկրիտիցիզմ» և այլ գործերի մեջ: «... Փանի դեռ մենք չգիտենք բնության օրենքը, նա, գոյություն ունենալով և ներգործելով մեր իմացությունից անկախ և դուրս, մեզ դարձնում է «կույր անհրաժեշտության» ստորույններ: Հենց որ մենք իմացանք այդ օրենքը, որը ներգործում է (ինչպես հազարավոր անգամներ վրկնում էր Մարքսը) մեր կամքից և մեր գիտակցությունից անկախ, — ապա մենք բնության տիրակալներն ենք» (նույն տեղ, էջ 246—247): Այս սահմանումը չպետք է այն նեղ իմաստով հասկանալ, թե մարդու նպատակադիր գործունեությունը, բնության առարկաների օգտագործումը ծագում է միայն այն մտնեցից հետո, երբ ատեղծվում են ավարտուն, սիստեմավորված գիտական թեորիաներ: Այդպիսի ըմբռնումը մետաֆիզիկական-իդեալիստական է և հակասում է փաստերին: Նախ՝ այն պատճառով, որ մարդկային գիտելիքը անընդհատ զարգանում, ընդլայնվում, խորանում է, պարբերաբար ապրելով թուլւթներ: Դրա հետ միասին և դրան զուգահեռ էլ անհրաժեշտությունից առաջանում է ազատությունը, անհրաժեշտությունը վեր է ածվում ազատության: Երկրորդ՝ նման հարցերի քննարկման ժամանակ չպետք է մոռանալ գլխավորը՝ որ սկզբում գործն է եղել, պրակտիկան նախորդել է թեորիային: Խորհրդածելուց դեռ շատ առաջ մարդիկ գործել են, գործել են անգիտակցաբար, տարերայնորեն, իսկ առաջին մարդիկ՝ նույնիսկ ինստինկտորեն: Այդպես գործելով նրանք հաճախ սխալվել են, մոլորվել, անհաջողությունների մատնվել: Բայց նրանց այն գործողությունները, որոնք համընկել են իրերի և երևույթների օբեկտիվ օրինաչափությունների, այսինքն անհրաժեշտության հետ՝ մարդկանց հաջողություններ են բերել: Այդ պրակտիկ փորձից, դրանց միլիարդավոր կրկնությունից վերջին հաշվով ծագել, ձևավորվել է գիտությունը. այսպիսով, վերջինս զարգացել է պրակտիկայի շնորհիվ, նրա հիման վրա, նրա ընձեռած նյութից: Ընդհանրացնելով պրակտիկ փորձը, մարդիկ քայլ առ քայլ ճանաչել են աշխարհը, ճանաչել են սկզբում առարկաների առանձին հատկությունները, իսկ հետո՝ այդ հատկությունները պայմանավորող օրենքները: Այս պրոցեսի դիալեկտիկան այն է, որ ծագելով պրակտիկ փորձից, գիտությունն իր հերթին հսկայական ուժ է դառնում, օգնելով պրակտիկային, արագացնելով այն, օգնելով մարդկանց՝ վերափոխելու աշխարհը, ընդարձակելու արտաքին օրենքների նկատմամբ իրենց տիրապետության շրջանակը, ուղեմն և իրենց ազատությունը: Այսպիսով, ոչ թե անհրաժեշտության գիտակցությունն ինքնըստինքյան, ոչ թե վերացական թեորիական խորհրդածությունները, այլ գործուն գիտությունը և գիտական օրենքների վրա հենված գործողությունն է կազմում մարդու ազա-

տուության հիմքը: Այդ ազատությունը, հետևաբար, խորապես պատմական երևույթ է, պատմականորեն ծագող, դիալեկտիկորեն զարգացող, իմացության և պրակտիկայի փոխհերքերո՞ւթյան բեղմնավոր պրոցես:

Ազատության, որպես անհրաժեշտության ճանաչման՝ իմացաբանական իմաստն այն է, որ մարդկային իմացության պրոցեսը, որտեղ գիտելիքը գընում է երևույթից դեպի էությունը, օրենքը, եզակիից դեպի ընդհանուրը, մի օրենքից դեպի մի ուրիշ, ավելի լայն, ավելի խոր, ավելի ընդհանուր օրենքը, միաժամանակ անհրաժեշտությունից դեպի ազատություն, սահմանափակ ազատությունից դեպի լայն ազատություն, դեպի օբեկտիվ աշխարհի և մեր սեփական կյանքի վրա տիրապետություն հաստատելու պրոցես է: Լենինը զարգացնելով էնգելսի համապատասխան թեզը այս կապակցությամբ, գրում է. «Յուրաքանչյուր մարդկային առանձին անհատի գիտակցության զարգացումը և ամբողջ մարդկության կոլեկտիվ գիտելիքների զարգացումը յուրաքանչյուր քայլափոխում ցույց է տալիս մեզ, որ չիմացված «ինքնին իրը» դառնում է իմացված «իր մեզ համար», կույր, չիմացված անհրաժեշտությունը, «ինքնին անհրաժեշտությունը» դառնում է իմացված «անհրաժեշտություն մեզ համար»: Իմացաբանորեն վճռականապես ոչ մի տարբերություն չկա մեկ և մյուս փոխարկման միջև, որովհետև հիմնական տեսակետն այստեղ և այնտեղ մեկ է՝ մատերիալիստական տեսակետ, արտաքին աշխարհի և արտաքին բնության օրենքների օբեկտիվ ունակության ճանաչումն, ըստ որում և՛ այդ աշխարհը, և՛ այդ օրենքները միանգամայն իմաստալի են մարդու համար, բայց երբեք չեն կարող իմացվել միջոցով» (Լենին, հատ. 14, էջ 245—246):

Բնության և հասարակության օրենքների ճանաչումը և ազատության պրակտիկ ունակության իհարկե, կախում ունի նախ և առաջ սոցիալ-տրնտեսական նախադրյալներից և տեխնիկական միջոցներից, պայմանավորվում է տվյալ հասարակության արտադրողական ուժերից և տնտեսական ստրուկտուրայից: Բնության և հասարակության ճանաչողության պատմությունը, արտադրողական ուժերի զարգացման պատմությունը մարդկանց աստիճանական ազատագրման պատմությունն է այդ կույր, տարերային ուժերի ստրկությունից: Կրակի գյուտը, կենդանիների ընտելացումը, հողագործության ծագումըն ու զարգացումը, արհեստի, նավաշինության զարգացումը, շոգեքարշի գյուտը, էլեկտրականության, քիմիայի, ժամանակակից արտադրողական ուժերի մակարդակը մարդկային ազատության ծագման ու զարգացման պատմության նշանաձողերն են: Էնգելսն այդ պատմության սկիզբը, կրակի գյուտը մի ամբողջ հեղաշրջում է համարում, ավելի մեծ հեղաշրջում, քան շոգեշարժիչի գյուտը, որովհետև առաջինը ազատության սկիզբն է, երկրորդը՝ նրա ընդարձակումն ու զարգացումը: Մարդկային ազատության կապը բնության և հասարակության զարգացման ու դրա ճանաչողության պատմության հետ հիանալի կերպով հիմնավորել է ընկեր Ստալինը դեռ 43 տարի սրանից առաջ իր «Անարխիզմ թե սոցիալիզմ» աշխատության մեջ: «Այսպիսով, բնության զարգացման պատմությունը հիմքից խախտում է այսպես կոչված իդեալիզմը: Նույնը պետք է ասել նաև մարդկային հասարակության զարգացման պատմության մասին: Պատմությունը ցույց է տալիս, որ եթե տարբեր ժամանակներում մարդիկ տոգորվել են տարբեր մտքերով ու ցանկություներով (ընդգծումն իմն է— Հ. Ա.), ապա դրա պատճառն այն է, որ տարբեր ժամանակներում մարդիկ տարբեր ձևով են պայքարել բնության դեմ

մարդու դատողությունը որոշ հարցի նկատմամբ, այնքան ավելի անհրաժեշտությամբ կորոշվի այդ դատողության բովանդակությունը. մինչդեռ անվստահությունը, որն իր հիմքում ունի անգիտությունը և կարծես թե կամայաբար ընտրություն է կայացնում բազմաթիվ տարբեր և միմյանց հակասող հնարավոր վճիռների միջև, — դրանով իսկ ապացուցում է իր անազատությունը, իր ենթակա լինելը հենց այն առարկային, որի վրա նա պետք է իշխեր: Ազատությունը, հետևաբար, կայանում է մեզ վրա և արտաքին բնության վրա տիրապետելու մեջ, որը հիմնված է բնության անհրաժեշտությունների (Naturnotwendigkeiten) ճանաչման վրա...» (Էնգելս, Անտի-Դյուրինգ, էջ 107, 1948 թ., ռուս. հրատ.): Ճշմարիտ ազատությունը, — գրել է Մարքսը «Կապիտալ»-ում, — կարող է ծաղկել միայն անհրաժեշտության թագավորության, որպես իր հիմքի վրա (տես հատոր 3-րդ, մաս 2-րդ, էջ 357):

Այժմ՝ հարցի մյուս կողմը:

Մարքսիզմ-լենինիզմի հիմնավոր արգումենտացիայի ճնշման տակ շախջախվում է ինդետերմինիզմի նաև այն արգումենտը, թե դետերմինիզմը կարող է ջլատել մարդու կամքը, թուլացնել նրա ակտիվ գործողությունը և հանդեցնել ֆատալիզմի:

Մարդկային ձգտումների, նպատակների, կամքի ֆատալիստական ըմբռնումը, մարդկային գործողությունների հակադրումը դեպքերի պատճառականորեն-անհրաժեշտ շղթային, մարքսիզմի ֆատալիստական ֆալսիֆիկացումը — թափանցում է բուրժուական ամբողջ ռեակցիոն իդեոլոգիան՝ փրկիստիպությունը, սոցիոլոգիան, մորալը, արվեստը: Ֆատալիզմը ինդետերմինիզմի, վոլյունտարիզմի երկվորյակն է, շուտ աված վոլյունտարիզմը: Բուլշևիկները պայքարի պատմությունը ընդդեմ մարքսիզմ-լենինիզմի ու սոցիալիզմի բազմաթիվ թշնամիների՝ նարոդնիկների, Վեպալ մարքսիստների, բեռնշտայնականների, «էկոնոմիստների», մենշևիկների, էսեռների ու անարխիստների, կաուցկիականների, «ձախերի» ու չեքի՝ անհրճելիորեն ապացուցում է մեր այս թեզը: Բուրժուական ինդիվիդի, քիզնեսի, իմպերիալիստական ավանտյուրիստի մեծարումով, պատմությունը նրանց ազատ կամքի ստեղծագործությունը հայտարարելով, ժողովրդի թշնամիները մյուս կողմից արհամարհանքով են արտահայտվում նրա (ժողովրդի) մասին, համոզելով նրան չխախտել կապիտալիստական հասարակության «բնական» իրականորդը, դեպքերի «նորմալ» ընթացքը, հավատացնելով նրան, որ նա, ժողովուրդը անզոր է կապիտալիզմի անհաղթահարելի օրենքների ամենազորության հանդեպ և այլն և այլն: Դետերմինիզմի հակադրումը մասսաների ակտիվ գործունեությանը, որ անց են կացնում կապիտալիզմի գովերգումները՝ իրականում հակադիտական և ռեակցիոն է:

Իրականում ուղիղ հակառակն է. միայն դետերմինիզմն է հնարավորություն տալիս մեզ հասկանալու որևէ գործողության ծագումն ու բնույթը, նրա պատճառները: Այս առիթով Պլեխանովը զարգացնում է հետևյալ միտքը. անկախ նրանից, թե ինչպես են պատմության գործիչները պատճառաբանել իրենց ակտիվ գործունեությունը՝ արդյո՞ք նրանք իրենց համարել են աստծու առաքյալներ (ինչպես կարծել է Մահմեդը), թե՞ անհաղթահարելի ճակատագրի ընտրյալներ (ինչպես համոզված էր Նապոլեոնը), թե՞ պատմական անհրաժեշտության անհաղթահարելի տենդենցների արտահայտիչներ (ինչպես

19—20 դարերի մի շարք գործիչներ) — այդ բոլորը հավասարապես եռանդուն գործունեություն են ծավալել այն անհրաժեշտությունը իրագործելու համար, որի արտահայտիչներ նրանք իրենց համարել են: Նրանք հավասարապես ցուցաբերել են կամքի մեծ ուժ, ասում է Պլեխանովը, խորտակելով այն բոլոր թղթե տնակաները, որ նրանց ճանապարհին հարուցել են զանազան գավառների Համլետներն ու Համլետիկները: Պլեխանովն ապացուցում է, որ ֆատալիզմը հակասում է պատմական փաստերին: Ճիշտ է Պլեխանովի այն միտքը, թե դետերմինիզմը չի ժխտում ակտիվ գործունեության հնարավորությունը, որովհետև պատմական շատ գործիչներ և, նախ և առաջ, ռևոլյուցիոն մարքսիստները լինելով համոզված դետերմինիստներ՝ կամքի վիթխարի ակտիվություն են դրսևորել և բացարձակորեն իրենց ակտիվությամբ գերազանցել են նրանց, ովքեր կանգնած են եղել այսպես կոչված կամքի ազատության տեսակետին: Պլեխանովի ձևակերպումը խիստ հետաքրքրական է. «Անհրաժեշտության գիտակցումը, — գրել է Պլեխանովը, — գործնականում հիմնալիորեն համատեղվում է ամենանեղացի գործողության հետ: Այսպես է եղել առնվազն պատմության մեջ մինչ այժմ: Կամքի ազատությունը ժխտող մարդիկ հաճախ դերազանցել են իրենց բոլոր ժամանակակիցների սեփական կամքի ուժով և ամենից շատ պահանջներ են ներկայացրել դրան», (Գ. Վ. Պլեխանով. Պատմության մեջ անհատի դերի հարցի շուրջը, էջ 10): Սակայն Պլեխանովը և նրա մենշևիկ բարեկամները հավատարիմ չմնացին այդ թեզին, գլորվելով նույն ֆատալիզմի դիրքերը, ինչպես կտեսնենք հետագայում:

Բուլճերիկյան պարտիայի մեծ փորձը վկայում է այդ պարտիայի և ռևոլյուցիոն բանվոր դասակարգի կամքի հսկայական ուժի մասին, եթե այդ կամքը նույն ուղղությամբ է գործում, ինչ ուղղությամբ գործում է պատմական անհրաժեշտությունը, դասակարգային պայքարի, տնտեսական ու քաղաքական կյանքի օրինաչափությունը, և եթե այդ կամքը կազմակերպված է բուլճերիկյան պարտիայի կողմից և ուղղված է դեպի կոմունիզմի մեծ նպատակը: Եվ սա հասկանալի է. եթե պարտիան, նրա առաջնորդներն ու գործիչները քաջ գիտակցում են, որ տվյալ երևույթը անպայման և անհրաժեշտաբար պետք է կատարվի, և եթե նրանք սուբեկտիվորեն համակրում են ու կրթոտ կերպով ցանկանում այդ երևույթի առաջացումը, ապա այդ պետք է միայն ուժեղացնի նրանց եռանդը տվյալ երևույթի առաջացմանը աջակցելու և արագացնելու գործում: «Այստեղ, — գրում է Պլեխանովը, — ամեն ինչ կախված է նրանից, թե արդյո՞ք իմ սեփական գործունեությունը կազմում է անհրաժեշտ դեպքերի շղթայի անհրաժեշտ օղակը: Եթե այո, ապա ես առավել ևս քիչ տատանումներ կունենամ և առավել ևս վճռականորեն կգործեմ» (նույն տեղ):

Վերցնենք հետևյալ օրինակը: Անցյալ դարի 80—90-ական թվականներին ռուսական մարքսիստները լենինի գլխավորությամբ վճռական գաղափարական-քաղաքական պայքար էին տանում մարքսիզմի հակառակորդներ նարոդնիկների ու Վեգալ մարքսիստների դեմ, որոնք կանգնած էին այսպես կոչված սուբեկտիվ սոցիոլոգիայի, ուրեմն և վոլյունտարիզմի տեսակետին: Մարքսիստներն ապացուցում էին, որ պատմական պրոցեսը Ռուսաստանում անկախ մարդկանց կամքից (բայց, իհարկե, ոչ առանց նրանց գործունեու-

¹ «Եվզալ մարքսիստները» հայացքները հենց վոլյունտարիզմի ու բուրժուական օբեկտիվիզմի, ըստ էության ֆատալիզմի մեխանիզմ էր:

թյան) տանում է դեպի ճորտատիրական հարաբերությունների զայրացումը, կապիտալիստական հարաբերությունների զարգացումը և, իհարկե, վարձու բանվորների շահագործումը: Սա պատմական անհրաժեշտությունն էր: Այնուհետև, նրանք ասում էին, որ այդ հարաբերությունների զարգացումը անհրաժեշտորեն հանգեցնում է արտադրության կենտրոնացմանը, իսկ դրա հետ միասին՝ աշխատանքի ընդհանրացմանը, բանվոր դասակարգի աճմանն ու համախմբմանը որպես նոր, լուրջ հասարակական-քաղաքական ուժի: Այստեղից, — ապացուցում էին մարքսիստները, — անխուսափելիորեն պետք է սրվի դասակարգերի՝ աշխատանքի և կապիտալի, պրոլետարիատի և բուրժուազիայի անտառյուստական պայքարը և որպես սրա անհրաժեշտ հետևանք՝ պրոլետարիատի ռևոլուցիոն շարժումն ընդդեմ կապիտալիստական շահագործման, հանուն սոցիալիզմի: Սա էլ պատմական անհրաժեշտությունն էր: Պատմության զարգացման ընթացքով բանվոր դասակարգի հետ միասին հանդես եկան մարքսիզմն ու մարքսիստները: Սրանք ամենից լավ և ամենից ճիշտ հասկացան կապիտալիզմի զարգացման ընդլնվելը, ընթացքն ու ուղղությունը, ճանաչեցին կապիտալիզմը սոցիալիզմի վերափոխելու պատմական անհրաժեշտությունը՝ և ճանաչելով այդ՝ կրթող կերպով ցանկացան ու գործունեություն ծավալեցին այդ պրոցեսի ամենաարագ կատարման համար: Մարքսիստները իրենց բոլոր ուժերով գիտակցաբար ու կազմակերպվածորեն ծառայում են այդ պրոցեսին: Սա ազատությունն է, ընդ որում անհրաժեշտությունից բխած ազատությունը: Մարքսիստներն իրենց պարտքն են համարում գնալ բանվոր դասակարգի մեջ, լուսավորել նրան, վազմակերպել նրա տարերային շարժումն ընդդեմ կապիտալիզմի, վերածել այն հզոր, գիտակցական կոմունիստական շարժման: Այսպես վարվելով, մարքսիստները գործում էին և գործում են գործին տեղյակ լինելով, իսկ ազատությունն էլ հենց այդ է, ինչպես գիտենք էնգելսից: Քանի դեռ ռուս ռևոլուցիոներները չէին մշակել իրենց համար պարզ և ամբողջական թեորիա, ծրագիր ու տակտիկա, նրանք, իսկ նրանց հետ միասին նաև Ռուսաստանի աշխատավորները կալվածատիրական-կապիտալիստական հասարակակարգի և միահեծանության, այսինքն կույր անհրաժեշտության ստրուկներն էին: Մարդիկ տառապում էին ուտոպիական ֆանտազիաների մշուշում, երազում էին լավագույն ապագայի մասին: Կույր է անհրաժեշտությունը, քանի այն ճանաչված չէ: Պատմական նույն անհրաժեշտությամբ, ինչ անհրաժեշտությամբ որ զարգանում է կապիտալիզմը, հանդես եկան մարքսիստները: Նրանք ռևոլուցիոներներին և ամբողջ բանվոր դասակարգին բերեցին լույս: Հերոսական ջանքերով, մտքի եռանդուն աշխատանքով նրանք մշակեցին մարքս-լենինյան գիտական աշխարհայացքը՝ դիալեկտիկական ու պատմական մատերիալիզմը և գիտական սոցիալիզմը: Նրանք մշակեցին պրոլետարիատի շարժման թեորիան, ծրագիրը, տակտիկան, սոցիալիզմը միացրին քանվորական շարժման հետ, ստեղծելով ռևոլուցիոն մարքսիստական պարտիա: Դեկավարելով Ռուսաստանի բանվորական շարժումը, կազմակերպելով և ուղղություն տալով բանվոր դասակարգի ռևոլուցիոն կամքին, տանելով նրան այն ուղղությամբ, որով զարգանում էր (անկախ այդ կամքից) Ռուսաստանի օբեկտիվ իրականությունը՝ բուլճերիկների հերոսական պարտիան մեծագույն հաղթանակի բերեց պրոլետարիատին և աշխատավոր գյուղացիությանը: Սա նույնպես ազատությունն է: Մարքսիստների գործունեությունը,

հակառակ սուբեկտիվ սոցիոլոգների և ամեն տեսակի ուսուցիչստների, ինչպես և հակառակ պահպանողականների, ֆատալիստների ու ռեակցիոներների, գոյություն ունեցող իրականության առաջ ստրկամտորեն խոնարհվողների՝ ավարտվեց փայլուն հաղթանակով, որովհետև այդ գործունեությունը ճիշտ էր արտացոլում անհրաժեշտության և ազատության դիալեկտիկան։

Վերջիններ մի այլ օրինակ։ Երբ երկրորդ համաշխարհային պատերազմի ընթացքում և վերջում գերմանա-ֆաշիստական բանակների ու ֆաշիստական կարգերի ջախջախումով՝ Լեհաստանում, Չեխոսլովակիայում, Բուլղարիայում, Ալբանիայում, Ռումինիայում, Հունգարիայում— Սովետական Միության վճռական աջակցությամբ ծագեցին ժողովրդա-դեմոկրատական կարգեր, ապա դա պատմական անհրաժեշտություն էր. կոմունիստները ղեկավարվելով մարքսիզմ-լենինիզմի ուսմունքով, թացատրում են ժողովուրդներին, որ ֆաշիզմի խորտակումը չի կարող նշանակել հասարակ վերադարձ դեպի նախապատերազմյան կարգերը, հնի հասարակ վերականգնումը. չէ՞ որ հենց այդ կարգերն էին, որ ծնել էին ֆաշիզմն ու պատերազմը։ Պետք է նայել դեպի առաջ, ասում են կոմունիստները, և ոչ թե դեպի հետ. շարժումը կապիտալիզմից դեպի դեմոկրատիզմն ու սոցիալիզմը կենսական անհրաժեշտություն է։ Կոմունիստները գործում էին և գործում են հենց այդ ուղղությամբ. նրանց ծրագիրն ու տակտիկան համընկնում է ժողովուրդների պատմական զարգացման և կենսական շահերի հետ։ Արիաքար ու ազատ կոմունիստները ծառայում են պատմական մեծ պրոգրեսին։ Ազատ՝ որովհետև նրանք գործում են ոչ թե կամայաբար, այլ իրենց գործի անհրաժեշտության և արդարացիության լիակատար գիտակցությամբ, պատմության առաջ, միլիոնավոր հասարակ մարդկանց առաջ իրենց պատասխանատվության, իրենց խնդիրների լիակատար գիտակցությամբ։

Ուստի և նոր դեմոկրատիայի երկրներում ռեակցիոներները և նրանց իմպերիալիստական հովանավորները կրախի մատնվեցին, փակ այդ երկրների ժողովուրդները կոմունիստական պարտիաների ղեկավարությամբ հաջողությամբ կառուցում են իրենց մոտ սոցիալիզմը— մի հասարակություն, որն ազատ է կալվածատերերի ու կապիտալիստների տիրապետությունից ու արտաքին իմպերիալիստների լծից։ Այսպիսով, ազատությունը նվաճվեց մեծագույն ջանքերի միջոցով։ Կոմունիստական պարտիաների գործողություններում ոչ մի գրամ ավանտյուրիզմ չկա, նրանց դեմոկրատիզմի մեջ ոչ մի կաթիլ պասսիվություն, հայեցողականություն, ֆատալիզմ չկա։ Համոզված լինելով, որ քանի որ դեմոկրատիան ու սոցիալիզմը պատմական, տնտեսական, քաղաքական անհրաժեշտություն է դարձել, ապա այդ անհրաժեշտությունը պետք է իրագործվի,—կոմպարտիաները սակայն պարզ գիտակցում են և հիանալի հասկանում, որ պատմությունը ավտոմատիկ պրոցես չէ, որ անհրաժեշտությունը ինքնահոսով, տնտեսական պայմանների ինքնազարգացմամբ, կամ ժողովուրդների տարերային շարժումով չի վերածվում ազատության. նոր հասարակարգը, որքան էլ որ նա պատմականորեն անհրաժեշտ լինի՝ ստիպված է հաստատել իրեն՝ կապիտալիստական հասարակության բազմաթիվ պաշտպանների դեմ մղված անողորմ և կազմակերպված պայքարում։ Գիտակցելով այս անհրաժեշտությունը, կոմպարտիաները լուսավորում են և կազմակերպում բանվոր դասակարգին, բոլոր աշխատավորներին ու պրոգրեսիվ ուժերին, ծավալում նրանց ռեվոլյուցիոն ձեռնբերեցությունը, եռանդը, վիթխարի

նշանակություն տալիս մասսաների կամքին, եթե (կամ քանի որ) այդ կամքը ուղղված է պատմական անհրաժեշտության գծով և համընկնում է նրա հետ. իսկ այդ անհրաժեշտությունը տանում է դեպի կոմունիզմ: Կոմունիստները մասսայական հերոսության, անձնագործ պայքարի են կոչում մասսաներին ընդդեմ իմպերիալիստների և նրանց գործակալների. կոմունիստներն իրենք են ռևոլյուցիոն հերոսության և անձնագործության առաջին օրինակները տալիս: Նայեցեք սովետական միլիոնավոր մարդկանց մասսայական հերոսություններին սոցիալիստական ու գիտության բնագավառներում, շինարարության ու ռազմի դաշտերում: Կարդացեք ֆրանսիական կոմունիստների մահամեծք նամակները ֆաշիստական լազերներից: Այստեղ արևի լույսի պես գունեղ շողշողում է նրանց գիտակցության պայծառությունը, նպատակների վեհությունը, գործի հաղթանակի նկատմամբ ունեցած անդրդիելի հավատը և պողպատե կամքը:

Այս է անհրաժեշտության և ազատության ներքին դիալեկտիկան: Մարքսիզմ-լենինիզմի գաղափարական-քաղաքական հակառակորդները, նրա քնննադատները չեն կարող, ավելի ճիշտ՝ չեն ուզում հասկանալ այս դիալեկտիկան. դրան խանգարում են նրանց դասակարգային շահերն ու դասակարգային կոլորությունը: Դժվար չէ համոզվել, թե որքան պրիմիտիվ են պատկերացնում իդեալիստներն ու մետաֆիզիկները ազատության ու անհրաժեշտության հարաբերակցությունը, և որքան ճշմարտացի է բացահայտում դրա էությունը մարքսիզմ-լենինիզմը: Կամքի անազատությունը չի նշանակում գործողության անազատություն, այլ ցույց է տալիս, թե ի՞նչ ուղղությամբ պետք է գործի ռևոլյուցիոն դասակարգի կամքը. իր հերթին գործողության ազատությունը չի նշանակում օրինաչափության, աշխարհի օբեկտիվ անհրաժեշտության խախտում, այլ նշանակում է գործին տեղյակ լինելով, ռադիոնալ կերպով ընտրել այն պատճառները, որոնց վրա ներգործելով, պետք է հանգել հենց նույն այդ անհրաժեշտությունից բխող նպատակին: Հիշեցեք էնգելսի մտքերը. մարդը, պարտիան ազատ են այն ժամանակ միայն, երբ վճիռները կայացնում են գործի լիակատար գիտակցությամբ, խնդիրների լուծման պայմանների գիտակցությամբ. և ընդհանրապես. ազատությունը չի կարող լինել ալիստեղ, որտեղ մարդիկ անվտանգ են գործում, չիմանալով, թե ինչ վնդիրներ պետք է դնել և լուծել տվյալ պայմաններում և ինչ եղանակներով ու ուղիներով պետք է հասնել դրանց լուծմանը: Այս դեպքերում մարդը ստատանվելու է բազմաթիվ հակասական հնարավոր լուծումների միջև և անխուսափելիորեն դրսևորելու է իր լիակատար անգործությունն ու անազատությունը, իր ստորովի լինելը՝ այն երևույթին, որի վրա նա պետք է իշխեր:

Միայն հարցի դիալեկտիկո-մատերիալիստական ըմբռնման հիման վրա է բացահայտվում մարքսիստական այն խորագույն թեզի իմաստը, որ մենք արդեն հիշատակել ենք, այն է՝ ռորքան ավելի է ազատ մարդու դատողությունը որևէ հարցի նկատմամբ, այնքան ավելի անհրաժեշտությամբ կորոշվի այդ դատողության բովանդակությունը: Վելլունտարիստները, հավասարապես բուրժուական օբեկտիվիստներն ու վոլգար մատերիալիստներն իրենք ու գաղափարները բոլորովին թարս են պատկերացնում. նրանց պատկերացումով՝ որքան մեծ է օբեկտիվ անհրաժեշտությունը, որքան շատ անխուսափելիությամբ է առաջանալու տվյալ պրոցեսը, այնքան քիչ բան է մնում մարդուն անելու: Այս պատկերացումը, իհարկե, հանգեցնում է անհեթեթության.

դուրս է գալիս, որ պատմական դեպքերը կարող են տեղի ունենալ նաև այն ժամանակ, եթե մարդիկ ձեռքերը ծալեն և նստեն: Հենց այսպիսի գոհճիկ, պրիմիտիվ արգամենտացիայով էլ փորձում էին մարքսիզմը քննադատել տխրահռչակ Շտամլերը և մյուս նեոկանտականները, նարոզնիկները, բեռնշտայնականները, լեզալ մարքսիստները, էկոնոմիստները և մյուս ունիտար-միստները: Այդ բոլորին մենք դեռ վանդրադառնանք:

Իրականում գործը հակառակ ծայրից պետք է սկսել. մարքսիստական անալիզը ցույց է տալիս, որ որևէ խնդրի լուծման օբեկտիվ անհրաժեշտության աստիճանը հակառակ համեմատական չէ, այլ ուղիղ համեմատական է մարդկանց դատողությունների ճշտության և գործի ակտիվության նկատմամբ. որքան շատ անհրաժեշտ է տվյալ խնդրի լուծումը և որքան ճիշտ է ու ճշգրիտ այդ անհրաժեշտության իմացությունը, որքան բազմակողմանի ենք մենք հաշվի առել նրա բնույթն ու ուղղությունը, այսինքն որքան ավելի ենք մենք հավատացած մեր գործողությունների անհրաժեշտության մեջ, այնքան ավելի ազատ է մեր գործողությունը, այնքան ավելի վճռական ու վստահ մենք պիտի գործենք, այնքան ավելի մեծ հաջողությունների կհասնենք. ուրեմն և ավելի մեզ ազատության կհասնենք:

* * *

Տվյալ ժողովրդի, կամ դասակարգի, կամ ազգի ազատության աստիճանը, այսինքն բնական և հասարակական ուժերի վրա նրա տիրապետության աստիճանը, ասացինք մենք, որոշվում է այդ հասարակության արտադրողական ուժերի ձեռք բերված մակարդակով, նրանց օգտագործման եղանակով և բնական ու հասարակական գիտելիքների ամբողջությամբ: Սակայն սա լիակատար ճշմարտությունը չէ, սա հարցի շատ ընդհանուր, վերացական ձևակերպումն է. դիալեկտիկական պահանջում է կոնկրետ ճշմարտություն՝ քննարկել երևույթը իր պատմական զարգացման կոնկրետ հանգամանքների կապակցությամբ: Տեխնիկական միջոցների և, ընդհանրապես, հասարակության արտադրողական ուժերի հասարակ զարգացումը, գիտելիքների հասարակ կուտակումը ինքնին, ավտոմատիկ կերպով դեռ չի նշանակում մարդկանց ազատության իրագործում և ընդարձակում՝ անկախ հասարակական խմբերից, դասակարգերից: Նման գոհճիկ-մեխանիստական, բուրժուական-օբեկտիվիստական պատկերացումը արմատապես թշնամի է մարքսիզմ-լենինիզմին և վաղուց մերկացված է սրա կողմից: Հենց նման ձևով էին պատկերացնում հարցը կապիտալիզմի բոլոր ապոլոգետները, վուլգար էվոլյուցիոնիստները, ալպես կոչված պրոգրեսի թեորիայի ներկայացուցիչները և իմպերիալիզմի նողկալի գործակալներ աջ սոցիալիստները: Նրանք պնդում են, թե կապիտալիզմի զարգացումը, հարստության կուտակումը, գիտության առաջնադասումը ինքնին ազատագրում է ստրկությունից բոլոր մարդկանց, որ աստիճանաբար ու անշեղորեն կապիտալիզմը ուժեղացնում է մարդկանց իշխանությունը բնության նկատմամբ և դարձնում նրանց ազատ. այստեղից նրանք հետևեցնում են, որ ավելորդ բաներ են աշխատավորների դասակարգային պայքարը, սոցիալական ցնցումները, ռևոլյուցիոն բռնությունները:

Ազատություն, հավասարություն, պրոգրես և բոլոր նման բաները պատմական կատեգորիաներ են, ունենալով ամեն անգամ որոշակի դասակարգային բովանդակություն: Ուստի և մարքսիզմ-լենինիզմը պահանջում է վեր հանել

տվյալ էպոխայում, օրինակ, ազատություն հասկացողության դասակարգային բովանդակությունը, այսինքն՝ պարզել, թե ինչ հարաբերությունների հողի վրա է ձևոք բերվում տվյալ ազատությունը, ո՞ր դասակարգն է կերտում այդ հարաբերությունները, ո՞ր դասակարգից, ինչ տեսակի ազատություն, ով և ինչպես է նվաճում: Մարքսի մեթոդն ամենից առաջ այն է, — գրել է Լենինը «Օտար դրոշի տակ» հոդվածում, — որպեսզի հաշվի առնվի պատմական պրոցեսի օբեկտիվ բովանդակությունը տվյալ կոնկրետ մոմենտում, տվյալ կոնկրետ իրադրության մեջ, որպեսզի ամենից առաջ ըմբռնվի, թե ո՞ր դասակարգի շարժումն է կազմում հնարավոր պրոգրեսի գլխավոր զսպանակը այդ կոնկրետ իրադրության մեջ» (Լենին, հատոր 21, էջ 123, 4-րդ հրատ.: Ընդգծումը իմն է — Ն. Ա.): Լենինն ու Ստալինը սովորեցրել են մեզ այն ճշմարտությունը, որ ազատության, դեմոկրատիայի, խաղաղության կողմնակիցները միշտ էլ խաբված կլինեն ստրկության, ռեակցիայի կողմնակիցներից, եթե չսովորեն պետությունների, պարտիաների, գործիչների դիմաձգիտական, բարոյադիտական, քաղաքական և այլ ծրագրերի ու հայտարարությունների տակ տեսնել դրանց դասակարգային բովանդակությունը:

Պատմությունը և կապիտալիստական, կախյալ ու գաղութային երկրների ժողովուրդների ժամանակակից կյանքը ցույց են տալիս, որ չնայած արտագրողական ուժերի զարգացման բարձր մակարդակին և մակրո ու միկրոաշխարհի օրենքների մասին ահագին գիտելիքներին, միլիոնավոր աշխատավորներ մնում են դեռ իսկական անբուժվածքներ, ազատությունը միայն միլիոնատերերի, հարուստների մի բուռն խմբի բաժինն է: Եվ իրոք, մի հասարակության մեջ, որը բաժանված է անտագոնիստական դասակարգերի, որտեղ գոյություն ունի դասակարգային ու ազգային ճնշում և կեղեքում, հսկայական ունեցվածքային, սոցիալական, քաղաքական անհավասարություն, դասակարգային ու ազգային անհաշտ պայքար, — այդպիսի հասարակության մեջ ընդհանուր ազատություն և ընդհանրական հավասարություն լինել չի կարող և չկա: Նման հասարակության մասին չի կարելի վերացականորեն դատել. մարքսիզմ-լենինիզմը պահանջում է բացահայտել ազատության ու հավասարության դասակարգային ու ազգային բովանդակությունը: Մերկացնելով բուրժուական օբեկտիվիստներին, վերդասակարգային մոտեցման պրոպագանդիստներին, Լենինը գրել է. «Մենք ասում ենք բանվորներին ու գյուղացիներին. դիմակազներ՝ արեք այդ ստախոսներին, բացեք այդ կուլյրերի աչքերը: Հարցրե՛ք:

— Ո՞ր սեռի հավասարությունը ո՞ր սեռի հետ:

— Ո՞ր ազգին ո՞ր ազգի հետ:

— Ո՞ր դասակարգին ո՞ր դասակարգի հետ:

Ազատություն ո՞ր լծից կամ ո՞ր դասակարգի լծից» (Լենին, հատոր 24, էջ 518, ընդգծումն իմն է — Ն. Ա.):

Կապիտալիստական և գաղութային երկրներում բանվորները, գյուղացիները, աշխատավոր ինտելիգենցիան կաշկանդված են հազար ու մի շղթաներով. կաշկանդված են տիրող ունեւոր դասակարգերի, պետության, հասարակության տարերային ուժերի կողմից: Աշխատավորները այնպես են շղթայված կապիտալիստին, հողի, քաղաքի, փողոցի սեփականատիրոջը, տնատիրոջը, գործատիրոջը, ինչպես Պրոմեթեոսը՝ ժայռին: Իմպերիալիզմի էպոխայում մոնոպոլիստական կապիտալն փր ամբողջ հզորությամբ ու դաժանու-

թյամբ փոփոխ է գալիս աշխատավորների գլխին: Աշխատավորների ձեռքով ստեղծած նյութական հարստությունը հանդես է գալիս իր ստեղծողների նկատմամբ որպես արտաքին, կործանիչ թշնամի ուժ, որը պարբերաբար փոփոխ է գալիս աշխատավորների գլխին կատաստրոֆիկ ու կործանիչ հետեւանքներով, տնտեսական կրիզիսների, մարդաշինջ պատերազմների, համաճարակների, դործազրկության ձևով: Բնության տարերային ուժերը հանդես են գալիս երաշտի, անբերրիության ու այլ ձևերով: Մարդիկ չեն կարող ըստ իրենց ցանկության կարգավորել, իրենց նպատակներին ենթարկել ոչ միայն հասարակական պրոցեսները, այլև բնության, դրան խանգարում են մասնավոր սեփականության տիրապետությունը, մոնոպոլիաների, մասնավոր հարստացման պաշտպանները, անարխիան ու դաժան կոնկուրենցիան: Ի՞նչ ազատության մասին կարող է խոսք լինել նման պայմաններում:

Միանգամայն ակնհայտ է, որ իսկական ազատությունը կարող է ծագել միայն կապիտալիզմի և նրա այդ բոլոր ատրիբուտների ոչնչացումով, բնության ու հասարակության ուժերի պլանաչափ կարգավորումով՝ ամբողջ հասարակության շահերի համար, ճնշման ու կեղեքման քոլոր ձևերի ոչնչացումով, տնտեսական, քաղաքական, դասակարգային, ազգային ճնշման, կեղծ ստրկացման ոչնչացումով: Միայն այս պայմաններում կարելի է և պետք է խոսել ազատության մասին քառի իսկական իմաստով: Բայց այս նշանակում է, որ ազատությունն իր բուն իմաստով համընկնում է սոցիալիզմին, կոմունիզմին հետ: Ազատություն նշանակում է կապիտալիստական արտադրանքի ռեզոլուցիոն, արմատական ոչնչացում, ամբողջ կապիտալիստական և գաղութային կյանքի արմատական վերակառուցում, արտադրության ու հասարակության սոցիալիստական կազմակերպում:

Ահա թե ինչու համար մեր էպոխայի պատմական շարժման ամենակենսական, ամենակարևոր անհրաժեշտությունը դեմոկրատիայի, խաղաղության, սոցիալիզմի, ուրեմն և ազատության նվաճման անհրաժեշտությունն է: Այդ ապացուցված է սոցիալիզմի միլիոնավոր նվաճումներով մեր մեծ հայրենիքում, ժողովրդական դեմոկրատիայի հաստատումով Կենտրոնական և Հարավ-արևելյան Եվրոպայի մի շարք երկրներում և Չինաստանում, Հյուսիսային Կորեայում, Վյետնամում, սոցիալիզմի համար միջազգային քանվորական շարժման ուժեղացումով: Այդ ապացուցված է իմպերիալիզմի հետագա փտումով, իմպերիալիզմ, որը — մի քառորդ դարի ընթացքում — ծնել է երկու հրեշավոր համաշխարհային պատերազմ, մի շարք կործանիչ տնտեսական կրիզիսներ, ֆաշիզմ և այլ հրեշավոր երևույթներ: Կապիտալիստական մասնավոր սեփականության, արտադրության կապիտալիստական սխտեմի ռեզոլուցիոն ոչնչացումը, պրոլետարիատի դիկտատուրայի հաստատումը, արտադրության սոցիալիստական պլանային կազմակերպումը — իսկական ազատության առաջնակարգ և անհրաժեշտ նախադրյալներն են, անհրաժեշտ պայմանները:

Մարքսիզմ-լենինիզմի վեհությունը, ուժն ու կենսականությունն այն է, որ նա ապացուցեց մարդու կամքը պատմական անհրաժեշտությունը, նրան շրջապատող պայմաններին իդեալիստորեն հակադրելու ամբողջ անհեթեթությունը: Մարքսիզմ-լենինիզմը սովորեցնում է, որ իսկական ազատությունը ձեռք պիտի բերվի պատմական որոշ պայմանների առկայությամբ և նրանց հիման վրա ու մատնանշեց, թե որոնք են այդ պայմանները, որոնց նվաճումով մարդկությունը կարող է և պետք է հասնի ազատության, և ինչպես

պետք է նվաճել այդ պայմանները: Մարքսիզմ-լենինիզմը, հետևաբար, ցուցաբերեց ոչ միայն կանխատեսության իր ուժը, այլև մոբիլիզացնող, կազմակերպող, վերափոխող իր հզորությունը: Մարքսիզմ-լենինիզմը մեր ժամանակների պատմական մեծագույն անհրաժեշտություն՝ կոմունիզմի գիտական թեորիան, ծրագիրն ու տակտիկան է: Կապիտալիզմն իր սեփական ընթացքով նախապատրաստել է իր կործանումը. խոշոր արտադրությունը և աշխատանքի հանրայնացումը այլևս չեն տեղավորվում կապիտալիստական մասնավոր սեփականության նեղ շրջանակներում, որոնք խստորեն խանգարում են մարդկության հետագա պրոգրեսին: Կապիտալիզմը ծնում է անհեթեթություն անհեթեթության հետևից. բանվոր դասակարգի կենսապայմանների անընդհատ վատթարացում և աղքատացում, մանր տնտեսությունների քայքայում, իմպերիալիստական, պետությունների՝ մոնոպոլիաների այդ գործադիր կոմիտեների ավանտյուրիստական քաղաքականությունը — այս բոլորը վկայում են կապիտալիստական հասարակության գոյության անմտության մասին: Իմպերիալիստական բուրժուազիան սկզբում գերմանո-իտալո-ճապոնական, իսկ ներկայումս անգլո-ամերիկյան իմպերիալիստների գլխավորությամբ իր խելացնոր քաղաքականությամբ նետվում է մի ավանտյուրայից դեպի մյուսը: Մինչդեռ կապիտալիզմի կողքին, նրան հակառակ և նրա դեմ վճռական պայքարելով՝ պատմական անհրաժեշտությամբ ՍՍՌՄ-ում աճել և հաղթանակել է սոցիալիստական հասարակակարգը, որը դիզանո քայլերով առաջ է ընթանում դեպի կոմունիզմը: Սոցիալիստական հասարակական և պետական հանրակարգը ապացուցել է իր առավելությունները ինչպես խաղաղ շինարարության ապարեզում, նույնպես և Հայրենական պատերազմի ասպարեզում: Մեր դարը — կոմունիզմի դարն է: Կապիտալիզմի կործանումը և կոմունիզմի հաղթանակն ամբողջ աշխարհում հավասարապես պատմական անխտափելիություն է: Այս անհրաժեշտության նոր ապացույցը ժողովրդագրեմոկրատական կարգերի հաղթանակն է Արևմուտքի և Արևելքի մի շարք երկրներում, որոնք ՍՍՌՄ-ի օգնությամբ սոցիալիզմ են կառուցում: Սոցիալիզմն այժմ բոլոր երկրների օրակարգում է դրված (Ժդանով). բոլոր ճանապարհները տանում են դեպի կոմունիզմ (Մոլոտով):

Ի՞նչ իսկապես. մեր երկրում արդեն ունի կերպով գծագրվում են կոմունիզմի կոնտուրները: Մեզ մոտ իրագործվում է այն, ինչ իր ժամանակին մեծագույն խորաթափանցությամբ և գիտական հեռատեսությամբ կանխատեսել են գիտական կոմունիզմի հիմնադիրները՝ Մարքսը և Էնգելսը, և զարգացրել են նրանց մեծագույն աշակերտները, մեր դարաշրջանի հանճարներ Լենինն ու Ստալինը: Մասնավոր սեփականության ոչնչացմամբ ու արտադրության պլանային կազմակերպմամբ, շահագործող դասակարգերի լիկվիդացումով ըստ Էնգելսի՝ «Մարդկանց շրջապատող և մինչև այժմ նրանց վրա իշխած կենսապայմանները կենթարկվեն մարդկանց իշխանությանը և հսկողությանը, մարդիկ առաջին անգամ դառնում են բնության իսկական և գիտակից հրամայողները, այն չափով, որ չափով նրանք դառնում են իրենց սեփական հասարակական հարաբերությունների տերը: Նրանց սեփական հասարակական գործողությունների օրենքները, որ մինչև այժմ հակադրվում են մարդկանց, որպես խորթ, նրանց վրա իշխող բնության օրենքներ՝ լիակատար գիտակցությամբ գործադրվում են նրանց կողմից, և, հետևաբար, ենթարկվում նրանց տիրապետությանը: Մարդկանց մինչև այժմ ասե՛ն վերևից՝ բնության ու

պատմության կողմից շնորհած հասարակակարգը կլինի այն ժամանակ նրանց սեփական ազատ գործը: Պատմության վրա իշխած օրեկտիվ արտաքին ուժերը կենթարկվեն մարդու հսկողությանը. և միայն այն ժամանակ մարդիկ կսկսեն իրենք միանգամայն դիտակցաբար ստեղծել իրենց պատմությունը, միայն այն ժամանակ նրանց կողմից շարժման մեջ դրվող հասարակական պատճառները կունենան զգալի և շարունակ աճող չափով ցանկալի հետևանքներ:

Դա մադկության բռնիքն է անհրաժեշտության քաղաքականությանից դեպի ազատության քաղաքականությունը» (էնգելս. «Անտի-Դյուրինգ», էջ 267: Հնդգծումն իմն է— Հ. Ա.):

ՍՍՄՄ-ում համաշխարհային պատմական այս մեծ թռիչքը իրագործվել է Հոկտեմբերյան Սոցիալիստական Մեծ ռևոլյուցիայից սկսած: Սոցիալիստական հասարակակարգի մարդիկ համախմբված մեկ ընդհանուր պետական և հասարակական օրգանիզմի մեջ, բուլշևիկյան պարտիայի ծրագրով ու ղեկավարությամբ ոչնչացրել են շահագործող դասակարգերին և քնության ու հասարակության ուժերի տարերային հետևանքները: ՍՍՄՄ-ում հաստատված է արտադրության միջոցների սոցիալիստական սեփականություն և սոցիալիստական արտադրասխստեմ, ոչնչացված է մարդու շահագործումը մարդու կողմից. չկան կրիզիսներ, գործազրկություն, աստիճանաբար շնչվում են գյուղի և քաղաքի, մտավոր և ֆիզիկական աշխատանքի տարբերությունները: Սովետական բանվոր դասակարգը, կոլեկտիվային գյուղացիությունը, ինտելիգենցիան— սովետական ամբողջ ժողովուրդը բարոյաքաղաքական մեծագույն միասնություն է ապրում. զարգացնելով աշխատանքի սոցիալիստական մեթոդները, նա հաջող կերպով կատարում է հետպատերազմյան ստալինյան հնգամյա պլանը ժամկետից շուտ: Սոցիալիզմի զարգացումը մեր երկրում՝ էկոնոմիկայի, քաղաքականության, կուլտուրայի բնագավառներում համաշխարհային պատմական մի թռիչք է անհրաժեշտության թափափուրությունից դեպի ազատության թափափուրությունը: Մեր տնտեսական զարգացման յուրաքանչյուր քայլ ուժեղացնում է սովետական ժողովրդի տիրապետությունը բնության ու հասարակության տարերային ուժերի նկատմամբ:

Այս հողի վրա այնպիսի հզոր շարժիչ ուժեր են հանդես եկել մեզ մոտ, ինչպիսիք են՝ մեր ժողովրդի բարոյաքաղաքական միասնությունը, բոցաշունչ սովետական հայրենասիրությունը, սովետական ժողովուրդների լենինյան-ստալինյան ազնիվ բարեկամությունը: Միայն ազատ մարդկանց այդ ազատ հասարակությունը կարող էր մեծագույն հաղթանակներ տանել իմպերիալիզմի հղորագրված ավանգարդի՝ գերմանա-ֆաշիստական և ճապոնական իմպերիալիզմի պետության և զորքերի դեմ Հայրենական մեծ պատերազմում: Դա պրոգրեսի հաղթանակն էր ռեակցիայի դեմ, ազատության հաղթանակը՝ ստրկության դեմ: Այդ հաղթանակների կազմակերպող, ուղղություն տվող, միավորող ու ղեկավարող ուժը Լենինի—Ստալինի հզոր պարտիան է, առանց որի ազատությունը նվաճվել չի կարող:

Բուլշևիկյան պարտիայի և սովետական ժողովրդի մեծագույն նվաճումները ցույց են տալիս, որ մարդիկ հրաշքներ են գործում, երբ նրանք ազատագրված են ստրկությունից. սոցիալիզմի ազատ մարդիկ աննախընթաց եռանդով ու ինքնագոհությամբ զարգացնում են մեր երկրի արտադրողական ուժերը, իրենց կամքին ու շահերին, հսկողությանն ու կարգավորությանն են

ենթարկում բնության և հասարակության սանձազերծ ուժերը և դարձնում նրանց իրենց հույս ծառան: Եվ իրոք. «Հասարակական ուժերը բնության ուժերի նման կույր, բռնի և կործանիչ են գործում, քանի դեռ մենք չենք ճանաչել դրանց և հաշվի չենք նստում դրանց հետ: Բայց հենց որ մենք ճանաչեցինք դրանց, ըմբռնեցինք դրանց գործողությունը, ուղղությունն ու ազդեցությունը, ապա միայն մեզնից է կախված՝ ավելի ու ավելի ենթարկել դրանց մեր կամքին և դրանց օգնությամբ հասնել մեր նպատակներին... հենց որ հասկացվեց դրանց բնույթը, ապա դրանք կարող են համախմբված արտադրողների ձեռքում դիվային հրամայողներից վերածվել խոնարհ ծառաների: Այստեղ նույն տարբերությունը կա, ինչ որ ամպրոպային կայծակի էլեկտրականության խորտակիչ ուժի և հեռագրաապարատի կամ աղեղային լամպի մեջ հնազանդորեն գործող էլեկտրականության միջև, նույն տարբերությունը, ինչ որ հրդեհի և մարդու ձեռքով կարգավորվող կրակի միջև (էնգելս, Անտի-Նյուրինգ, էջ 263):

Այսպիսով, սոցիալիստական հասարակության ծագման ու զարգացման օրինաչափություններն իրենց բնույթով ու բովանդակությամբ արմատապես տարբերվում են նախորդ բոլոր հասարակական-սոցիալական ֆորմացիաների ծագման ու զարգացման օրինաչափություններից: Այս վերջինների զարգացումը կատարվել է տարերայնորեն. մարդիկ շարունակ այստեղ ստրուկ են եղել իրենց սեփական գործողությունների կործանարար հետևանքներին, որոնք չեն համընկել մարդկանց մտադրություններին, իսկ հաճախ ուղիղ հակառակն է տեսցվել, քան նրանք ցանկանում էին: Պատմական անհրաժեշտությունը այստեղ իրեն ճանապարհ է հարթում սոցիալական փոքր ցնցումների ու կատաստրոֆների, կրիզիսների ու աղքատացման, պատերազմների ու համաճարակների ձևով:

Բոլորովին այլ կերպ է գոյանում և գործում պատմական անհրաժեշտությունը սոցիալիստական հասարակության կառուցման ու զարգացման պրոցեսում: Խորապես փոխվում է նաև սուբեկտիվ ֆակտորի՝ մասսաների, անհատների, կազմակերպությունների գիտակցության ու կամքի, նախաձեռնության ու եռանդի նշանակությունը: Միլիոնավոր մասսաները գործելով կոմունիստական պարտիայի ծրագրի, տակտիկայի, դիրեկտիվների նշված ուղիներով, Սովետական պետության պլանները կենսագործելով՝ ծավալում են իրենց ուղղուցիտ ստեղծագործությունները, բազմամիլիոն առաջնորդն ու հանճարը: Մարդիկ ճանաչում են պատմական անհրաժեշտության ընթացքը, գիտակցաբար գործում և իրենց վեհ նպատակներին ու հզոր կամքին ենթարկում այդ ճանաչված անհրաժեշտությունը: Մեր աչքի առաջ ժողովուրդները իրենց ամենօրյա տնտեսական, քաղաքական, հասարակական ստեղծարար աշխատանքով նվաճում են ազատությունը:

Սովետական ժողովուրդը տարիներ առաջ գիտի, թե ուր և ինչպես պիտի գնա, թե երբ, ինչ և ինչքան պետք է արտադրվի, որտեղ և ինչ պետք է կառուցվի, ինչ ուղղությամբ պետք է ընթանա կյանքը: Նպատակն այստեղ թխում է պատմական անհրաժեշտությունից, համընկնում է նրա հետ, իրագործվում է նրանում: Այստեղ համախմբված կոլեկտիվ մարդն է իշխում իր աշխատանքի արդյունքի վրա և ոչ թե հակառակը:

Այստեղից չպետք է հետևեցնել, թե սոցիալիզմի ծագումն ու զարգացումը որոշվում է մարդկանց ռազատա կամքով ու գիտակցությամբ, թե օբեկտիվ

տնտեսական օրինաչափություններն անհետանում են, տեղը զիջելով սուբեկտիվ, կամայական գործողություններին ու նպատակներին: Երբեք ոչ: Սոցիալիզմի ժամանակ էլ անհրաժեշտությունն առաջնայինն է, ազատությունը երկրորդայինը. այստեղ էլ խնդիրներն այն ժամանակ են դրվում ու լուծվում, երբ դրանց լուծման համար օբեկտիվ նյութական պայմանները հասունացել են, այստեղ էլ վամբը չի կարող գործել հակառակ տնտեսական օրինաչափության, հակառակ պատմական անհրաժեշտության: Ընկեր Ստալինը վճռակա-նորեն քննադատել է այն գործիչներին, ղեկավարներին, որոնք առաջարկում էին մի հնգամյակում ածխի, պողպատի, նավթի, շուգունի, էլեկտրաէներգիայի և այլն արտադրության այնպիսի ծրագիր, որը կարող է իրագործվել միայն մի քանի հնգամյակներում: Սոցիալիզմն ունի զարգացման իրեն յուրահատուկ հակասությունները, որոնց հաղթահարումը պատմական անհրաժեշտություն է կոմունիզմի լիակատար կառուցման համար, և սովետական մարդկանց կամքը այն դեպքում կարող է հաղթանակել ու հաղթանակում է, եթե՛ նա հաշվի է նստում այդ հակասությունների օբեկտիվ բնույթի և նրանց հաղթահարման ուղղության հետ: Սակայն սոցիալիզմի այդ օրինաչափությունները մեզ մոտ խորապես գիտակցված են, ուստի և ենթարկվում են պարտիայի, Սովետական պետության, միասնական ժողովրդի կամքին ու նպատակներին:

Սովետական երկրում, որտեղ ոչնչացված է մարդու շահագործումը մարդու կողմից և իրագործված է աշխատանքի սկզբունքը, դրա հետ միասին ոչնչացված են ճնշման բոլոր մյուս ձևերը՝ ազգային, ռասայական և այլն, ժողովուրդները վայելում են լիակատար տնտեսական, քաղաքական, պետական թուլներենություն: Այստեղ դադարել է անհատական պայքարը գոյության համար. համախմբված մարդկությունը Կոմունիստական պարտիայի ղեկավարությամբ վիթխարի տեմպերով զարգացնում է արտադրողական ուժերը, ծավալում իր բոլոր ատեղծագործական հնարավորությունները: Այստեղ յուրաքանչյուրի անձնական երջանկությունը ամբողջ հասարակության հողատարության առարկան է: Դասակարգային և ազգային ճնշումից ազատ սովետական մարդիկ հրաշքներ են գործում և կազմակերպված վարձավորում են իրենց գործունեությունը և քնության պրոցեսները ամբողջ հասարակության օգտին: Միայն այսպիսի պայմաններում է հնարավոր կլիմայի ու եղանակի փոփոխման ստալինյան պլանը, օրգանական կյանքի միջուրինյան զարգացումը և սոցիալիստական մարդու բարեկեցության անընդհատ բարձրացումը, սոցիալիստական Հայրենիքի հզորության ուժեղացումը: Սակայն այս ազատությունը նվաճվել է և նվաճվում է ամենօրյա հերոսական ջանքերով. այն պետք է նվաճել կապիտալիստական երկրներում աշխատավորների անդադրում, անվհեր ուղուցիտն պայքարով:



Այսպիսով մենք հանգեցինք ազատության մարքս-լենինյան ուսմունքի ամենազրխավոր, ամենաարմատական եզրակացությանը, այն եզրակացությանը, որ իսկական ազատությունը պետք է նվաճվի միլիոնավոր մասսաների ուղուցիտն պրակտիկ գործունեությամբ: Ծղմարտություն է, որ անհրաժեշտության սոսկ իմացությունը դեռ ազատություն չէ. անհրաժեշտության ճանաչողությունը ճանապարհ է ազատության համար, թայց դեռ անմիջականորեն ազատություն չէ: Ազատությունը փսկական իմաստով ոչ միայն անհրա-

ժեշտության գիտակցումն է, այլև նրա կազմակերպված նվաճումը, մի նվաճում, որ պետք է իրագործվի պրոլետարիատի, նրա դաշնակիցների և բոլոր պրոպրետարիատների հերոսական ջանքերով ու գործերով, կապիտալիզմի ու նրա պաշտպանների դեմ մղված անխնա պայքարով: Նախամարքսյան մատերիալիզմը հարցի այս ըմբռնումից շատ հեռու էր. նա միայն աշխարհը բացատրում էր, իսկ չէր սովորեցնում վերափոխել այն: Նախամարքսյան մատերիալիստների մոտ պրակտիկան ըմբռնվում էր շատ նեղ անհատական-սպառողական իմաստով. մարդը ուտում է, խմում, հագնվում, պաշտպանվում է ցրտից և շոգից, թշնամիներից և այլն: Էլեմենտար պահանջները բավարարելու այս պրոցեսով նրանց կարծիքով սպառվում է պրակտիկան: Մարքսիզմ-լենինիզմը պրակտիկան ըմբռնում է շատ ավելի լայն և խորը իմաստով. դա մարդու ամբողջ հասարակական-պատմական, առաջին հերթին արտադրական և ռեռուցիոն գործունեությունն է. այնուհետև՝ դա՝ ոչ թե միայնակների անպրտուղ գերհերոսությունն է, այլ պրոլետարիատի և միլիոնավոր մասսաների դասակարգային պայքարը, ռեռուցիոն գործունեությունը պրոլետարիատի պարտիայի ղեկավարությամբ: Միայն հին հասարակության արմատական ռեռուցիոն ուղնաչափումը, պրոլետարիատի դիկտատուրայի ու ժողովրդական դեմոկրատական կարգերի հաստատումը կարող է ռեալ նախադրյալը հանդիսանալ ճշմարտ ու շահագործման բոլոր ձևերի ուղնաչափի և կոմունիզմի՝ ազատության թագավորության հաստատման համար: Մարքսիզմը սովորեցնում է ոչ միայն ճանաչել աշխարհը, այլև այն վերափոխել: Ծիշտ է, ռուսական մատերիալիզմի կլասիկները՝ ռեռուցիոն դեմոկրատները լուրջ քայլեր արեցին այս ուղղությամբ՝ արևմուտքի նախամարքսյան մատերիալիստների համեմատությամբ. նրանք ձգտում էին ժողովրդի ռեռուցիոն ինքնագործունեությանը, կոչ էին անում կացնի դիմել և զենքով տապալել բոլոր հին իշխանությունները: Սակայն նրանք ևս չհասան պատմական մատերիալիզմին և պրակտիկայի մարքսիստական ըմբռնմանը:

Հիմնավորելով պրակտիկայի դերը անհրաժեշտությունը ազատության վերածելու գործում, էնգելսը գրում է. «Երկ իմացությունը, թեկուզ և նա շատ ավելի հեռուն գնա ու խորը լինի բուրժուական քաղաքատնտեսության իմացությունից, — բավական չէ հասարակական ուժերը հասարակությանը ենթարկելու համար: Դրա համար անհրաժեշտ է ամենից առաջ հասարակական գործողություն» (էնգելս, Անտի-Դյուրինգ, էջ 300): Մի ուրիշ տեղ էնգելսը շատ ավելի սուր ու վճռական է դնում այս հարցը: «Բնության դիալեկտիկայի» մեջ խոսելով այն մասին, որ միայն կոմունիզմի ժամանակ հնարավոր կլինի կոլեկտիվ մարդկության համար իր հսկողությանն ու կարգավորմանը ենթարկելու բնական ու հասարակական ուժերը, այսինքն հաստատելու մարդու իշխանությունը այդ ուժերի վրա, իրագործելու բուն ազատությունը՝ էնգելսը գրել է. «Սակայն այդ կարգավորումը իրագործելու համար շատ ավելի քան է պահանջվում, քան սոսկ իմացությունը: Դրա համար պահանջվում է լիակատար կերպով հեղաշրջել մեր մինչև այժմ գոյություն ունեցող արտադրանդանակը, իսկ դրա հետ միասին մեր ամբողջ ներկա հասարակակարգը» (էջ 144):

Ջարգացնելով այս մտքերը, Լենինն ընդգծում է, որ անհրաժեշտությունից մինչև ազատությունը ընկած է մի օղակ՝ ռեռուցիոն պրակտիկան: Նման հարցերը չեն լուծվում լոկ թեորիական դատողություններով. պահանջվում է թռիչք գործել թեորիայից դեպի պրակտիկան, փիլիսոփայությունից դեպի

քաղաքականությունը, իմացությունից դեպի մասսաների պրակտիկ գործընդգծելու մոտ, ասում է Լենինը, մարդկային ամբողջ կենդանի պրակտիկան մտնում է իմացաբանության մեջ՝ տալով ճշմարտության չափանիշը: Մասսաների ուղղություն կազմակերպված և ծրագրված պայքարի պրակտիկան հանդիսանում է նաև ազատության չափանիշը: Անշարժ կարևոր են այս տեսակետից այն դրույթները, որ զարգացնում է Լենինը «Սովետական իշխանության հերթական խնդիրները» հիանալի աշխատության մեջ (1918 թ. գարուն): Լենինը ցույց է տալիս, որ շատ սոցիալիստներ և ձախ կոմունիստներ սերտել են էնգելսի՝ «Թուրք անհրաժեշտության թաղավորությունից դեպի ազատության թաղավորությունը» ֆորմուլը և դրանով հանգստացել: Մինչդեռ գործով պետք է ցույց տալ այդ թուրքը. անհրաժեշտ է բանվորների, գյուղացիների և աշխատավոր ինտելիգենցիայի անձնազուտ, հերոսական ուղղություն աշխատանք կապիտալիստական կարգերի խորտակման, հին պետական մեքենայի շախշախման, հին հարաբերությունների ոչնչացման ու նորի կառուցման համար: Անհրաժեշտ է անխնա պայքար հին ձևերի պաշտպանների դեմ: Պրոլետարիատի դիկտատուրան կոմունիզմի հիմնական ինստրումենտ է. իսկ այդ դիկտատուրան, ինչպես ընդգծում է Լենինը, նշանակում է դաժան պայքար, պայքար տնտեսական ու քաղաքական, վարչական ու մանկավարժական, համոզելու և հարկադրման՝ ընդդեմ հին ձևերի ու սովորությունների: Պրոլետարիատի դիկտատուրան մեծագույն ստեղծագործական ուժ է. այն նշանակում է նոր աշխատանքային հարաբերությունների՝ սոցիալիստական հարաբերությունների զարգացում, նոր պետական և աշխատանքային դիսցիպլինայի հաստատում, աշխատանքի բարձր արտադրողականություն, սոցիալիստական մեթոդների ծավալում: Այս մասին է խոսում մեր երկրի սոցիալիստական շինարարության 32-ամյա փորձը:

Անհրաժեշտություն ազատության վերածելու համար անհրաժեշտ է բուն կապիտալիստական հասարակության մեջ գտնել այն դասակարգը, որը օբեկտիվորեն և սուբեկտիվորեն կարող է, պետք է, ձգտում է հաստատելու սոցիալիստական հասարակարգ: Անհրաժեշտ է կազմակերպել ուղղություն դասակարգային ուժերը, մշակել դրանց պայքարի ծրագիրն ու տակտիկան, դեկավարել նրանց դեպի հիմնական նպատակը: Մարքսիզմ-լենինիզմը այդպիսի վճռական ուղղություն ուժ գտավ հանձինս պրոլետարիատի, իսկ կոմունիզմն իրագործելու հիմնական միջոց՝ պրոլետարիատի դիկտատուրան:

Մարքսիզմ-լենինիզմը սովորեցնում է, որ բանվոր դասակարգի և աշխատավոր մասսաների պատմական մեծ շարժումները ծագում են ոչ թե պատահականորեն, այլ պատմական, տնտեսական և քաղաքական մեծագույն անհրաժեշտությամբ: Ոչ միայն առանձին անհատներ, այլև բանվորները, գյուղացիները, զինվորները ենթակա են իրերի ուղղությունացնող տրամաբանությանը, — գրում էր ընկեր Ստալինը 1917 թ. ծավալված ուղղություն իրադարձությունների մասին: Պրոլետարիատի և ժողովրդի պայքարը շահագործող դասակարգերի դեմ հասարակության պրոգրեսիվ շարժման ձևն է: Հասարակական կյանքի հիմնական հարցերը ուղղություն է պոխաներում դրվում և լուծվում են ոչ թե կամայաբար, այլ դասակարգային պայքարի անհրաժեշտությամբ: Խոսելով 1905—1907 թ. թ. ուղղություն իրադարձությունների մասին, Լենինը բազմակողմանի և խորապես հիմնավորում է պրոլետարիատի ուղղություն գործունեության անխռամափելիությունն ու անհրաժեշտությունը:

ազատություն նվաճելու համար: «Այդ հարցերը, — գրում էր Լենինը 1907 թ., — դրվում էին շատ պարտիաների կամքին հակառակ ու դիտակցությունից անկախ, — դրանք լուծվում էին «բռնի կերպով» ընդհուպ մինչև ամեն տեսակ տրադիցիաների խզումը, — և ստացվեց կամպանիային մասնակցող քաղաքագետների հսկայական մասսայի համար ամենաանսպասելի վերջնական արդյունքը» (Լենին, հատ. 12, էջ 108): Մի այլ տեղ Լենինը նշում էր, որ սուր ընդհարումները չպետք է բացատրել առանձին անհատների շար կամ բարի կամքով. պատմության նման ըմբռնումը ֆիզիստերական տեսակետ է. սուր ընդհարումները առաջանում են խորը հասակարգային տարբերություններից, սոցիալական և քաղաքական տենդենցների անտաղոնիզմից, որոնք անհրաժեշտաբար հանդես են գալիս ու հանդես պիտի գան: Ռևոլյուցիոն էպոխաները նման հակասությունների հատկապես սուր արտահայտությունն են, երբ տասնյակ տարիների հակասությունները հանկարծակի, վճռականորեն ու արմատապես պետք է լուծվեն: Մարքսիստական պարտիայի խնդիրն է՝ ճիշտ հաշվի առնել պատմական այդ ամբողջ պրոցեսի դիալեկտիկան, կազմակերպել ու ղեկավարել մասսաների ռևոլյուցիոն-ազատագրական և շինարարական էներգիան ու ձեռներեցությունը:

Ընկեր Ստալինը իր «Անարխիզմ թե սոցիալիզմ» խորագրված աշխատության մեջ հիմնավորել է բազմաթիվ փաստերով սոցիալիզմի երկաթյա անհրաժեշտությունը: «Այն, ինչ որ կյանքում ծնվում է և օրեցօր աճում է, — անհաղթահարելի է, նրա առաջընթաց շարժումը կանգնեցնելն անկարելի է: Այսինքն՝ եթե, օրինակ, կյանքում ծնվում է պրոլետարիատը որպես դասակարգ, և նա օրավուր աճում է, ապա ինչքան էլ թույլ և փոքրաթիվ լինի նա այսօր, վերջիվերջո նա դարձյալ հաղթելու է» (Ի. Վ. Ստալին, Երկեր, հատ. 1-ին, էջ 336): Բուրժուական ռեակցիոն իդեոլոգները, նույն թվում վոլյունտարիստները, ժխտում են օբեկտիվ անհրաժեշտությունն ու պատճառական կապակցությունը հասարակական կյանքում, որպեսզի անհիմն հայտարարեն սոցիալիստական շարժումը: Ընկեր Ստալինը զարգացնելով մարքսիզմ-լենինիզմը, ցույց տվեց, որ հասարակական կյանքը նույնպիսի օրինաչափությամբ ու անհրաժեշտությամբ է զարգանում, ինչպես և բնությունը. տարբերությունը հասարակական կյանքի բարդության և նրա օրինաչափությունների յուրահատկության մեջ է: Հասարակական-տնտեսական մի ֆորմացիա հաջորդում է մյուս ֆորմացիային ճիշտ նույնպիսի անհրաժեշտությամբ, ինչպես բնության մի երևույթը մյուսին. «... սոցիալիստական հասարակակարգը նույնպիսի անխուսափելիությամբ կհաջորդի կապիտալիզմին, ինչպես գիշերվան հաջորդում է ցերեկը» (նույն տեղ, էջ 383):

Սակայն, ինչպես նկատել ենք բազմիցս, ժողովրդի պայքարը ազատության համար, սոցիալիզմի համար պատմական անհրաժեշտություն լինելով՝ ստեղծագործական պրոցես է, ժողովրդի դիտակցության ու կամքի հսկայական ծավալման պրոցեսն է: Մեր ժամանակներում միլիոնավոր մասսաների պայքարը աշխարհի դեմոկրատական ու սոցիալիստական վերափոխման համար ակտիվ պրոցեսն է: Պատմական անհրաժեշտությունը իրազդրվում է ոչ թե ակտումատիկ ձևով: Ընկեր Ստալինը դեռ շատ վաղուց ծաղրի է ենթարկել այն հեղինակներին, որոնք կանգնած են պատմական պրոցեսի, «համաշխարհային կապիտալիստական սիստեմի անսուբեկտիվության»

տեսակետին (տես հատոր 9, էջ 185): Ռեւոլյուցիոն էպոխաներում, նորի համար մղվող պայքարում հատուկ նշանակություն է ստանում մասսաների կամքի ուժը, վճռականությունը, ձեռներեցությունը: Կոմունիստական պարտիայի տակտիկան ու ստրատեգիան իր հիմքում ունի հենց այս ֆակտորը: Բոլշևիզմը ժողովրդի ռեւոլյուցիոն գործունեությունը դիտում է որպես «ազատության մարտի ժողովրդական պայքարի բարձրագույն արտահայտություն» (Լենին, հատոր 10, էջ 304): Ռեւոլյուցիոն էպոխաներում հատուկ խորության ու լարվածության է հասնում ժողովրդի ստեղծագործությունը, ուստի և պատմությունը պետք է դիտել ժողովրդական մասսաների, «պատմական ստեղծագործության մեթոդներով» տեսակետից (ն. տ.):

Ազատության նվաճման առաջին և անհրաժեշտ նախադրյալը, իհարկե, ժողովրդի կողմից քաղաքական իշխանության գրավումն է, ժողովրդական նոր ռեւոլյուցիոն իշխանության, պրոլետարիատի դիկտատուրայի հաստատումը, շահագործողների ու բուրժուազիաների նկատմամբ պատմականորեն անհրաժեշտ ռեւոլյուցիոն բռնության գործադրումը: Փորձը ցույց տվեց, դասակարգային պայքարի պրակտիկան ամեն օր հաստատում է, որ առանց այդ տեսակ պայքարի չի կարելի ջախջախել շահագործողների դիմադրությունը: Խոսելով ժողովրդական իշխանության հաստատման մասին հին իշխանությունների բռնի տապալման միջոցով, Լենինը ասում է. «Այդ՝ ազատության համար ժողովրդի պայքարի բարձրագույն արտահայտությունն է: Այդ՝ այն մեծ պահն է, երբ Ռուսաստանի լավագույն մարդկանց երազները ազատության վերաբերյալ գործի են վերածվում, բուն ժողովրդական մասսաների գործի, և ոչ թե միայնակ հերոսների» (Լենին, հատոր 10, ն. տ.): Այն ժամանակ, երբ կապիտալիզմի սոցիալ-դեմոկրատական ջատագովները քարշ են գալիս պատմական դեպքերի պոչից, լենինիզմը ցույց է տալիս, թե ինչ կազմակերպական, պետական, տնտեսական, քաղաքական, ռազմական ու գիտական, գեղարվեստական ու շինարարական, արտադրական ու կուլտուրական հրաշքներ է գործում բանվոր դասակարգն ու գյուղացիությունը ռեւոլյուցիոն պարտիայի գլխավորությամբ: Սոցիալ-դեմոկրատների պատմափիլիսոփայությունը իր հիմքով ոչնչով չի տարբերվում կադետական հայացքից. դա պատմության բուրժուական-չինովնիկական խեղաթյուրումն է: Ռեւոլյուցիոն էպոխաներում, սովորեցնում են Լենինն ու Ստալինը, մասսաները օրերի և ամիսների ընթացքում ավելի շատ բան են սովորում և ստեղծագործում, քան սովորական խաղաղ ժամանակաշրջանների տասնյակ տարիների ընթացքում: Լենինը մերկացնում է կադետներին ու կապիտալիզմի մյուս պաշտպաններին, ցույց տալով զինված ապստամբության և շահագործողներին ճնշելու մեծագույն անհրաժեշտությունն ու ազատագրական նշանակությունը: «Դուք ասում եք, թե միլիոնները չպետք է բռնություն գործադրեն հազարների դեմ: Դուք սխալվում եք, և սխալվում եք այն պատճառով, որ երևույթը չեք դիտում իր զարգացման մեջ: Դուք մոռանում եք, որ նոր իշխանությունը երկնքից չի ընկնում, այլ ծնվում-ծագում է հիւի կողքին, հակառակ հին իշխանության, պայքարելով նրա դեմ: Առանց իրենց ձեռքում իշխանության գործիքներ և օրգաններ ունեցող բռնադատիչների նկատմամբ բռնություն գործադրելու՝ չի կարելի ժողովրդին ազատել բռնադատիչներից» (ն. տ., էջ 301):

Այսպիսով, մարքսիզմ-լենինիզմը ոչ միայն հիմնավորեց անհրաժեշտությունից դեպի ազատությունը թռիչք գործելու անհրաժեշտությունը, այլև

մշակեց այդ թուլքի մեթոդներն ու ուղիները, ձևերն ու եղանակները: Մարքսիզմ-լենինիզմը սովորեցնում է, որ ազատությունը միայն իդեա, միտք, ցանկություն, կամք չէ, այլև կազմակերպված հերոսական գործ՝ ընդդեմ բոլոր հին կարգերի, շահագործման բոլոր ձևերի: Մեր էպոխայում դրված է կապիտալիզմը ոչնչացնելու խնդիրը, որը ծնում է սոսկալի տմարդի երևույթներ և մի անհեթեթություն առաջացնում է մյուսի հետևից: Պատմական պրոգրեսը անհնարին է առանց դրա թշնամիներին ջախջախելու: «Այս նշանակում է, որ կա՛մ բոլորովին պետք է կործանվի ամեն մի հասարակական կյանք, կա՛մ պրոլետարիատը, վաղ թե ուշ, բայց անխուսափելիորեն, պետք է դառնա ժամանակակից արտադրության տերը, նրա միակ սեփականատերը, նրա սոցիալիստական սեփականատերը» (Ի. Վ. Ստալին, հատոր 1-ին, էջ 384): Ընկեր Ստալինը հիմնավորելով այս նպատակը, միաժամանակ հիմնավորում է և այդ նպատակին տանող միջոցը. «... պրոլետարիատը չի կարող սոցիալիզմին հասնել՝ բուրժուազիայի հետ հաշտվելով, — նա անպայման պետք է թռնի պայքարի ուղին, և այդ պայքարը պետք է լինի դասակարգային պայքար, ամբողջ պրոլետարիատի պայքարը ամբողջ բուրժուազիայի դեմ: Կա՛մ բուրժուազիան իր կապիտալիզմով, կա՛մ պրոլետարիատն իր սոցիալիզմով» (ն. տ., էջ 387): Այս հանգամանքը հիմնական շափանիշն է ուղղուցիտ գործիչների ու կազմակերպությունների խոսքն ու գործը ստուգելու համար:

Բոլոր ռեֆորմիստների, իմպերիալիզմի նողկալի վարձկաններ աջ սոցիալ-դեմոկրատների հանցագործությունն այն է, որ նրանք ձգտում են թուլացնել պրոլետարիատի մարտական կամքը, մթազնել նրա գիտակցությունը, մեղցնել նրա ձեռներեցությունն ու եռանդը՝ հավերժացնելու համար կապիտալիստական ստրկությունը: Նրանց համար ընդորշ է դետերմինիզմի և ուղղուցիտ գործի փոխհարաբերության ֆալսիֆիկացիան ֆատալիզմի ոգով: Նրանք այս ոգով էլ աշխատում են ալլասերել պրոլետարիատի հետամնաց խավերին և մանրբուրժուական մասսաներին: Լենինը հիանալի է պարզաբանել այդ հարցը: «Պրոլետարիատը ուղղուցիտ է այնքանով միայն, որքանով նա գիտակցում է և կյանքում իրականացնում հեղեմոնիայի այս իդեան: Այն պրոլետարը, որը գիտակցել է այս խնդիրը՝ մի ստրուկ է, որ ապստամբել է ստրկության դեմ: Այն պրոլետարը, որը չի գիտակցում իր դասակարգի հեղեմոնիայի իդեան, կամ հրաժարվում է այդ իդեայից, մի ստրուկ է, որը չի հասկանում իր ստրկությունը. լավագույն դեպքում՝ նա մի ստրուկ է, որը պայքարում է իր ստրկական վիճակը բարելավելու համար, այլ ոչ թե ստրկությունը տապալելու համար» (Լենին, հատոր 17, էջ 201—202. ռուս. 4-րդ հրատ.):

Մենք ասացինք, որ ռեֆորմիստները խեղաթյուրում են դետերմինիզմի և ուղղուցիտ մասսաների ակտիվ, ձեռներեց գործունեության հարաբերությունը: Իսկապես նրանց համար դետերմինիզմը հավասար է մեխանիստական, ֆատալիստական, անելանելի վիճակի, փակ ազատությունն այն է, որ մարդիկ կարող են լավագույն դեպքում խուսափել այս կամ այն հանգամանքից, այս կամ այն արարքից: Այս տեսակետը ոչ միայն առնչություն չունի մարքսիզմի հետ, այլև կոչված է պրոլետարիատին իդեոլոգիապես բուրժուազիային ենթարկելու, ոչնչացնելով առաջինի ուղղուցիտ գործունեությունը: Ըստ ֆատալիստների ստացվում է, թե կամքի բացարձակ ազատության ժխտումը նշանակում է մարդկանց, պրոլետարիատի նպատակադիր գործունեության ժխտ-

տում: Այս ռեակցիոն տեսակետը աջ սոցիալ-դեմոկրատների հայացքներում սովորական բուրժուական իդեոլոգիայից փոխառված միտք է: Ընդունել, որ մեր կամքը պայմանավորված է շրջապատող հանգամանքներով, չի նշանակում խոնարհվել այդ հանգամանքների առաջ. ընդհակառակը, նշանակում է հաշվի առնել այդ հանգամանքների օբեկտիվ հատկությունները, նրանց զարգացման ուղղությունը և համապատասխան դրան ազդել նրանց վրա, ենթարկել մեր նպատակներին: Հետևաբար դեմոկրատիզմը համարձակ գործունեության հիմք է դառնում: «Ազատությունն անհրաժեշտության ըմբռնումն է: Դեմոկրատիզմը ոչ միայն չի ենթադրում ֆատալիզմ, այլ, ընդհակառակը, հենց հող է ստեղծում բանական գործողության համար» (Լենին, հ. 1-ին, էջ 534): Երբ հանգամանքները իրենց դիալեկտիկական զարգացմամբ և ամբողջությամբ ճանաչված են, ապա ռեուլցիոն գործիչներն ու պարտիաները չեն կարող իրենց ամբողջ ուժով, ցանկությամբ, կամքով, ձգտումով, զգացմունքով չծառայել բանավոր դասակարգի այն մեծ գործին, որի անհրաժեշտությունը հաստատված և ստուգված է: Ռեուլցիոն պարտիաները ամենայն օբեկտիվության մեջ վերլուծելով իրականության զարգացումը, չեն կարող այդ զարգացման պասսիվ հայեցողները լինել: Իրականությունը և այդ իրականության մեջ տեղի ունեցող պրոցեսը դիտելով որպես դասակարգային պայքար, նրանք չեն կարող չհամակրել միլիոնավոր հասարակ մարդկանց միճակին, չեն կարող իրենց հոգու ամբողջ ուժով չափել շահագործողական կարգերի կրողներին, իմպերիալիստական գիշատիչներին, պատերազմի հրձիգներին, չպայքարել նրանց դեմ և հանդես չբերել իրենց ձեռներեցությունն ու տոկոսնությունը:

Ժամանակակից համաշխարհային բանվորական շարժման գլխավոր թեթևությունը, — ասում է ընկեր Ժդանովը, — այն է, որ պրոլետարիատի որոշ խավերը թերահավատ են իրենց դասակարգի ուժի նկատմամբ: Աջ սոցիալ-դեմոկրատները՝ իմպերիալիզմի այդ հավատարիմ ծառաները, ամեն կերպ ձգտում են ուժեղացնել այդ թերահավատությունը, ջլատել բանվորական շարժումը, խորտակել նրա կամքը: Սակայն դասակարգային պայքարի դաժան լոգիկան սովորեցնում է բանվորներին ճշմարտությունը: Պրոֆմիությունների համաշխարհային բանվորական ֆեդերացիայի ստեղծումը հետպատերազմյան ժամանակաշրջանում, կոմունիստական պարտիաների վիթխարի աճը բոլոր երկրներում՝ մերկացնում են աջ սոցիալ-դեմոկրատների «թեթևություն» ու տակտիկայի ռեակցիոն էությունը: Միայն կոմունիստական պարտիաները՝ ժողովուրդների այդ ազնիվ ու հերոսական զավակները, միայն նրանք են գիտականորեն հիմնավորում պրոլետարիատի ռեուլցիոն շարժումը, կազմակերպում միլիոնավոր մարդկանց բանակներ, անձնագործ պայքարի կոշտ ընդդեմ իմպերիալիզմի:

Կոմունիստական պարտիաները ելնելով մարքսիզմ-լենինիզմի ուսմունքից, քաջ գիտակցում են, որ վճռականը բանվոր դասակարգի հերոսական, անձնագործ, ձեռներեց գործն է, որով նա ստեղծում է համաշխարհային պատմություն: Ինչպես Լենինն է ասում, պատմությունը պետք է դիտել այն մարդկանց դիրքերից, որոնք ստեղծում են այդ պատմությունը: Կոմունիստական պարտիաները մասսաներին վճռական պայքարի են հանում ռեակցիոն կարգերի դեմ, անգամ ուժերի անհավասարության դեպքում, քանի որ միայն այդ ճանապարհով կարելի է մասսաներին դաստիարակել և նախապատրաստել վճռական գործին: Լենինը պահանջում է սովորել Մարքսից՝ ոչ միայն

այն, թե ինչպես պետք է գնահատել անցյալը, այլև այն, թե ինչպես պետք է ստեղծել ապագան:

Այսպիսով, անհրաժեշտությունը ոչ միայն չի բացառում, այլ, ընդհակառակը, ակտիվ գործունեության լայն հրապարակ է բացում: Միայն այն գործողությունները և միայն այն պարտիաների գործողությունները կարող են հաջողությամբ պսակվել, որոնք բխում են և ճիշտ արտացոլում սոցիալիզմի հաղթանակի պատմական անհրաժեշտությունը: Ազատությունը ոչ միայն անհրաժեշտության իմացումն է, այլև մարդկանց կազմակերպումը այն իրագործելու համար: Մարքսիզմ-լենինիզմը ազատությունը շատ ավելի լայն ու խորն է հասկանում, քան այդ պրոբլեմի պրիմիտիվ ըմբռնումներն են: Դրժբարխտաբար դեռ կան շատ պրոգրեսիվ մարդիկ, որոնք—եթե նրանք բացարձակ ֆատալիստներ չեն— ազատություն ասելով հասկանում են մի վիճակ, երբ մարդը ճանաչելով հանգամանքները, կարող է խուսափել այս կամ այն հանգամանքից կամ արարքից՝ և այդքանը: Նման դուռ բացասական ըմբռնումը խորթ է մարքսիզմ-լենինիզմին և խիստ վտանգավոր ժողովուրդների համար:

Այսպես համոզված մարդիկ, օրինակ, պատերազմի պայմանավորվածությունը ուղղակի և անմիջականորեն նույնացնում են բացարձակ անհաղթահարելի ճակատագրական անխուսափելիության հետ: Այստեղից մի քայլ է մնում դեպի ֆատալիզմը, վտանգին հեղությունը սպասելու կամ մի կերպ ջգտության պրոնելու մտայնությունը: Վերահաս դեպքերից խուսափելու, պասսիվության, վտանգի ժամին ջայլամի նման գլուխը թևերի տակ թաքցնելու այս մտայնությունը հատկապես վնասակար է մեր օրերում մեծագույն վրտանգի՝ նոր իմպերիալիստական պատերազմի հարցում: Այստեղ բարեհոգությունը հանցագործության է հավասար: Պատերազմի հրձիգները ձգտում են սուրը մխրճել ժողովուրդների թիկունքը, հույս դնելով այդ պասսիվության ու բարեհոգության վրա:

Ընկեր Ստալինը դեռ մեր պարտիայի 18-րդ համագումարում զգուշացրել է կոմունիստական պարտիաներին, որ զբանվոր դասակարգի համար այժմ գլխավոր վտանգը իր ուժերի թերազնահատումը և իմպերիալիստական լազերի ուժերի գերազնահատումն է: Անգլո-ամերիկյան իմպերիալիզմի գիշատիչները, նրանց իդեոլոգները, դիվանագետներն ու քաղաքագետները հիասթափության ու ֆատալիզմի, պատերազմի ճակատագրական անխուսափելիության ու մարդկության կատաստրոֆիկ դատապարտվածության թույն են սերմանում շուրս կողմը: Նրանց հավատարիմ շներ աջ սոցիալ-դեմոկրատները ամեն ջանք գործադրում են պասսիվության մատնել ժողովուրդներին, կոտրել պատերազմի դեմ պայքարելու նրանց կամքը և հեշտացնել իմպերիալիստների սև գործը: Ստի, կեղծիքի, զրպարտության օգնությամբ, պատմության ու լոգիկայի ֆալսիֆիկացիայով նրանք պրոպագանդում են այն միտքը, թե մարքսիզմ-լենինիզմի տեսակետից պատերազմն անխուսափելի է, թե ապարդյուն ու անօգուտ, անհույս բան է դրա դեմ պայքարելը, անխուսափելի վտանգին դիմադրելը և այլն և այլն:

Կոմունիստական պարտիաները մերկացնում են իմպերիալիստների և նրանց լազիչների սուտն ու կեղծիքը, պրոգրեսիվ մարդկությանն են հասցնում Լենինի—Ստալինի ազնիվ, մարդասիրական, ճշմարիտ խոսքը: Աշխատավոր, պրոգրեսիվ մարդիկ սկսում են հասկանալ, որ բավական չէ փաղա-

ղուծյուն տենչալ, այն սիրել ու գնահատել, անհրաժեշտ է բոլոր միջոցներով պաշտպանել խաղաղությունը, վիժեցնել իմպերիալիստների ահռելի դավադրությունների պլանները ժողովուրդների դեմ: Եվ իրոք, մենք ականատես դրուծյունների պլանները ժողովուրդների դեմ: Եվ իրոք, մենք ականատես ենք, թե ինչպես է ենինի—Ստալինի աշխարհափոխիչ գաղափարներն օրավուր հաղթանակ են տանում ամբողջ աշխարհում, թափանցում են բազմամիլիոն հասարակ մարդկանց հոգու և գիտակցության մեջ, շարժման մեջ են դնում հասարակ մարդկանց հոգու և գիտակցության մեջ, շարժման մեջ են դնում դեմոկրատիայի ու խաղաղության նորանոր բանակներ: Դեմոկրատիայի լազերը անընդհատ հզորանում է, խաղաղության մարտիկների շարքերը խառնում են, շարժումը՝ աճում և ընդլայնվում: Տասնյակ միլիոնավոր մարդիկ սկսում են համոզվել, որ պատերազմի իմպերիալիստական հրձիգներին կարելի է և պետք է տանձահարել ոչ թե բալի ցանկություններով, այլ համարձակ ու վճռական գործողություններով, մասսայական ելույթներով:

Զանաչել անհրաժեշտությունը, նշանակում է ոչ թե խուսափել այդ անհրաժեշտության նկատմամբ ակտիվ վերաբերմունք ցույց տալուց, այլ լիակատար կերպով դրսևորել գիտակցական կամք, դասակարգային (պրոլետարական), պարտիական (կոմունիստական) անհատականություն, ձեռնբերեցություն, եռանդ: Այս բոլորի անտեսումը մարքսիզմ չէ, այլ ամենավատթար տեսակի վուլգար մատերիալիզմ: Կուցկիներին, բռնշտայնականներին, կապիտալիզմի բոլոր պոլոգեոններին շատ հաճելի է մերժել մասսաների այդ ձեռնբերեցությունը, այլանդակել հարցերի էությունը և զրպարտել բոլշևիկների հասցեին՝ անարխիզմի, դավադրականության, բլանկիզմի պիտակներ վերագրելով նրանց: Բոլշևիզմի պատմությունը ցույց է տալիս, որ մարքսիզմ-լենինիզմի բոլոր հակառակորդները, սկսած նարոդնիկներից ու ռեզակ մարքսիստներից՝ և վերջացրած տրոցկիստներով, աշերով ու ժամանակակից աջ սոցիալ-դեմոկրատներով, շարունակ ֆալսիֆիկացիայի են ենթարկել մարքսիզմը՝ դեմոկրատիկիզմի և ինդեմոկրատիկիզմի հարցում: Նրանք մերթ ֆատալիզմ են վերագրել բոլշևիզմին, քանի որ վերջինս ընդգծում է մարդկային կամքի պայմանավորվածությունը օբեկտիվ հանգամանքներով, ժխտում է կամքի ազատությունը, կամ ընդհակառակը՝ բոլշևիզմին վերագրել են վոլյունտարիզմ, անարխիզմ, ավանտյուրիզմ, ինչ բոլշևիզմը մասսաներին ակտիվ ռևոլյուցիոն պայքարի է հանել, հսկայական նշանակություն տալով գիտակցական կամքին, համարձակությանն ու ձեռնբերեցությանը:

Ընկեր Ստալինը մերկացրել է մարքսիզմի բազմաթիվ ֆալսիֆիկատորներին ու վուլգարիզատորներին: Դատափետելով ռեֆորմիզմը, որը ժխտում է ռևոլյուցիոն պայքարը, ընկեր Ստալինը միաժամանակ մերկացնում է ռեֆորմիստների և անարխիստների հայացքների նույնությունը մարքսիզմը ֆատալիստորեն մեկնաբանելու գործում: Մարքսիզմն ամենևին չի ժխտում ռևոլյուցիոն դասակարգի ձգտումների ու կամքի հսկայական նշանակությունը: Այս հիման վրա էլ մարքսիստները ծավալում են իրենց ռևոլյուցիոն գործունեությունը, աշխատում են մոբիլիզացնել մասսաների ձգտումներն ու կամքը: Մարքսիզմ-լենինիզմը սակայն երբեք չի մոռանում, որ կամքն ու ձգտումները իրենց բովանդակությունը ստանում են սոցիալ-տնտեսական իրադրությունից: Բայց միաժամանակ մարքսիստները հենվելով պատմական անհրաժեշտության վրա, ռացիոնալ կերպով մշակում են իրենց տակտիկական ու ստրատեգիան, դիրեկտիվներն ու լոզունգները, իրականությունը վերափոխե-

լու համար այն ուղղությամբ, ինչ ուղղությամբ պատմական անհրաժեշտությունը ինքը ցույց է տալիս:

Ռուսաստանի պրոլետարիատը՝ համաշխարհային բանվոր դասակարգի ավանգարդը, ռուսական ռևոլյուցիաների ժամանակ հերոսության հրաշքներ ցուցաբերեց. էլ ավելի հրաշքներ նա հանդես բերեց մեր երկրում սոցիալիզմի կառուցման և Հայրենական մեծ պատերազմի ժամանակ: Ռուսաստանի բանվոր դասակարգը բոլշևիկյան պարտիայի ղեկավարությամբ ճեղքեց կապիտալիզմի շղթայի օղակը և նոր դարագլուխ բացեց համաշխարհային պատմության մեջ. նա դրոժնականորեն կառուցեց սոցիալիստական հասարակությունը և այժմ հաղթարշավ կերպով գնում է դեպի կոմունիզմը՝ ազատության լիակատար թագավորությունը:

Բոլշևիկները, Լենինի—Ստալինի պարտիան իր ամբողջ ստեղծագործ աշխատանքը կառուցում է ոչ միայն անցյալի գիտական իմացության, այլև ապագան կանխատեսելու և այդ ապագան նվաճելու ոգով: Բոլշևիկների պարտիան, ինչպես սովորեցնում է մեզ պարտիայի պատմությունը, լուծեց երեք կարևորագույն խնդիր. նա համոզեց Ռուսաստանի ժողովրդին ազատությունը նվաճելու մեջ. նա նվաճեց Ռուսաստանը կալվածատերերից, ցարերից, ներքին կապիտալիստներից ու արտաքին իմպերիալիստներից. նա կազմակերպեց սոցիալիստական հասարակություն: Այժմ բոլշևիկների պարտիան մոբիլիզացնում է ժողովրդի անսպառ եռանդը նոր և մեծագույն խնդիրների իրագործման՝ սոցիալիզմից կոմունիզմին անցնելու համար:

Ինքը սոցիալիստական հասարակությունը, ինչպես տեսանք, կառուցվում է ոչ թե տարերայնորեն, այլ գիտակցաբար, պլանաչափ կերպով: Բոլշևիկների պարտիան և Սովետական պետությունը գծադրելով տնտեսության զարգացման պլանները, հիանալի կանխատեսություններ են անում մեր ամբողջ ժողովրդի գործունեության հասարակական հետևանքների ուղղությամբ: Այս, իհարկե, չի նշանակում դարձյալ, թե սոցիալիզմի ժամանակ անհրաժեշտությունը վերանում է, և սոցիալիզմը գիտակցաբար կառուցող մարդկանց կամքը անկախ է դառնում օրինաչափություններից: Ոչ. այդ միայն նշանակում է, որ անհրաժեշտությունը մեր կողմից ճանաչված լինելով՝ անարգել կերպով օգտագործվում է կոլեկտիվ մարդկության շահերի համար: Անհրաժեշտությունը այստեղ էլ հիմքն է կազմում ազատության, բայց նրա ճանաչման և ռացիոնալ օգտագործման հնարավորություններն անսահման են և ոչնչով չեն կաշկանդվում:

Սակայն միլիոնավոր ժողովրդական մասսաների նորանոր ստեղծագործությունների պոտենցիալ հնարավորությունները այստեղ ևս լիովին դժվար է լինում հաշվի առնել: Ո՛չ մի հնգամյա պլան չի կարող հաշվի առնել այն բոլոր հնարավորությունները, որոնք թաքնված են մեր հասարակակարգի ընդերքում և որոնք բացահայտվում են միայն աշխատանքի ընթացքում ֆաբրիկաներում, գործարանում, կոլխոզում, սովխոզում, ռալոնում, պլանն իրագործելու ընթացքում և այլն» (տես «Պրավդա»-ի 1949 թ. օգոստոսի 1-ի առաջնորդողը): Բոլշևիկյան պարտիայի և Սովետական պետության պլաններն ու դիրեկտիվները, թխելով իրականության բոլոր հանգամանքների հաշվառումից և մարքս-լենինյան գաղափարներից, խթան են հանդիսանում մասսաների ստեղծագործական հզոր ուժի ծավալմանն ու զարգացմանը, մոբիլիզացնում դրանք, նպատակ և ուղի նշում դրանց համար: Պարտիայի ու կառավարու-

թյան դիրքակազմներն ու պլաններն իրենք կառուցված են օբեկտիվ անհրաժեշտության համապատասխան և ոչ թե նրան հակառակ: Գծագրելով սոցիալիստական շինարարության անցնելու ուղիները, Լենինը 1918 թ. դարձանը հարվածում էր ձախ ավանտյուրիստներին, որոնք երևակայում էին, թե կարելի է թույլել կյանքի չհասունացած ձևերի վրայից և կամայաբար կոմբինացիայի ենթարկել տնտեսական ձևերն ու դասակարգերը: Լենինը պահանջում էր խստագույն կերպով հաշվի նստել այն ժամանակվա մեր երկրի հինգ տնտեսական, մանրբուրժուական դասակարգերի և մանր տնտեսատերերի մեծամասնության առկայության հետ: Միայն այդ համապարհով կարելի էր ճիշտ եղանակներ նշել, որոնք պետք է սոցիալիզմի հնարավորությունը վերածեն իրականության: Լենինը նախազգուշացնում էր մեր պարտիային երկրի տնտեսության քաղաքականության և բուրժուական ու մանրբուրժուական խավերի առկայության հանգամանքն անտեսելուց: «Թե ես ասեմ, նոր Ռուսաստանը պետք է կառուցել ահա այսպես, ասենք, ճշմարտության, արդարության և այլ տեսակետից... այդ կլինի սուբեկտիվիզմ, որը ինձ կտանի պատրանքների աշխարհը: Իրականում դասակարգային պայքարը, և ոչ թե իմ լավագույն ցանկություններն են որոշելու նոր Ռուսաստանի կառուցումը: Նոր Ռուսաստանի կառուցման իմ իրենալները պատրանքային չեն լինի այն դեպքում միայն, երբ նրանք արտահայտում են իրապես գոյություն ունեցող դասակարգի շահերը, որի կյանքի պայմանները ստիպում են գործել որոշ ուղղություններ»:

Այսպիսով, սոցիալիզմի ժամանակ էլ ազատությունը հենվում է անհրաժեշտության վրա, հանդիսանալով նրա գիտակցական արտահայտությունը և ոչ թե խախտելով այն. սոցիալիզմի ժամանակ էլ ազատության աստիճանը որոշվում է արտադրողական ուժերի զարգացման մակարդակով: Սովետական ժողովուրդը ժամկետից շուտ կատարելով ստալինյան հնգամյակները, կուտակելով սոցիալիստական հարստությունը, ընդարձակելով սոցիալիստական սիստեմը, դրանով իսկ հող է ստեղծում ազատության լիակատար և բարձրագույն հաստատման վրա, որովհետև ըստ Մարքսի սահմանման՝ ազատությունը լիակատար կերպով կդրսևորվի այն ժամանակ, երբ բոլորովին չքանա կարիքը, ստեղծվի աշխատանքի բարձր արտադրողականություն. այս նախադրյալների հետևանքով կիրագործվի բանվորական ժամանակի անընդհատ կրճատում և սոցիալիստական մարդու քաղաքացիության ու հարմոնիկ զարգացում: Մարքսը գրել է. «Ազատության թափանցությունը իրականում ստեղծվում է միայն այնտեղ, երբ դադարում է արքայազնի նպատակահարմարությամբ և կարիքով թելադրվող աշխատանքը, հետևաբար իրերի դրության համաձայն՝ այն (ազատությունը) ընկած է բուն նյութական արտադրությունից այն կողմը... նրա զարգացումով ընդարձակվում է բնական անհրաժեշտության այդ թափանցությունը, որովհետև նրա պահանջմունքները ընդլայնվում են, բայց միևնույն ժամանակ ընդլայնվում են նաև արտադրողական ուժերը, որոնք ծառայում են այդ պահանջմունքների բավարարմանը: Այս բնագավառում ազատությունը հետևաբար միայն նրանում է կայանում, որ սոցիալիզացիայի ենթարկված մարդը, համախմբված արտադրողները կարգավորում են բնության հետ իրենց այդ նյութափոխանակությունը, այն ենթարկում են իրենց ընդհանուր հսկողությանը, և ոչ թե, ընդհակառակը, նա է որպես կույր ուժ իշխում նրանց վրա. կայանում է նրանում, որ նրանք կատարում են այդ

պրոցեսը ուժերի նվազագույն ծախսումով և նրանց մարդկային բնությանը առավել արժանի և ազնկվառ սլայմաններում: Սակայն այնուամենայնիվ այդ դարձյալ մնում է անհրաժեշտության թագավորություն: Դրանից այն կողմը սկսվում է մարդկային ուժի մի զարգացում, որը ինքնանպատակ է, սկսվում է աղատության իսկական թագավորությունը, որը սակայն կարող է ծաղկել միայն անհրաժեշտության այդ թագավորության, որպես իր հիմքի վրա» (4. Մարքս, «Կապիտալ», հատ. 3-րդ, մաս 2-րդ, էջ 357):

Իսկական աղատության հասնելու համար պահանջվում է բոլոր աշխատավորների մեծագույն կազմակերպվածություն և համարձակ, նպատակասլաց գործողություններ: Պրոլետարիատի մեծագույն զենքը, ինչպես ցույց է տալիս պատմության փորձը, նրա կազմակերպվածությունն է: Պրոլետարիատի կազմակերպության բարձրագույն ձևը կոմունիստական պարտիան է. նրանում, ինչպես ֆոկլորի մեջ, կենտրոնացված է բանվոր դասակարգի պայքարի փորձը, իմաստությունը, միտքը, խիղճը, կամքը, հերոսությունն ու ձեռնբերելությունը: Սովետական ժողովուրդը հանձինս Լենինի-Ստալինի պարտիայի տեսնում է իր կամքի, լուսավոր մտքի, կազմակերպական ստեղծագործության խտացումը: Այստեղից բխում է չափազանց կարևոր հետևություն. որքան խորն ենք մենք գիտակցում սովետական պետական, աշխատանքային, պարտիական դիսցիպլինան, այնքան ավելի հեշտ և արագ կհզորացնենք մենք մեր երկիրը և կիրադործենք մեր գիտակից տիրապետությունը բնության և հասարակական ուժերի նկատմամբ, այնքան ազատ կլինենք մենք:

Սովետական մարդկանց կամքի և գործողությունների միասնությունը, բարոյաքաղաքական միասնությունն ու կարգապահությունը — սովետական մարդկանց կամքի ուժի աղբյուրն է և ոչ թե թուլություն: Լենինն ու Ստալինը բացահայտել են այն մեծ իրողությունը, որ առանց կամքի, գիտակցության և գործողության միասնության անհնար է հաղթանակ տանել պրոլետարիատի թշնամիների նկատմամբ: Դեռ պարտիայի 2-րդ համագումարում մերկացնելով մենշևիկների օպորտունիզմը, Լենինը ցույց տվեց, որ իդեական ու ծրագրային միասնությունը քավական չէ. անհրաժեշտ է նաև կամքի միասնություն և գործողության միասնություն: Իր «Սովետական իշխանության հերթական խնդիրները» մեր արդեն հիշատակած աշխատության մեջ Լենինը բազմակողմանի հիմնավորում է այն միտքը, թե ինչումն է կայանում ռևոլյուցիոն մարդկանց կամքի միասնությունը: Լենինը պատասխանում է դրան՝ բոլշևիկյան կարգապահության մեջ, պարտիական որոշումները անշեղորեն և նվիրվածորեն իրագործելու մեջ: Սովետական շինարարության հիմնական ղեկավար ուժը պարտիան է. նա է միավորում, կազմակերպում և մեկ հիմնական նպատակի ուղղում մեր մեծածավալ Հայրենիքի բազմամիլիոն ժողովուրդի հզոր եռանդը:

Լենինի-Ստալինի պարտիայի քաղաքականությունը հիմնված լինելով պատմության պրոցեսի երկաթյա տրամաբանության վրա՝ հանդիսանում է սովետական հասարակության կենսական հիմքը, որոշում է մեր զարգացման ուղիները, այդ քաղաքականությունը վերափոխում է ոչ միայն մեր լայնածավալ սոցիալիստական Հայրենիքի անծայրածիր բնությունը և մեր կյանքի հիմքերը. այն. դրա հետ միասին ստեղծեց նոր մարդուն, սովետական մարդուն, կոմունիզմը կառուցող ակտիվ, ձեռնբերեց, համարձակ, բարձրակերտ

մարդուն իր բոցաշունչ հայրենասիրությամբ, բարձր գաղափարական և բարոյական կերպարանքով, ամենահաղթ կամքով: Մշակվել են սովետական մարդու հոգևոր կերպարի այնպիսի գծեր, ինչպիսիք են՝ իր նպատակների ու իր գործի վեհության պարզ գիտակցումը, իր համոզմունքների ու խարակտերի հաստատունությունը և ամրությունը, նպատակների իրագործման և խոչընդոտների հաղթահարման տոկունությունը: Այս ոգով է հենց բոլշևիկների պարտիան դաստիարակում սովետական ժողովրդին: Կոմունիզմի իրագործումը պահանջում է միլիոնավոր մասսաների ինքնուրույն ձեռնբեցություն, մեծ եռանդ, խոչընդոտները հաղթահարելու ընդունակություն: Այս վերջին հանգամանքը սովետական մարդու չափազանց բնորոշ գծերից մեկն է: Դեռ 1918 թվին վերահիշյալ աշխատության մեջ Լենինը ընդգծում էր, որ սովետական ժողովուրդը սոցիալիստական շինարարության է դիմում անկախ իր կամքից դասավորված պայմաններում, պահանջում էր ամենայն օրեկտիվությամբ հաշվի առնել այդ պայմանները: Լենինի և Ստալինի գործերում հանգամանորեն անալիզի են ենթարկված այն ժամանակվա Ռուսաստանի տնտեսական ձևերը, դասակարգերի հարաբերակցությունը: Բայց, —ասում է Լենինը,— քանի որ մենք գիտենք սոցիալիզմի պատմական անհրաժեշտությունը, օրեկտիվ անհրաժեշտության բնույթը՝ ապա հանդես բերելով տոկուն կամք, մենք կարող ենք հաղթահարել ահռելի դժվարություններ: «Բայց, — գրում է Լենինը, — անհնար այստեղ ոչինչ չկա. և եթե ունենանք վերափոխման անհրաժեշտության պարզ գիտակցություն, այն իրագործելու համար վճռականություն, վեհ է դժվարին նպատակն իրագործելու տոկունություն, մենք այն կիրադործենք» (Վ. Ի. Լենին, հատոր 22, էջ 457): Մեր պարտիայի ու ժողովրդի մեծագույն ուժն ընդգծում է ընկեր Ստալինը. «Աշխարհում չկան այնպիսի ամբոցներ, որ չկարողանան վերցնիլ աշխատավորները, բոլշևիկները» (հատ 11, էջ 66):

Եվ իրոք, սովետական ժողովրդի հերոսական պատմությունը գիտի այդ ժողովրդի կամքի տոկունության և խոչընդոտները հաղթահարելու ապեցուցիչ օրինակներ: Սովետական ժողովրդի կամքը հաղթահարեց 14 իմպերիալիստական պետությունների համատեղ գրոհը երիտասարդ Սովետական Ռուս պոպրիկայի վրա 1917—1920 թ. թ.: Այդ ժողովրդի կամքը մեր երկրի ինդուստրացման համաշխարհային պատմական խնդիրն իրագործեց շտեմարկված դժվարին պայմաններում, հաղթահարելով ոչ միայն տնտեսական, այլև սոցիալ-քաղաքական կարգի դժվարությունները. հաղթահարեց իմպերիալիստների ու նրանց բազմաթիվ գործակալների կատաղի դիմադրությունը: Սովետական ժողովրդի կամքը հաղթահարեց երկրի կոլեկտիվացման խնդրի լուծման դժվարագույն փուլնդոտները: Ամբողջ աշխարհը հիացմունքով տեսավ, թե ինչ աշխատանքային ու ռազմական հրաշքների է ընդունակ սովետական ժողովուրդը: Հայրենական պատերազմի ժամանակ սովետական մարդու կամքը ավելի ուժեղ դուրս եկավ, քան ֆաշիստական բանակների ուժը, ավելի դիմացկուն, քան ֆաշիստական տանկը: Եվ այժմ, հետպատերազմյան շրջանում հաղթահարելով միջազգային իմպերիալիզմի կատաղի դիմադրությունն ու մեր չրկրի նեղում զանազան խոչընդոտներ, սովետական ժողովուրդները առաջընթանում են դեպի կոմունիզմը, վիթխարի աշխատանք են ծավալում, ստեղծագործական եռանդ՝ հետպատերազմյան ստալինյան հնգամյակը գերակատարելու համար: Առաջ մղվելով սոցիալիստական մեծ հայրենասիրու-

թյամբ՝ սովետական բազմազգ ժողովուրդը վիթխարի ձեռներեցություն հրապարակ բերելով, հաստատուն քայլերով կառուցում է կոմունիզմը: «Հիմարություն կլինեն կարծել, — ասում է ընկեր Ստալինը, — թե արտադրական պլանը թվերի և առաջադրանքների թվարկումն է: Իրականում արտադրական պլանը միլիոնավոր մարդկանց կենդանի և պրակտիկ գործունեությունն է: Մեր արտադրական պլանի ռեալ լինելը — նոր կյանք ստեղծող միլիոնավոր աշխատավորներն են: Մեր ծրագրի ռեալ լինելը — դա կենդանի մարդիկ են, դա մենք ենք Ձեզ հետ, մեր աշխատանքի կամքն է, նոր ձևով աշխատելու մեր պատրաստակամությունը, պլանը կատարելու մեր վճռականությունը: Ունե՞նք մենք արդյոք այդ վճռականությունը: Այո, ունենք: Նշանակում է մեր արտադրական ծրագիրը պետք է և կարող է իրագործվել» (Ի. Վ. Ստալին, «Նոր իրադրություն — տնտեսական շինարարության նոր խնդիրներ», էջ 34):

Սովետական մարդու կամքի և գործողությունների մեջ ներդաշնակորեն համակցվում են բարձր իդեականությունը, բուլշևիկյան էնտուզիազմը, կազմակերպվածությունը, միասնությունը: Այդ գծերն են, որոնց շնորհիվ սովետական ժողովուրդը հերոսաբար ժամկետից շուտ կենսագործում է ստալինյան հնգամյակները: «Պրավդան» իր 1949 թ. օգոստոսի 4-ի «Կոմունիզմ կառուցողների ստեղծագործական նախաձեռնությունը» առաջնորդողում հիշատակելով 1-ին, 2-րդ, 3-րդ հնգամյակների արագ իրագործման փաստերը, գրում է. «Սոցիալիստական տնտեսությունը պլանային տնտեսություն է: Սովետական պետության պլանները սերտորեն և անխզելիորեն կապված են միլիոնավոր աշխատավորների կյանքի, պրակտիկ գործունեության հետ: Հենց դրա համար էլ դրանք ռեալ են, հենց դրա համար էլ դրանք կատարվում են ժամկետից շուտ և գերազանցումով: Այս հնարավոր է դարձել այն պատճառով, որ սոցիալիստական աշխատանքը մեզ մոտ դարձել է հերոսության ու փառքի գործ է հանդիսանում է կոմունիզմ կառուցող մարդկանց պատմական ստեղծագործությունը: «Պրավդան» նշում է, որ մեր առաջընթացի մեջ վճռական դեր է խաղում բուլշևիկների կողմից կազմակերպվող և կոմունիզմի իրագործմանը ուղղվող այն նախաձեռնությունը, ստեղծագործական ձեռներեցությունը, հաստատակամությունը, որ հանդես են բերում դասակարգային ու ազգային, տնտեսական ու քաղաքական ճնշումից, իմպերիալիզմի լծից ազատագրված մեր ժողովուրդը: «Սոցիալիստական հասարակարգի պայմաններում, — գրում է «Պրավդան» իր մի այլ առաջնորդողում (տես 1949 թ. օգոստոսի 10-ի առաջնորդողը), — այսպես կոչված «օբեկտիվ» գործոնների դերը հասցված է նվազագույնի, իսկ մեր կազմակերպությունների և նրանց ղեկավարների դերը դարձել է վճռողական, բացառիկ»:

Լիովին հաստատված է այն թեզը, որ ի հակադրություն պատմական նախորդ շրջանների, սոցիալիստական հասարակությունը նշանակում է մարդկային բուն պատմությունը: Այստեղ մարդիկ կենինի-Ստալինի պարտիայի, հանձարեղ առաջնորդ և ուսուցիչ ընկեր Ստալինի գլխավորությամբ գիտակից ու նպատակալաց կառուցում են կոմունիզմը, ծավալելով իրենց մարդկային բոլոր ընդունակությունները: Եվ դա հնարավոր եղավ այն պատճառով, որ կապիտալիստական հասարակության աղտեղությունների ոչնչացման հետ միասին կերտվեց նոր տիպի մարդ, իր բոլոր գծերով շատ ավելի բարձր, քան նախորդ հասարակությունների մարդիկ են: Այստեղ չի իշխում կույր անհրաժեշտությունը: Այստեղ սովետական մարդը

վիթխարի կամքի ուժ է հանդես բերում այն խնդիրները իրագործելու մեջ, որ պարզ ու հստակ նշված են բոլշևիկյան պարտիայի թեորիայում ու ծրագրում: Ե... Միայն նպատակի պարզությունը, նպատակին հասնելու գործում տոկունությունը և բոլոր ու ամեն տեսակի խոչընդոտները հաղթահարող բնավորության հաստատակամությունը, միայն դրանք կարող էին ապահովել այդպիսի մի փառասպանո՞ հաղթանակ: Կոմունիստների պարտիան կարող է շնորհավորել իրեն, քանի որ հենց այդ հասակություններն են, որ դաստիարակում է նա մեր անծայրածիր Հայրենիքի բոլոր ազգությունների աշխատավորների մեջ: Այսպես է ասում ընկեր Ստալինը թուրքմենական հեծյալներին ուղղած իր ողջույնում (տես «Պրավդա» 25/8—35 թ.):

Ընկեր Ստալինը, որ իր մեջ միացնում է պրոլետարիատի ու սովետական ժողովրդի մեծագույն կամքի ու հերոսության տիպարը, մեր ժողովուրդներին դաստիարակում է խոչընդոտները հաղթահարելու ոգով: Միայն այն կադրերն են լավ, — ասում է ընկեր Ստալինը Կարմիր Բանակի ակադեմիկների ընդունելության ժամանակ, — որոնք չեն վախենում դժվարություններից, այլ հաղթահարելով դրանք, հասնում են նպատակին: Ընկեր Ստալինը սովորեցնում է մեզ հեռու լինել խուճապից, ինչպես հեռու էր Լենինը, չշփոթվել, երբ հորիզոնում ամպեր են կուտակվում: Նա հիշեցնում է մի օրինակ և սովորեցնում մեզ նման լինել ոչ թե այն ձկնորսներին, որոնք փոթորկի ժամանակ վհատվում, քարոյալքում են իրենց շարքերը և հանձնվում տարերքի քմահաճույքին, այլ այն ձկնորսներին, որոնք ասեղ ժամին մոթելիզացնում են իրենց ուժերը և համարձակորեն առաջ տանում նավը:

Առանց լենինյան-ստալինյան այս գծերի մեր ժողովուրդը չէր ունենա այն համաշխարհային-պատմական հաղթանակները, որով նա ստացավ ստեղծագործող ժողովուրդ, հաղթող ժողովուրդ, հերոս ժողովուրդ արժանի փառքը: Իր մեծագույն հաղթանակներով մեր ժողովուրդը պարտական է Լենինի-Ստալինի հերոսական պարտիային: Ընկեր Ստալինը սովորեցնում է մեր ժողովրդին պարզ տեսնել հեռանկարը և հաշվի առնելով հանգամանքները, հետևողականորեն հասնել նպատակին: Հայրենական մեծ պատերազմի ժամանակ ընկեր Ստալինը գլխավորելով մեր երկրի տնտեսական, քաղաքական, ռազմական առաջընթացը, խորը թափանցելով պրոցեսների մեջ, բացահայտելով մեր պատերազմի ազատագրական, արդարացի բնույթը, անօրինակ բարձրության հասցրեց սովետական ռազմագիտությունը, ստրատեգիան ու տակտիկան: Կանխատեսելով դեպքերի անհրաժեշտ ընթացքը, ընկեր Ստալինը իր պողպատե կամքին ենթարկեց Հայրենական պատերազմի մարտերը, որոնք ավարտվեցին սովետական ժողովրդի լիակատար հաղթանակով: Մարքսիզմ-լենինիզմի մեջ ամփոփված են համաշխարհային և ռուսական կուլտուրայի վիթխարի նվաճումները: Գծադրելով մեր առաջընթացը, ընկեր Ստալինը հաշվի է առնում պատմության սոցիալ-տնտեսական ու քաղաքական օրինաչափությունները, դրա հետ միասին ռուս ժողովրդի և սովետական ժողովուրդների կամքի ուժը, ձեռներեցությունը, եռանդը և ուղղում է դեպի այն նպատակը, որը երկաթյա անհրաժեշտություններ բխում է պատմական պրոցեսից: Սովետական ժողովուրդը կառուցելով կոմունիզմ, չի սպասում բնության ողորմածությանը, այլ ակտիվ կերպով ննթարկում է բնություն իրեն: Անտառապատման ստալինյան գրանդիոզ պլանը դրա հոյակապ արտահայտությունն է:

Այսպիսով սովետական ժողովուրդը իր ամենօրյա հերոսական ջանքերով նվաճում է ազատությունը և շարունակ լայնացնում ու ընդարձակում այն: «Մեր ժողովուրդը հնարավորություն է ստացել նպատակասլաց ձևով ներգործելու կյանքի բոլոր կողմերի վրա: Սովետական մարդը դարձել է իր բախտի տերը, նա իր ձեռքում է պահում ապագայի բանալին» («Պրավդայի» 1949 թ. օգոստոսի 10-ի առաջնորդողը): Ավելին. սովետական ժողովրդի ստեղծարար աշխատանքը որոշում է համաշխարհային պատմության ճակատագիրը:

The first of these is the fact that the county of Kent was one of the most important in the kingdom of England in the early days of the Saxon era. It was the seat of the kingdom of Kent, and the capital of the kingdom was Canterbury. The county was also one of the most fertile in the kingdom, and it was the source of many of the most important products of the kingdom, such as wool, corn, and wine.

The second of these is the fact that the county of Kent was one of the most important in the kingdom of England in the early days of the Saxon era. It was the seat of the kingdom of Kent, and the capital of the kingdom was Canterbury.

The third of these is the fact that the county of Kent was one of the most important in the kingdom of England in the early days of the Saxon era. It was the seat of the kingdom of Kent, and the capital of the kingdom was Canterbury.

The fourth of these is the fact that the county of Kent was one of the most important in the kingdom of England in the early days of the Saxon era. It was the seat of the kingdom of Kent, and the capital of the kingdom was Canterbury.

The fifth of these is the fact that the county of Kent was one of the most important in the kingdom of England in the early days of the Saxon era. It was the seat of the kingdom of Kent, and the capital of the kingdom was Canterbury.

The sixth of these is the fact that the county of Kent was one of the most important in the kingdom of England in the early days of the Saxon era. It was the seat of the kingdom of Kent, and the capital of the kingdom was Canterbury.

The seventh of these is the fact that the county of Kent was one of the most important in the kingdom of England in the early days of the Saxon era. It was the seat of the kingdom of Kent, and the capital of the kingdom was Canterbury.

The eighth of these is the fact that the county of Kent was one of the most important in the kingdom of England in the early days of the Saxon era. It was the seat of the kingdom of Kent, and the capital of the kingdom was Canterbury.

The ninth of these is the fact that the county of Kent was one of the most important in the kingdom of England in the early days of the Saxon era. It was the seat of the kingdom of Kent, and the capital of the kingdom was Canterbury.

The tenth of these is the fact that the county of Kent was one of the most important in the kingdom of England in the early days of the Saxon era. It was the seat of the kingdom of Kent, and the capital of the kingdom was Canterbury.

The eleventh of these is the fact that the county of Kent was one of the most important in the kingdom of England in the early days of the Saxon era. It was the seat of the kingdom of Kent, and the capital of the kingdom was Canterbury.

The twelfth of these is the fact that the county of Kent was one of the most important in the kingdom of England in the early days of the Saxon era. It was the seat of the kingdom of Kent, and the capital of the kingdom was Canterbury.

The thirteenth of these is the fact that the county of Kent was one of the most important in the kingdom of England in the early days of the Saxon era. It was the seat of the kingdom of Kent, and the capital of the kingdom was Canterbury.

The fourteenth of these is the fact that the county of Kent was one of the most important in the kingdom of England in the early days of the Saxon era. It was the seat of the kingdom of Kent, and the capital of the kingdom was Canterbury.